

Տեղ գյուղի
մերձակայքի Սոփի
եղցին, որտեղ
ենթադրաբար
Մովսես Խորենացու
գերեզմանն է

ԵԶ 13



Ոչ թե
Ուղտասար, այլ
Ուխտասար,
քանզի դարեր
շարունակ սրբավայր
է եղել

ԵԶ 20




Սյունյաց երկիր մշակութային

ԵՐԵՎԱՆԻ,
30 ՄԱՐՏԻ 2021Թ.
№ 1

www.syuniacyerkir.am

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ
ԵՌԱՄՍՅԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ


3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am




Բղենո Նորավանք

...Հայերից Նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք Սուրբ Ավետարանին
հնազանդվեցին Բարդուղիմեոս սուրբ առաքյալի միջոցով:
Ստեփանոս Օրբելյան, «Սյունիքի պատմություն»

Սյունիքի սրբավայրերը, որոնք այլևս գերության մեջ են կամ դարձել են սահմանամերձ



«Սյունյաց երկիր. մշակութային». այսպիսի անվանումով նոր պարբերական է լույս աշխարհ գալիս Լեռնահայաստանում



ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Նոր լրագիրը կիրատարակվի եռամսյա պարբերականությամբ՝ յուրաքանչյուր համարը՝ ինը տպագրական մամուլ ծավալով:

Պարբերականը ծնվում է «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմի եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության համագործակցությամբ: 2021 թ. համար նախատեսված չորս համարը, առնվազն, կիրատարակվի հենց այդ համագործակցության շնորհիվ:

Նոր պարբերականի թողարկումը չի անդադրում «Սյունյաց երկիր» լրագրի դեռեւս 2003 թվականին որդեգրած գծին: Եվ ոչ էլ կհամարվի այդ պարբերականի հավելված: Ոչ էլ պատճառ կդառնա, որ «Սյունյաց երկիրը» հրաժարվի հասարակական-քաղաքական-մշակութային ավանդական ուղղվածությունից, առավել եւս թեմատիկ թողարկումներից:

Նոր պարբերականը մշակութային Սյունիքը ներկայացնելու հատուկ առաքելություն ունի: Եվ ազգային ու սյունիքնապաստ այդ գործը գլուխ կբերի հիմնականում «Սյունյաց երկիր» խմբագրակազմը, որն առավել հանգամանալից է տիրապետում երկրամասի հոգեւոր-մշակութային ժառանգությանը, առկա հիմնախնդիրներին: Այդ ամենը, անշուշտ, ոլորտի մասնագետների, գիտական եւ մշակութային հանրության ներկայացուցիչների հետ:

Ինչո՞ւ է պայմանավորված «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականի ծնունդը կամ ի՞նչ հանգամանքների թելադրանքով ծնվեց նոր պարբերականը:

Սյունիքում դարեր շարունակ, մեր պատմության ամենադժվարին ժամանակներում անգամ, ամուր վեմի վրա է եղել հոգեւոր-մշակութային ընթացքը, միշտ էլ հարգի են եղել դպրոցը, մշակույթը, ճարտարապետությունը...

Քրիստոնյա Հայաստանում Սյունիքն առանձնահատուկ տեղ է ունեցել եւ ունի:

Հարկ ենք համարում մեկ անգամ եւս արձանագրել, որ քրիստոնեությունը Հայաստան է մուտք գործել առաքյալների ժամանակներում կապված Թադեոս եւ հատկապես Բարդուղիմեոս առաքյալների հետ, ովքեր սուրբ ավետարանի ճշմարիտ ուսմունքի քարոզումը սկսեցին Սյունիքից:

Ապա՝ Սյունյաց մեծ իշխանը Թորգոմաս ընտիր իշխանների, կուսակալների, կողմակալների մեջ էր, որոնց հավաքեց աստվածապսակ Տրդատ թագավորը եւ ուղարկեց Կեսարիա քաղաք, որպեսզի տանեն Գրիգորին ու Հայոց երկրի քահանայապետ ձեռնադրեն:

Վերադառնալիս Սյունյաց մեծ իշխանն առաջիններից էր, ով իր գնդով Եփրատում լուսավոր մկրտություն ստացավ:

Մատենագրական վկայությունները եւ Ազգաբնագրոսի տվյալները հաստատում են, որ Լուսավորչի կողմից է հիմնվել Սյունյաց եպիսկոպոսությունը, որի անդրանիկ առաջնորդը երանելի Գրիգորիսն էր՝ ձեռնադրված


Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից:

Սյունյաց Անդոկ իշխանն էլ (հայոց ուրիշ իշխանների գլուխ անցած) Ներսես Մեծին ուղեկցեց Կեսարիա՝ ձեռնադրելու Ամենայն Հայոց կաթողիկոս: Ապա մեծ ժողովով Սյունիքի եպիսկոպոսությունը հռչակվեց Սյունյաց մետրոպոլիտություն, Սյունիքը՝ պատրիարքի նախաաթոռ, որ հունարեն լեզվով կոչվում է պրոտոֆրոնտես Մեծ Հայքի:

Իսկ Սուրբ Սահակի եւ Մետրոպի կողմից՝ գրքերի մեկնության ու թարգմանության իրավունքը միայն Սյունիքի մետրոպոլիտությանը շնորհվեց:

Հետագա դարերում էլ Սյունիքն անգերազանցելի դեր խաղաց ունիթորության, քաղկեդոնության դեմ պայքարում: Չլինե՞ր Սուրբ Հովհան Որոտնեցու եւ Սուրբ Գրիգոր Տաթևացու գործունեությունը, միգուցե եւ Հայ առաքելական եկեղեցին անդառնալի կորուստներ ունենար պապության նվաճողական ծագումների ժամանակներում:

Նույն չափ բացառիկ էր Սյունյաց աթոռի դերակատարությունը դեգերումների մեջ հայտնված Հայոց եկեղեցական աթոռն էլ միաձուլում վերահաստատելու գործում: Սյունյաց եպիսկոպոսությունն էր, տիեզերահռչակ Գրիգոր Տաթևացու գլխավորությամբ, որ պայքարում էր Վաղարշապատում վերականգնված տեսնել կաթողիկոսի գահը,



ինչն էլ իրականացվեց եռամեծար փոխտփայի եւ աստվածաբանի աշակերտների կողմից՝ 1441-ին, որով եւ ավարտվեց Հայոց կաթողիկոսական աթոռի հազարամյա աստանդական ու դեգերումներով լեցուն շրջանը:

Ոչ պակաս հիշարժան է Սյունիքի դերը 17-րդ դարակազմին, երբ Մայր աթոռը կանգնած էր լինել-չլինելու սպառնալիքի առջեւ: Եվ միայն Մովսես Տաթևացի (Խոտանանցի) բարեփոխիչ կաթողիկոսի ջանքերով չեզոքացվեց Հայ Առաքելական եկեղեցու պառակտման վտանգը:

Զմոռանալը աստվածության գանձարան, Սիսական տան բոլոր վանքերի գլուխ եւ շնորհաբաշխության աղբյուր Տաթևի, ինչպես եւ Սյունյաց 49 վանքի մասին, որոնք դարեր շարունակ արթուն են

“

Ոչ պակաս հիշարժան է Սյունիքի դերը 17-րդ դարակազմին, երբ Մայր աթոռը կանգնած էր լինել-չլինելու սպառնալիքի առջեւ: Եվ միայն Մովսես Տաթևացի (Խոտանանցի) բարեփոխիչ կաթողիկոսի ջանքերով չեզոքացվեց Հայ Առաքելական եկեղեցու պառակտման վտանգը:

պահել Քրիստոսի ուսմունքը, որոնցից հավատ եւ հույս է հորդում միևնույն այսօր:

Եվ եթե Սյունիքը դիմացել է դարերի փորձություններին, ապա շնորհիվ նաեւ իր հոգեւոր-մշակութային էության:

Սյունիքը միշտ էլ առաջնագծում է եղել, երբ հարկ է եղել պայքարել մեր ազգային-հոգեւոր արժեքների անաղարտության համար:

Ու դարերի ընթացքում բազմիցս արձանագրված մեր գեղեցիկ հաղթանակը, առանց չափազանցության, պայմանավորված է եղել նախեւառաջ գրի հաղթանակով, լույսի հաղթանակով:

Սակայն վերջին տարիներին եւ հատկապես 2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայից հետո առաջ եկած համատարած շփոթում կորցրինք եւ շարունակում ենք կորցնել մեր ազգային գոյատևման բարոյական, հոգեւոր, արժեքային կարեւոր կոմանները:

Վատթարացած մեր օրերում տեսնում ենք, որ բազմաթիվ քրիստոնեական սրբավայրեր մնացել են թշնամական պետության տիրապետության ներքո, տեսնում ենք, որ դրանք պղծվում են այլադավանների կողմից: Տեսնում ենք նաեւ, որ քրիստոնեական բազում սրբավայրեր, պատմամշակութային վայրեր, նաեւ դիտարժան տեղեր ու փոստակայանների ու զբոսաշրջիկների

համար վտանգավոր են դարձել՝ գտնվելով անմիջապես սահմանին կամ սահմանամերձում:

Մի խոսքով՝ վտանգված է Սյունիքի պատմական ժառանգությունը՝ մեր նախնիների կողմից հազարամյակների ընթացքում ստեղծված: Եվ այդ վտանգն առավել սպառնալից է դառնում, երբ փորձ է արվում հատկապես աճող սերնդին զրկել պատմական հիշողությունից:

Հենց այդ հարցերն ու սպառնալիքներն են, որ մեզ պարտավորեցրել են՝ հիմնելու մշակութային պարբերական՝ դրանով իսկ արթուն պահելու մեր պատմական հիշողությունը՝ նաեւ առկա խնդիրները պահելով պատմական մարմինների ուշադրության կենտրոնում:

Եվ նպատակահարմար գտանք այդ կերպ առանձնահատուկ կամ տարբերակված մոտեցում ցուցաբերել փառահեղ պատմական ճանապարհ անցած Սյունիքի հոգեւոր-մշակութային հարցերին՝ հիմնելով եռամսյա պարբերական՝ ըստ մեր կարողության, յուրաքանչյուր համարում շարադրելով մատնացույց անել իրերի դրությունը, պատմական ժառանգության պահպանման հարցում ծագած հիմնախնդիրները, որ առաջ են եկել ռազմաքաղաքական նոր իրավիճակում, ձգտելով թույլ չտալ, որ վերացվեն, մերժվեն կամ պղծվեն Սյունիքի հոգեւոր-մշակութային ժառանգության վկայությունները, մեր նախնիների գրավոր ու նյութական հիշատակները:

Այնպես որ՝ մենք կանգնած ենք հայոց պատմական ժառանգությանը տեղ լինելու նոր մարտահրավերների դեմ հանդիման, մենք կրկին կանգնած ենք մեր հոգեւոր-մշակութային-ազգային արմատներին դառնալու հրամայականի առջեւ...

Հիմնադրվող պարբերականը համեստ ներդրում կլինի այդ ճանապարհին:

Արարվող մատյանը, համոզված ենք, անընդմեջ հուշարժան ու գովելի հիշատակ կլինի գալիք ժամանակների համար:

Իհարկե, մենք չենք մոռացել աստվածաշնչյան ամփոփումներից այս մեկը՝ Նույնիպես. «Այն, ինչ եղել է, նույնն էլ պիտի լինի, եւ այն ինչ կատարվել է, նույնն էլ պիտի կատարվի: Եվ ոչ մի նոր բան չկա արեգակի ներքո...» (ժողովող 1:9,10): Բայց եւ նոր բան չասելով ու չանելով՝ մենք պետք է լինենք առաջին շարքում այն ուժերի, մտավորականների, հասարակական-քաղաքական կառույցների, որոնց նպատակն է տեղ կանգնել Սյունյաց աշխարհի պատմական ժառանգությանը:

Սրտանց շնորհավորում ենք եռամսյա պարբերականի ստեղծագործական անձնակազմին, ընթերցողին՝ լույս աշխարհ եկող պարբերականի առիթով: Բարի եղբ մեր նոր լրագրին...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Բոլոր գոյացությունների սկիզբն աստված է, բոլոր բարիքների սկիզբը՝ սերը, բոլոր շնորհների սկիզբը՝ խոհականությունը

Հատված Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն»-ից


Մեր Սիսական տան քաղցրալուր պատմությունների շարադրանքը՝ նախնիների հիշատակարանը, հրաշակերտ հորինվածքով հարմարեցված նվաստ ու ապիկար հոգի Ստեփանոսի՝ մեծափառ իշխանաց իշխան Տարսայիճի որդու, Սյունյաց եպիսկոպոսի եւ նախաթոռ մետրոպոլիտի կողմից: Սա հենց այն է, որ «Հիշատակաց մատյան» է կոչվում:

Բոլոր գոյացությունների սկիզբն աստված է, բոլոր բարիքների սկիզբը՝ սերը, բոլոր շնորհների սկիզբը՝ խոհականությունը: Աստված է բոլոր գոյացությունների սկիզբը: Սերն է բարիքների սկիզբը, որովհետեւ նրա-նից են ծնվում տարբեր տեսակի բոլոր բարությունները՝ աստծու, հրեշտակների եւ մարդկանց մեջ:

Աստծո մեջ, որովհետեւ նա սիրուց մղվելով գոյացրեց այս բոլոր գոյացությունները, նույնպես եւ սիրուց դրոված, իր պատկերի համար Որդուն չխնայեց Հայրն, Որդին չխնայեց իր անձը, Հոգին չխնայեց բաշխվել մարդկանց:

Հրեշտակների մեջ, որովհետեւ խոնարհ կամքով, անխզելի սիրով միշտ հարած են աստծուն եւ շարունակ հոգ են տանում մարդկանց համար՝ համագոյակից ու ծառայակից լինելով մեզ:

Մարդկանց մեջ, որովհետեւ (սրանք) հոգեկան սիրուց առաջ են բերում հոգեկան ու մարմնական բոլոր բարիքները. հոգեկանը այնքան է, որ արքայության համար մարդիկ իրենց մահվան են մատնում եւ զա-



նազան տանջանքների ու ճգնությունների ենթարկվում երկար ժամանակով. իսկ մարմնականը, այսինքն՝ աշխարհիկը, այնքան է, որ խելացնորվում էլ են եւ անկարելի բաների ձեռք զարկում:

Խոհականությունն է շնորհների սկիզբը, որովհետեւ մարդկանց մեջ եղող բոլոր շնորհները՝ հոգեկան եւ մարմնական, լինեն խոսքով թե գործով, նախապես մտածվում են խոհականությամբ: Բազում մտածումներից են լավի ու վատթարի, օգտակարի եւ անօգուտի գանազանումից հետո են



առաջանում միտքն ու բանական խոսքը եւ կամ կատարյալ արվեստը՝ ընտիր ծնող խոհականության գեղեցիկ ծնունդները:

Եվ այսպիսով աստված ստեղծել է մարդուն՝ ամեն ինչով նման իրեն, ու նրա մեջ դրել այս երեք բաները՝ արարչությունը, սերը եւ խոհականությունը, այսինքն՝ բանականությունը, որոնցով մարդը կարողանում է ըստ ամենայնի նմանվել աստծուն: Դրել է արարչությունը, որով մարդը արարչակից է լինում ստեղծողին. սերը, որով միշտ տենչում է ցանկալիին եւ շարունակ ձգտում է հասնել ու վայելել այն. խոհականությունը, որով տարբերվում է անբանականներից եւ կարողանում է խորհել ու գանազանել պիտանին ու անպետքը, վնասակարն ու օգտակարը, ուսմամբ եւ ջանասիրությամբ հասնել կատարյալ հասունության: Ահա թե ինչպես է արարչակից լինում. ուսուցիչները ուսմամբ տհասներին կատարյալ այդ են դարձնում, քահանաները՝ ախտաճիւնների՝ անախտ, մարդկանց՝ աստված: Ահա սրանցով մարդիկ նմանվում են աստծուն եւ արարչակից կոչվում:

Եվ այս պատճառով մարդը չի կարողա-նում իր մարմնի տարրողության մեջ այս երեք շնորհները թաքցնել ու անգործածական պահել, այլ միշտ եռում-փոթորկվում է ուստոստելով եւ ջանում է այդ ամենը գործածության մեջ դնել, որովհետեւ անընդհատ դեպի վեր է պահում ձգտումը եւ սաստիկ փափագը՝ իր նմանների հանդեպ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Լինենք պատվի զգացում ունեցող տերը մեր պատմական ժառանգության

Ահա եւ ընթերցողի սեղանին է «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականի 1-ին համարը:

Արդեն առիթ ենք ունեցել ասելու՝ պարբերականի յուրաքանչյուր համար նվիրված կլինի Սյունիքի հոգեւոր-մշակութային կյանքի մեկ կոնկրետ հիմնախնդրի:

Ընթերցողին առաջարկվող 1-ին համարը հենց այդ սկզբունքով էլ կառուցված է. այն նվիրված է Սյունյաց աշխարհի քրիստոնեական սրբավայրերին, որոնք 2020 թ. նոյեմբերի 9-ի ամոթալի կապիտուլյացիայից հետո մնացել են Ադրբեջանի տիրապետության ներքո, որոնց պղծելու հավանականությունը մեծ է՝ նկատի ունենալով ոչ միայն պատմության դառը փորձը, այլեւ Արցախի օկուպացված տարածքներում այլադավանների արարք-ներն ընդդեմ Հայոց պատմական ժառանգության:

2020 թ. նոյեմբերի 9-ից հետո ավելի անթաքույց եւ ակտիվ են դարձել թուրք-ազերիների տարածքային հավակնությունները Սյունիքի հանդեպ...

Համարը նաեւ այն սրբավայրերին է նվիրված, որոնք Սյունիք-Ադրբեջան ապօրինի սահմանորոշման հետեւանքով հայտնվել են սահմանամերձում, եւ այնտեղ այցելելու համար ուխտագնացներն անվտանգության երաշխիքների կարիք ունեն:

2020 թ. նոյեմբերի 9-ից հետո ավելի անթաքույց եւ ակտիվ են դարձել թուրք-ազերիների տարածքային հավակնությունները Սյունիքի հանդեպ, ինչն ուղղորդվում է պատմության աղավաղմամբ ու նենգափոխմամբ, պատմական փաստերի խեղաթյուրմամբ:

Այդ խնդիրները նույնպես պարբերականի 1-ին համարի պարունակության մաս են կազմում:

Անդրադարձ է կատարվում սյունեցիների ջանքերին, որ նոյեմբերի 9-ից հետո գործադրվել են Արցախի օկուպացված տարածքներում մնացած քրիստոնեական եկեղեցիների, վանքերի խաչքարերը եւ մյուս սրբազան մատուցները, հնարավորինս փրկելու համար:

Ներկայացնելով այդ սրբավայրերը (նախկինում կատարված մեր այցելություններից ստացած տպավորությունների հիման վրա)՝ փորձում ենք արթուն պահել մեր երիտասարդների եւ ընդհանրապես աճող սերնդի պատմական հիշողությունը, պատմական ժառանգությանը տեր կանգնելու զգացումն ու պատասխանատվությունը:

Նպատակը հստակ է եւ անսակարկելի՝ մեր սերնդին է վիճակված պատվախնդիր տերը լինելու Սյունիքի պատմական ժառանգության, որ ստեղծել են մեր նախնիները հարյուրամյակների ընթացքում՝ Հայկ նահապետի ու Սիսակ նահապետի ժամանակներից սկսած:

Եվ այդ ժառանգությունը մենք պիտի կարողանանք պահպանել ու փոխանցել գալիք սերունդներին:

Ուրեմն եւ՝ երիցս շնորհավոր ծնունդդ, մեր նորակնունք պարբերական...

Թե ինչպես Սյունիքում տարածվեցին արդար արեգակի հոգեղեն ճառագայթները

Եջեր Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկից

ԾԱԳՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ. ԹԵ ՈՐՏԵՂԻՑ ՍԵՐԿԵՑ ՍԻՍԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՃԵՐ՝ ԱՐԱՄԻՑ ՀԵՏՈ

Աստվածապատվեր հրամանով կաշկանդված պրպտող ժամանակագիրների [համար] անվիճելի օրենքով, որ ասում է՝ «ձեզ չի վերաբերում իմանալ ժամերն ու ժամանակները, որ հայրը սահմանեց իր իշխանության մեջ», միայն հետագա [մարդկանց] անուններին ու ծննդաբանությանը հետամուտ կլինենք ստույգ շարադրանքով՝ մարդկության սկզբնավորումից մինչեւ Սիսական տոհմի նահապետության սկիզբը: Եվ սա նրա համար, որ չկարծես, թե այս տոհմի մարդիկ խառնիճաղանջ ամբոխներից են կամ ինչ-որ առաջադիմության պատճառով եւ կամ պատահաբար են ստացել նախաթոռ նահապետությունը, այլ աստվածաստեղծ մարդու նախասկզբնական ազնիվ տոհմից սկսած անհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով հասան նախարարության:

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ¹⁰...

Ունի տասներկու գավառ¹². առաջինը, որի մեջ հենց [Սյունյաց] իշխանների եւ հայրապետների գահն է, Ծղուկ գավառն¹³ է՝ անվանված Ծղուկ¹⁴ գավառապետի [անու-

նից]: Երկրորդը Վայոց ձորն¹⁵ է, որ ընդհանուր աղետից, ողբ ու վայնասուններից կոչվեց Վայոց ձոր¹⁶: Երրորդը՝ Գեղարքունիք, որ Հայկյան Գեղամի [անունից] կոչվեց Գեղարքունի¹⁷: Չորրորդը՝ Սոթք գավառը, որ մշտական բուքերի եւ ցրտաշունչ եղանակների պատճառով կոչվեց Սոթք¹⁸: Հինգերորդը՝ Աղախեճ գավառը¹⁹, որ այժմ կոչվում է Քաշաթաղ եւ հստոճաբերդ: Վեցերորդը՝ Հաբանդ գավառը²⁰: Յոթերորդը՝ Բաղք գավառը²¹, որ այժմ կոչվում է Աճեն. դա Բաղակի [անունից] այդպես՝ անվանվեց²²: Ութերորդը՝ Կովսական գավառը²³, որն այժմ Գրիամ են կոչում: Իններորդը՝ Արեւիք գավառը²⁴. որ այժմ կոչվում է Տաշտուն²⁵ եւ Մեղրի: Տասներորդը՝ Զորք գավառը²⁶, որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը²⁷, եւ այժմ կոչվում է Կապան²⁸: Տասնմեկերորդը՝ Երևակ գավառը²⁹ եւ Գողթնը³⁰: Տասներկուերորդը՝ Ճախունկ³¹ գավառը, որը եւ Շահապոնք կոչվող ձորն է:

Ահա սրանք են Սյունիքի տասներկու գլխավոր գավառները: Բայց ունի ուրիշ շատ գավառներ էլ, որոնք չհիշատակեցինք: Կան գավառներ, որոնց անունները փոխված են, ուրիշներն էլ այլ եւ այլ գավառների են բաժանված:

Ծանոթագրություն

10. Հեղինակը գրում է «Ցուցմունք սահմանաց աշխարհիս Սիւնեաց...», բայց գլխի շարադրանքն սկսում է գավառների

թվարկումով, որը առանց սահմանների ուղղակի նշման է պատկերացում տալիս՝ Սյունիքի պատմական տարածքի մասին: Սյունիքը Հայաստանի 9-րդ նահանգն էր՝ շատ նշանակալից իր տնտեսական, քաղաքական ու մշակութային դերով: Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ նրա սահմաններն էին՝ արեւմտյան կողմից՝ Այրարատ եւ Վասպուրական նահանգները, հյուսիսից՝ Գուգարքը եւ Ուտիքը, արեւելքից՝ Արցախը, հարավից՝ Երասխ (Արաքս) գետը: Տե՛ս համապատասխան քարտեզը Ս. Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», (Երեւան, 1963) գրքում: Հիշենք նաեւ, որ «Աշխարհացոյց»-ի բնագրում ցույց է տրվում այդ «իններորդ աշխարհ»-ի տեղը Երասխ գետի եւ Արցախ աշխարհի միջեւ, Այրարատից արեւելք (ն. տ., էջ 109-110): Գրավել է 15237 քառակուսի կիլոմետր տարածություն (ն. տ., էջ 117), (էջ 70):

12. Տպագիր բնագրում գլուխն սկսվում է այսպես, «Իսկ գաւառք ունի երկուսասան»: Դա շարադրանքի ընդհատվածության տպավորություն է թողնում: Պետք է ենթադրել, որ դրան նախորդել է մի հատված, որը բնագրից ինչ-ինչ պատճառներով դուրս է ընկել: Չկա նաեւ N 6271 լավագույն ձեռագրում: (էջ 70):

13. Ս. Օրբելյանի հիշատակած՝ Սյունիքի այս 1-ին գավառը (Ծղուկը) ըստ «Աշխարհացոյց»-ի 7-րդն է: Գրավել է 1950 քա-

ՇԱՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՅ 4

ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 3

ռական կիրմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 56, 109, 117): Նրան սահմանակից էին հյուսիսից՝ Արցախի Ծար գավառը, արեւմուտքից՝ Վայոց ձորը, նրանից ներքեւ՝ Ճահուկը, հարավից՝ Երնջակը եւ Արեւիքը, արեւելքից՝ Բաղը, Հաբանդը եւ Աղահեճը (տե՛ս Ղ. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 206):

Ս. Օրբելյանն այս գավառն առաջին տեղում է հիշատակում նկատի ունենալով նրա կատարած դերը որպես կրոնական եւ վարչական կենտրոնի ամբողջ նահանգի համար՝ նախ՝ իր տարածքի մեջ մտնող Շաղատ կենտրոնով (4-րդ դարի վերջերից մինչեւ 9-րդ դարի առաջին կեսը), ապա՝ Տաթևով: Իր կարեւոր դերի շնորհիվ գավառը հաճախ անվանվել է ամբողջ նահանգի անուններով՝ Սիսական կամ Սյունիք: Այդ անունների արտացոլումն է այժմյան Սիսիանը: Ներկայիս Սիսիանի շրջանի տարածքը համընկնում է պատմական Ծղուկի մի մասին: 13-րդ դարից սկսած՝ Ծղուկ-Սյունիք-Սիսական գավառը հիշատակվում է նաեւ Ռոստն անունով: (էջ 70):

14. Ծղուկ տեղանունը Ս. Օրբելյանը բխեցնում է համանուն գավառապետի անունից, որը հավանական չէ: Ենթադրվում է, որ այն ունի եթնիկական ծագում (հմմտ. Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», Երեւան, 1966, էջ 137, այլեւ՝ Նույնի «Հայաստանի պատմական աշխարհագրություն», Երեւան, 1968, էջ 205): Ըստ Նորագույն տվյալների՝ Ծղուկը գալիս է ուրարտական շրջանից: 1975 թվականին Սիսիանի շրջանում հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ (մ. թ. ա. 8-րդ դարի վերջերից կամ 7-րդ դարի սկզբներից) հիշատակված Ծուլուկու տեղանունը (Ծուլուկու երկիր) գիտնականների կարծիքով պատմական Ծղուկի անունն է (հմմտ. «Սովետական Հայաստան» օրաթերթ, 20 օգոստոսի 1975 թ., այլեւ՝ Ն. Վ Հարությունյանի «Արգիշտի 2-րդի նորահայտ սեպագիրը» հոդվածը. «Պատմաբանասիրական հանդես», 1979, N 3, 101-102:

Н. Арутюнян, Топонимика Урарту. Ереван, 1985, стр. 236 (խմբագիր): Վերջերս այն կարծիքն է հայտնվել, թե Ծղ, Ծաղ հիմքով տեղանունները կապված են եղել կրակի պաշտամունքի հետ, որպիսի անուններ շատ կան հատկապես Սյունիքում (Ս. Ումադյան, «Սյունիքը դիցարան», Երեւան, 1981, էջ 20): (էջ 70):

15. Վայոց ձորը, որ Ս. Օրբելյանը դնում է 2-րդ տեղում, Ծղուկից հետո, «Աշխարհացոյց»-ում նշվում է որպես Սյունիքի 3-րդ գավառ: Գրավում էր 2350 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 82, 109-110, 117): Նրան սահմանակից էին՝ արեւելքից՝ Ծղուկը եւ Արցախի Ծար գավառը, արեւմուտքից՝ Այրարատյան նահանգը, հյուսիսից՝ Գեղարքունիքը եւ Սոթքը, հարավից՝ Ճահուկը եւ Այրարատի Ծարուր գավառը (տե՛ս Թ. Խ. Հակոբյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», էջ 212): Նրա տարածքը համընկնում է այժմյան Եղեգնաձորի եւ Վայոց ձորի շրջաններին: Գավառը նշանավոր էր ոչ միայն նրանով, որ մյուս գավառների համեմատությամբ ամենաընդարձակն էր, այլեւ՝ որ ուներ ամենալայն, քաղաքական, մշակութային մեծ դեր: Բավական է հիշել, որ նահանգի համար Ծղուկից հետո կրոնական ու վարչական կենտրոն է դառնում այս գավառը: Գավառն ունի պատմական հուշարձանների արտակարգ հարստություն (էջ 70):

16. Պատմիչը ուրիշների նման ժողովրդական ստուգաբանությամբ Վայոց ձորի անվանումը կապում է գավառում 8-րդ դարում տեղի ունեցած ահավոր երկրաշարժի ավերումների առաջ բերած ժողովրդական ողբ ու հառաչի, վայնասունների հետ: Երկրաշարժին վերաբերող արձագանքները հասել են մինչեւ Ս. Օրբելյանի ժամանակները: Նման բացատրության հանդիպում ենք, օրինակ, Ս. Օրբելյանին որոշ չափով ժամանակակից եւ իր աշխատությամբ նրան անմիջապես նախորդած պատմիչ Կիրակոս Գանձակեցու երկում (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 74), որտեղ պատմվում է, թե ինչպես գավառի Մոգ



ԹԱԴԵՎՈՍԻ ՈՒ ԲԱՐՏՈՂԻՄԵՈՍԻ ՄՈՒՏԵԸ ՀԱՅԱՍՏԱՆ. ԴՈՒԲԱՅ, ՇԱՐԺԱ. Կտավ, յուղաներկ, ակրիլ., 200x160սմ, 1998թ.

Բարդուղիմեոս (Նաթանայել) առաքյալ, (արամերեն՝ Bar-tolomeos՝ «Թուլմեի որդի»): Ազգությունը-հրեա: Քրիստոսի 12 առաքյալներից, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմնադիրներից մեկը: Հայաստանում քարոզչությունը սկսել է Սյունյաց Գողթան գավառից, ուր կառուցել է Տյառնընդառաջ եկեղեցին: Այնուհետեւ քարոզել է Սյունյաց, Այրարատյան, Վասպուրականի նահանգներում: Բարդուղիմեոս առաքյալն է Հայաստան բերել Տիրամոր պատկերը եւ Անձեւացյազ գավառի Դարբնաց քար կոչված վայրում (ուր Անահիտի մեծիանն էր) կառուցել է Սուրբ Աստվածածնի եկեղեցին, հիմնադրել կուսանոց: Բարդուղիմեոսն Աղբակում քրիստոնյա է մկրտել Սանատրուկ թագավորի քրոջը՝ Ռգուհուն եւ Տերենտիանոս հազարապետին: Չայրացած Սանատրուկը երեքին էլ նահատակել է Աղբակում, 66 թվականին: Բարդուղիմեոս առաքյալի գերեզմանը գտնվում է Աղբակի Սուրբ Բարդուղիմեոս վանքում: Հայ եկեղեցին Բարդուղիմեոս առաքյալի հիշատակը տոնում է դեկտեմբերի 8-ին եւ փետրվարի 25-ին: Բարդուղիմեոսի մասին հայ մատենագրության մեջ ստեղծվել են վարքեր եւ ճառեր:



ավանի շրջանում քառասուն օր տեւած երկրաշարժների հետեւանքով հիմնովին կործանվում է ավանը, 10 000 մարդ գետնի տակ է անցնում: Դա մեծ սուգ է առաջ բերում: Այստեղից էլ գավառն ստանում է իր անունը: Այդ աղետի մասին ավելի պատկերավոր ձեւով պատմում է Ս. Օրբելյանը իր երկի ԼԱ գլխում եւ կրկնում Վայոց ձոր անվան հիշյալ բացատրությունը: Այս պատմիչները, իհարկե, դեպքը ներկայացնում են ոչ իբրեւ ականատեսներ, այլ փոխ են առել իրենց նախորդած ժողովրդական գրույցներից: Իրոք, 8-րդ դարի 1-ին կեսին տեղի է ունեցել այդ զարհուրելի դեպքը, սակայն գավառի անվան ծագումը չի կարելի կապել դրա հետ: Բանն այն է, որ Վայոց ձորը հիշատակվում է ավելի հին աղբյուրներում (Եղիշե, Խորենացի): Եվ հավանաբար եղել է 5-րդ դարից էլ շատ ավելի վաղ: Հետագայում գիտնականները հիշյալ տեղանվան Վայոց բաղադրիչի վայ մասը բացատրել են կա՛մ իրցանուններով, կա՛մ ցեղանվամբ եւ այլն: Վերջերս այն կարծիքն է հայտնվել, թե այն

գալիս է հնդեվրոպական սաս արմատից՝ «արեւ» իմաստով (տե՛ս Ս. Ումադյան, նշվ. աշխ., էջ 50): (էջ 70):

17. Գավառի անվան հնագույն ձեւն է Գեղաքունի, որը հետագայում ժողովրդական կրկնակի ստուգաբանությամբ դարձավ Գեղարքունի: Պատմիչը երկու ձեւով էլ գործածում է: Գավառն «Աշխարհացոյց»-ում նշվում է 4-րդը: Բռնում էր 1735 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան՝ նշվ. աշխ., էջ 47, 109, 117): Ընդգրկում էր Անահա լճի ավազանի մեծագույն մասը՝ այժմյան Կամոյի, Մարտունու շրջանները եւ Սեւանի շրջանի որոշ մասը: Հարեւան էր Այրարատին, Գուգարքին, Ուտիքին, Սոթքին եւ բուն Սյունիքին: Հռչակված էր Գեղամա լճով եւ Սեւան կղզով: Կղզու անունը հետագայում տարածվել է եւ լճի վրա: Գավառի անունը ժողովրդական ավանդությամբ բխեցվել է Գեղամ նահապետի անունից, որը եւ որդեգրել է նաեւ Ս. Օրբելյանը: Ըստ Մովսես Խորենացու՝ Գեղամը Հայկի տոհմից էր՝ Ամասիայի որդին: Նա իր անունով է կոչել Գեղ լեռը, Գեղարքունի գավառ եւ Գեղամա ծովակը (Պատմութիւն Հայոց, 1-ին, ԺԲ): Իրականում այս անունները Գեղամի անունից չեն ծագում: Հետագայում ոմանք նրան վերագրել են տոտեմական (Ն. Մառ), ոմանք՝ եթնիկական (Ն. Աղոնց) ծագում: Պարզված է, որ Գեղարքունի անունը ուրարտական ծագում ունի, գալիս է Welikuni կամ Welikuh անունից: Գեղ, Գեղամ անուններն էլ նրա Wel մասից են (տե՛ս Գ. Ա. Կապանյան, Историко-лингвистические работы, Երեւան, 1975, հ. 2րդ, էջ 82): Վերջերս այն կարծիքն է հայտնվել, թե այդ տեղանունը պաշտամունքային ծագում ունի: «Նրա անվան հիմքը հնդեվրոպական է» (տե՛ս Ս. Ումադյան, նշվ. աշխ., էջ 43): (էջ 70):

18. Այս 4-րդ գավառը («Աշխարհացոյց»-ում 5-րդը) մոտավորապես՝ համընկնում է այժմյան Վարդենիսի շրջանին: Նրա անունից մնացել է այժմյան Չող գյուղի անունը Նույն շրջանում: Այս տեղանունը Ս. Օրբելյանը ներկայացնում է Սոթք(ը) ձեւով: Նրա բացատրությունից երեւում է, որ հայերենն ունեցել է սոթ բառ, որը պիտի նշանակեր «բուք, ցրտաշունչ քամի կամ ցուրտ եղանակ»: Դրա վրա հենվելով՝ Հ. Աճառյանը «Հայերեն արմատական բառարան»-ում (հ. 6-րդ, էջ 313) դնում է այդպիսի արմատ՝ «ուժեղ,



Թե ինչպես Սյունիքի շուրջ ստեղծվեց ռազմաքաղաքական նոր իրավիճակ

**Հայաստանի
Հանրապետության
վարչապետի,
Ադրբեջանի
Հանրապետության
նախագահի և
Ռուսաստանի
Դաշնության
նախագահի
հայտարարությունը**

10.11.2020

Մենք՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն.Վ. Փաշինյանը, Ադրբեջանի Հանրապետության նախագահ Ի.Հ. Ալիևը և Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Վ. Պուտինը, հայտարարեցին հետևյալը.

1. 2020 թվականի նոյեմբերի 10-ի մոսկովյան ժամանակով 00:00-ից Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հայտարարվում է ամբողջական հրադադարի և բոլոր ռազմական գործողությունների ավարտի մասին: Ադրբեջանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր, կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում:

2. Ադրբեջանի շրջանը վերադարձվում է Ադրբեջանի Հանրապետությանը մինչև 2020 թվականի նոյեմբերի 20-ը:

3. Լեռնային Ղարաբաղում շփման գծի երկայնքով և Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայվում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբ, այդ թվում՝ հրաձգային զենքով զինված 1960 զինծառայող, 90 զրահամեքենա, 380 միավոր ավտոմոբիլային և հատուկ տեխնիկա:

4. Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը տեղակայվում է Հայկական զինված ուժերի դուրսբերմանը զուգահեռ: Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը տեղակայվելու է 5 տարի ժամկետով, որը ինքնաբերաբար երկարաձգվելու է հերթական 5-ամյա ժամկետով, եթե միայն Կողմերից որևէ մեկը տվյալ ժամկետի ավարտից 6 ամիս առաջ չհայտարարի սույն դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին:

5. Հակամարտության Կողմերի կողմից համաձայնագրերի կատարման վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հրադադարի ռեժիմը վերահսկելու համար ստեղծվում է խաղաղապահ կենտրոն:

6. Հայաստանի Հանրապետությունը Ադրբեջանի Հանրապետությանը վերադարձնում է Քելբադձարի շրջանը մինչև 2020 թ. նոյեմբերի 15-ը, իսկ Լաչինի շրջանը՝ մինչև 2020 թ. դեկտեմբերի 1-ը: Լաչինի միջանցքը (5 կմ լայնությամբ), որը ապահովելու է Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ, ընդորոշում շրջանցելով Շուշի քաղաքը, մնում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի վերահսկողության ներքո:

Կողմերի համաձայնությամբ, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կապն ապահովելու համար առաջիկա երեք տարիների ընթացքում պիտի հաստատվի Լաչինի միջանցքի երկայնքով նոր երթուղու կառուցման նախագիծ, որից հետո ռուսական խաղաղապահ զորակազմը կվերատեղակայվի՝ այդ երթուղին պաշտպանելու համար:

Ադրբեջանի Հանրապետությունը երաշխավորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային և բեռնատար միջոցների երթևեկության անվտանգությունը երկու ուղղություններով:



Նիկոլ Փաշինյանի, Վլադիմիր Պուտինի և Իլիամ Ալիևի հանդիպման արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն



11.01.2021

Սուկվայում կայացած ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի և Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևի եռակողմ հանդիպման արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն:

Հայտարարությունը ներկայացնում ենք ստորև.

Ադրբեջանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, 11 հունվարի 2021 թ.

Մենք՝ Ադրբեջանի Հանրապետության նախագահ Ի.Հ. Ալիևը, Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն.Վ. Փաշինյանը և Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Վ. Պուտինը հայտարարում ենք հետևյալի մասին.

1. 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության՝ տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերն ապաշրջափակելու մասին 9-րդ կետի իրականացման նպատակով աջակցում ենք Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանի Հանրապետության փոխվարչապետների համատեղ նախագահությամբ եռակողմ

աշխատանքային խումբ ստեղծելու մասին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Վ. Պուտինի առաջարկը:


2. Աշխատանքային խումբն առաջին հանդիպումը կանցկացնի մինչև 2021 թ. հունվարի 30-ը, որի արդյունքների հիման վրա կկազմի Հայտարարության 9-րդ կետի կիրառումից բխող աշխատանքների հիմնական ուղղությունների ցանկը՝ որպես գերակայություններ ընդունելով երկաթուղային և ճանապարհային հաղորդակցությունները, ինչպես նաև կապի միջոցների Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ Կողմեր) միջև համաձայնեցված այլ ուղղություններ:

3. Գործունեության հիմնական ուղղություններն իրականացնելու նպատակով Աշխատանքային խմբի համանախագահները կհաստատեն այդ ոլորտներում փորձագիտական ենթախմբերի կազմը, որում կներառվեն Կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչներ և կազմակերպությունների պաշտոնատար անձինք: Փորձագիտական ենթախմբերը, աշխատանքային խմբի նիստից հետո մեկամյա ժամկետում կներկայացնեն նախագծերի ցանկ, որում կներկայացվեն անհրաժեշտ ռեսուրսներն ու միջոցառումները՝ դրանց իրականացման և Կողմերի կողմից ամենաբարձր մակարդակով հաստատելու համար:

4. Աշխատանքային խումբը մինչև 2021 թ. մարտի 1-ը Կողմերի կողմից ամենաբարձր մակարդակով հաստատման կներկայացնի Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքով իրականացվող միջազգային փոխադրումների կազմակերպման, իրականացման և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ նոր տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտների վերականգնման և կառուցման միջոցառումների իրականացման ցանկ և ժամանակացույց, նույն կերպ Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող փոխադրումների համար, որոնք պահանջում են հատել Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքները:

ՇԱՐՀԻՆԿԱՎՈՒԹՅՈՒՆԸ • ԷՅ 35

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆՔ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ



Պաշարաջրի Սուրբ Հռիփսիմն եկեղեցին

Բարձրավանի մերձակայքում Թասի լեռնանցքի արեւմտահայաց կողմում է գտնվում ավերակ Պաշարաջուր գյուղը, որ նաեւ կոչվել է Բաշարաջուր, Բաշիրաջուր:

Անտառներով շրջապատված լեռնաբացատում, շրջակայքի նկատմամբ իշխող դիրք ունի Պաշարաջուրը:

20-րդ դարասկզբին գյուղը բնակեցվել է թուրք-ազերիներով, ովքեր 1949-53 թթ. տեղափոխվել են Ադրբեջան: Գյուղն այնուհետեւ դարձել է Բարձրավանի ձեռնանոց:

Կանգուն է գյուղի քառանկյուն եկեղեցին՝ հավանաբար կառուցված 17-18-րդ դարերում: Նշմարվում են տների հետքերը:

Եկեղեցուց մի փոքր արեւելք եռահարկ քարանձավն է: Եկեղեցու շրջակայքի տապանաքարերի վրա բացառիկ նախշաքանդակներ են:

Սարավանդը, որտեղ գտնվում է Պաշարաջուրը, մատենագիտության մեջ հիշատակվում է «Պաշարաջրի սարավանդ» անվամբ:

Բղեն գավառի հարավային գյուղերի սրբավայրերը

Բղեն գավառի հարավային գյուղերի սրբավայրեր այցելելու մեր մտադրությունը անկատար մնաց. դրանց մերձակայքի անտառների մի մասը դեռեւս Արցախյան առաջին պատերազմի տարիներից ականազերծված չէ...

Աղբուլաղ. գտնվում է Որոտանի աջակողմյան վտակ Քաշունի գետից ծախ՝ անտառապատ լեռնալանջի վրա: 20-րդ դարասկզբին են ազերի-թուրքերը Կոբաթլիի տարածքից եկել այդ գյուղ: Աղբուլաղ է կոչվել գյուղից հյուսիս-արեւելք գտնվող համանուն աղբյուրի անունով:

Գյուղից մոտ 1 կմ հարավ-արեւելք Ալշալու (Շիրոուտ) ավերակ գյուղատեղին է, որտեղ կան եկեղեցու ավերակներ (այդ Շիրոուտը չպետք է շփոթել Կապանի տարածաշրջանի Շիրոուտ ամրոցի եւ համանուն գյուղի հետ): Գյուղի մոտ է գտնվում Կալանդ դար ամրոցը (գյուղից մոտ 3 կմ հարավ-արեւելք՝ մի լեռան գագաթին):

Պահպանվել են անմշակ խոշոր քարերով

շինված պարսպի եւ նրա բուրգերի ավերակները, կրաշաղախ պատերով շինվածքներ: Ավանատեսներն ամրոցի մերձակայքում բազմաթիվ խաչքարեր են տեսել:

Շամսուզ. որ կոչվում է նաեւ Շահար Մովսես, Շամսուզ, Շհար Մովսես:

Գտնվում է Որոտան գետի աջակողմյան Քաշունի վտակի ծախ կողմում՝ լեռնալանջի վրա, որի հյուսիսային կողմն անտառապատ է: 1960-ականներին ապաբնակեցվել է: Ավանդության համաձայն՝ այդտեղ ինչ-որ ժամանակ քաղաք է եղել (շահար, շհար)՝ քրիստոնեական սրբավայրերով:

Ղուրդղուլաղ, որ կոչվում է նաեւ Գուրդ գուլաղ, Գուրթ կալա, Կուրթկուլաղ, Չիչակուլ, Չիչակուլ դարա, Քյուրդ-դալա... Գտնվում է Որոտանի աջակողմյան Քաշունի վտակի ծախափնյա անտառապատ հովտում: Գյուղից 5-6 կմ հարավ-արեւելք՝ անտառի մեջ, կա կիսավեր եկեղեցի:



Շուռնուխ. ազերիների կողմից նախկինում ավերված եկեղեցու փոխարեն՝ երկաթե խաչ

Մատենագիտության մեջ գյուղն անվանվում է նաեւ Շոռնոխո, Շոռնուխ, Շոռնուխա, Շորնուխո եւ այլն:

Գտնվում է Գորիս-Կապան ավտոմայրուղու վրա, անտառապատ, գեղատեսիլ լեռնալանջին:

Ադրբեջանցիներով բնակեցվել է 1930-ին՝ պատմական Շոռնոխո ավերակ գյուղի տեղում, որ մտնում էր Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Բաղը-Քաշունիք գավառի մեջ, եւ նրա ավերման ժամանակը հայտնի չէ:

19-րդ դարավերջին այդտեղ ավերակներ կային, նաեւ եկեղեցու ավերակներ:

1989-ից գյուղում այլեւ ադրբեջանցիներ չկան: Գյուղը վերաբնակեցվել է հայերով:

Գյուղի կենտրոնի փոքր բլրակի վրա վեր-

ջերս կանգնեցվել է երկաթե խաչ, որի լուսավորված վիճակը, գիշերային խավարի մեջ, երեւում է տարբեր կողմերից:

2020 թ. նոյեմբերի 9-ից եւ հատկապես դեկտեմբերի 18-ից հետո գյուղն ապօրինաբար կիսվել է երկու մասի. գյուղի արեւելյան թաղամասը՝ բաղկացած 11 առանձնատնից, անցել է Ադրբեջանի տիրապետության ներքո:

Գյուղում եւ գյուղի միջակայքում կա ադրբեջանական երկու հենակետ:

Գյուղում է գտնվում նաեւ ՌԴ սահմանապահ զորքերի հենակետը:

Երկու հենակետ էլ Հայաստանի Հանրապետությունն ունի:



Որոտան գյուղի սրբատեղին, որ կառուցվել է ազերիների կողմից ավերված եկեղեցու տեղում

Գորիսի տարածաշրջանի Որոտան գյուղն է: Մերո հանգադյանի կարծիքով՝ Ստեփանոս Օրբելյանի վկայակոչած Շաթիթաղ գյուղն է:

Հետագայում թուրք-ազերիները գյուղին տվել են Շահվերդի, Շահվերդյար, Շախվերդի Ուշագի, Շահվերդյար եւ այլ անուններ:

Գյուղը գտնվում է Գորիս-Կապան ճանապարհին՝ Որոտան գետի աջ ափին, Երբեմնի Շահվերդյարի կամրջի մոտ (կամուրջը կառուցվել է 19-րդ դարի վերջին քառորդում):

1940-ի վերջին գյուղն ապաբնակեցվել է, իսկ 1960-ականներին գյուղի տարածքում կառուցվել է Տաթևիեկի ավանը (որոշ ազե-

րիներ կրկին վերադարձել են այդտեղ եւ բնակվել մինչեւ 1989 թ.):

Թուրք-ազերիների բնակության տարիներին գյուղի հնամենի եկեղեցին ավերվել է, սակայն ժողովրդի հիշողության մեջ պահպանվել է նրա տեղը եւ այդ վայրի հանդեպ պատկառանքը: Ու այդ վայրում հիմա կամարակապ մի սրբատեղի է շինվել, որտեղ շաբաթ եւ կիրակի օրերին կարելի է տեսնել Որոտան գյուղի հավատավոր բնակիչներին:

Գյուղն արեւելքից երիզող բլրի վրա մի քանի տարի առաջ կանգնեցվել է երկաթե խաչ, որը գիշերները պարուրվում է լույսով:

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԷ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ

Նորավանք.

Բղեն գավառի սրբավայրերի պսակը


Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմության» մեջ նշված գավառացանկում Բղեն գավառը տեղ չի գտել, ինչին բացատրություն է տվել ինքը՝ պատմիչը՝ ներկայացնելով Սյունիքի գավառները. «Բայց ունի ուրիշ շատ գավառներ էլ, որոնք չհիշատակեցինք: Կան գավառներ, որոնց անունները փոխված են, ուրիշներն էլ այլ եւ այլ գավառների են բաժանված» (նշված աշխ. էջ 70):

Այդուհանդերձ՝ Սյունյաց տան պատմիչն այդ գավառի զբաղեցրած տարածքի մասին որոշակի տեղեկություն է հաղորդել, որն անվիճելի պետք է լինի:

Դատելով պատմիչի հաղորդած տեղեկություններից՝ Բղեն (Բղենա) գավառը գտնվում է Տաթևից դեպի հարավ-արևելք ընկած տարածքում, Որոտան գետի աջ կողմում (այժմյան Բարձրավան գյուղի շրջակայքը):

Երբեմն Տաթևն էլ մտել է Բղեն գավառի մեջ: Օրբելյանը կողմնորոշող մի փաստ էլ է բերում՝ խոսելով Նորավանքի կառուցման մասին՝ «Ավա գալով Կատարի վանքի հակառակ կողմը...» (նշված աշխ. էջ 221):

Իսկ այդ վանքի տեղադրման հարցը քննարկվել է նշված աշխատության ծանոթագրություններում (ծանոթագրություն 719) եւ թ. Հակոբյանի «Սյունիքի թագավորություն-



Բղեն Նորավանք, միջնադարյան վանական համալիր, որը գտնվում է Բարձրավան գյուղի մոտ, Շուշուի տանող ճանապարհից աջ, անտառապատ կիրճերով շրջապատված եռակույրնաձև հրվանդանի վրա

նը» աշխատության մեջ:

Եվ ուրեմն՝ ըստ ներկայումս իշխող կարծիքի՝ Բղեն (Բղենո) գավառը զբաղեցրել է Գորիսի տարածաշրջանի Բարձրավան գյուղի շրջակայքը (Որոտան գետի աջ ափը):

Այդ գավառում են գտնվել Նորավանքը, Բղենո բերդը: Բղեն գավառի աշխարհագրական դիրքի



«Էջմիածնի» կամ «Փղոսկրյա» կոչվող Ավետարան: Ընդօրինակել է Հովհաննես Գրիչը 989 թվականին, Բղենո-Նորավանքի Սր. Ստեփանոս եկեղեցում՝ Ստեփանոս քահանայի պատվերով: Բնագիրը պարունակում է 35 x 28 սմ չափի 233 մագաղաթե թերթ (Մատենադարան, ձեռ. դ. 2374): Բաղկացած է գեղեցիկ երկաթագրով գրված չորս Ավետարանից:



“

Ստեփանոս
Նախաշինողն էր՝
քահանայական
աստիճանի կոչված,
ով հիմնադրեց Բղենո
Նորավանքը:

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԲ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ



Բղենո Նորավանքն այն սրբավայրերից է, որի փառքը միայն անցյալին չէ, որ պատկանում է, այլ ավելի շատ ներկային ու ապագային:



վերաբերյալ սխալ տեղեկություններ է հայտնել Ղեւոնդ Ալիշանը:

Գավառի վերաբերյալ ոչ հստակ եւ իմփօքիայից ձեւակերպումներ են տեղ գտել «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանի» 1-ին հատորում:

Սյունիքի պատմական աշխարհագրությանը փոքր-ինչ քաջատեղյակ մարդն անգամ

կհաստատի, որ բառարանի ձեւակերպում-բացատրությունը որեւէ դարաշրջանի ու որեւէ քարտեզի վրա չի կարող տեղ գտնել. «Հավանաբար կազմում էր Բաղը-Աճառանի եւ Ծղուկ-Այլախի սահմանամերձ շրջանը», ինչը տրամաբանության մեջ չի տեղավորվում:

* * *

Բղեն գավառի սիրտը՝ Նորավանքն է: Գտնվում է Բարձրավանից դեպի արեւելք՝ 3-4 կմ հեռու: Գորիս-Կապան մայրուղուց՝ Բարձրավանի խաչմերուկից թեքվում ենք աջ (արեւմուտք): Գտնվում է լեռնային բազուկի ծայրին, երեք կողմը շրջապատված է խոր եւ անտառապատ ձորերով:

Այդ վայրը տեղացիները կոչում են Նաեւ Ջհաննամ դարասի-Դժոխածոր:

* * *

Սյունյաց աշխարհի 48 վանքից այդ մեկը՝ Բղենո Նորավանքը, բացառիկ տեղ է զբաղեցնում ոչ միայն Սյունիքի, այլեւ հայոց աշխարհի սրբավայրերի շարքում:

Բղենո Նորավանքը, սակայն, յուրահատուկ ճակատագիր է ունեցել:

Դարեր շարունակ անհայտ էր վանքի տեղը, պատմիչներն անորոշ եւ իրարամերժ տեղեկություններ են հաղորդել դրա գտնվելու վայրի մասին:

Եվ միայն 1932 թվականին եղավ Բղենո Նորավանքի վերահայտնությունը: Եվ այդ վերահայտնությունը, վերին պարզեցումով, եղավ հայոց մեծերից մեկի՝ Ակսել Բակունցի կողմից: Նա է իմանում վանքի տեղի մասին եւ տեղեկացնում հնագետ Սեդրակ Բարխուդարյանին, ինչից հետո՝ 1934-ին, հնագետը, գիտական արշավախմբի հետ, ուսումնասիրում եւ մանրամասն ներկայացնում է սրբավայր-հուշարձանախումբը:

* * *

Բղենո Նորավանքն այն սրբավայրերից է, որի փառքը միայն անցյալին չէ, որ պատկանում է, այլ ավելի շատ ներկային ու ապագային:

Եվ դա՝ շնորհիվ «Էջմիածնի ավետարանի» կամ «Փղոսկրե ավետարանի», որը եզակի կանթեղ է քրիստոնեական վարդապետությամբ հայոց տունը լուսավոր պահելու գործում, որը, հիրավի, Ավետարանների թագուհին է քրիստոնյա աշխարհում:

Ճակատագրի կամոք եւ դարեր շարունակ Ավետարանի գրչության վայրը սխալմամբ համարվել է Էջմիածինը՝ անտեսելով (չիմանալով) գրչության իրական վայրի անունը, որ Բղենո Նորավանքն է:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ • Էջ 10



ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԲ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ

Նորավանք. Բղեն գավառի սրբավայրերի պատկեր

ՍԿԻՉՐԸ՝ ԷԶ 9

Հայ գրչության եւ մանրանկարչության այս հուշարձանն ընդօրինակել է Հովհաննես գրիչը՝ 989-ին, Բղենո Նորավանքի սուրբ Ստեփանոս եկեղեցում, պատվիրատու՝ Ստեփանոս քահանա:

Ավետարանը ներկայումս գտնվում է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (ծեռագիր N2374):

Բաղկացած է գեղեցիկ երկաթագործ գրված չորս ավետարանից: Բացառիկ է Ավետարանի մանրանկարների դերը:

«Էջմիածնի ավետարանի» ուսումնասիրությամբ զբաղվել են շատ գիտնականներ՝ Ա. Ուվարով, Վ. Ստասով, Ն. Կոնդակով, Յո. Ստրիգովսկի, Գ. Վայցման, Ֆ. Մակլեր, Ս. Տեր-Ներսեսյան, Նիկողայոս Ադոնց եւ ուրիշներ:

* * *

Անկարելի է չհիշել վանքի երախտավորներից մի քանիսին ու հարյուրամյակների հեռվից չխոնարհվել նրանց հիշատակի առջեւ:

Երախտավորների շարքում առաջինը, անշուշտ, Ստեփանոս Նախաշինողն է՝ քահանայական աստիճանի կոչված, ով հիմնադիրն է Բղենո Նորավանքի:

Ստեփանոսը Սիսական տոհմից էր:

Բղենո Նորավանքի առաջին եկեղեցին կառուցվել է Հրահատ իշխանի օժանդակությամբ:

Ստեփանոսի եւ Հրահատի հիմնադրած եկեղեցուն նավակառուցին, որ տեղի ունեցավ



Գրիգոր Ա Սյունի կամ Գրիգոր Աշոտյան, Սյունիքի թագավոր (1051 - 1072)

936 թ., մասնակցել է Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հակոբը, ով էլ օծել է Աստծո այդ տաճարը:

Արդարացի կլիներ Ստեփանոս Նախաշինողի հետ մեկտեղ հիշել նաեւ Գրիգորի (Գեորգիի) եւ Հովհաննեսի անունները, թեեւ նրանք գործեցին Նախաշինողից մոտ 100 տարի հետո:



Հենց նրանք 1062-ին կառուցեցին վանքի երկրորդ եկեղեցին (կամ վերաշինեցին արդեն կառուցվածը):

Եվ կառուցեցին, ինչպես պատմիչն է վկայում, շատ գեղեցիկ իորինվածքով:

Վանքի երախտավորների ցանկում ոսկե տառերով են գրված Հովհաննես գրիչի՝ «Էջմիածնի ավետարանի» հեղինակի եւ պատվիրատու Ստեփանոս քահանայի անունները:

Պարտավոր ենք հիշել նաեւ Սյունիքի թագավոր Գրիգոր Ա-ին, ով թագավորել է 1051-72թթ. եւ հովանավորել Նորավանքում կատարվող աշխատանքները (Գրիգոր Ա թագավորը թաղված է Վահանավանքում, նրա դեմքը վերականգնել է պրոֆեսոր Ճաղարյանը):

* * *

Բղենո Նորավանքը հայ ճարտարապետության մեջ արտակարգ տեղ է գրավում նաեւ իր բարձրարվեստ քանդակներով: Ճատերն են անդրադարձել այդ պատկերաքանդակներին, բայց մեջ բերենք միայն փոքրիկ հատված Ստեփանոս Մնացականյանի «Հայկական աշխարհիկ պատկերաքանդակները IX-XIV դարերում» գրքից:


Ահա՝ «Աղթամարից հետո Բղենո Նորավանքն այն միակ հուշարձանն է, որ այնքան հարուստ է պատկերաքանդակներով:

Ուսումնասիրությունը կասկած չի թողնում, որ այստեղ ի սկզբանե պատկերված են եղել Քրիստոսի կյանքի հիմնական դրվագները (մեզ հասած ուսկ պատկերաքանդակից վեցում առկա է Քրիստոսը):»

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ



ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆՔ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ



Բարձրավան գյուղի սրբավայրերը

Վերջին անգամ Բարձրավանի սրբավայրեր այցելեցինք 2019 թ. դեկտեմբերի 21-ին:

Կարելի է ասել՝ քարերի տակ ու քերձերի մեջ քնած դարերն էին արթնացել այդ օրը: Յուրահատուկ էր հատկապես Բարձրավանի ծորից (Որոտանի կիրճի մի մասն է) ստացած տպավորությունը:

Ձորը սկսում է գյուղի հարթության պռնկից եւ 40-50 աստիճան թեքությամբ ձգվում մինչեւ Որոտան գետը: Ձորը լայնությամբ ձգվում է դեպի Օվենի անտառը:

Ճշմարիտ է ասված՝ եթե ուզում ես ամբողջովին հասկանալ Որոտանի կիրճի վեհությունը, ահեղությունը, անառիկությունը, հեքիաթայությունը, նաեւ գրավչությունն ու անզուգական հմայքը, պետք է այնտեղ իջնել Բարձրավանից:

Առանց չափազանցության՝ այնտեղ ամեն ինչ՝ քարերը, ծառերը, կածաններին չոքած դարավոր ընկուզենիները մարդայնացած են, այնտեղ կարելի է գրուցել դարերի հետ, այնտեղ կարելի է գրուցել Բարձրավանի հետ:

Լեռան շուրթից սկսած քարերի մի անսովոր հեղեղ է՝ սառած հեղեղ, Համո Սահյանի խոսքերով՝ «Քարե՛ մորիկ է ու քարե բուք է, Քարե՛ բողոք է ու քարե բերդ...»:

Քարերի այդ հեղեղը 1658-ի, ինչպես եւ 1931-ի ահեղ երկրաշարժի հետեւանք են (վերջին երկրաշարժից գյուղում 47 մարդ է զոհվել):

Այդ երկրաշարժներն ավերել ու տակնուվրա են արել ամեն ինչ, անգամ լեռան անմիջական ստորոտում գտնվող Քարոտան կամ Քարատնիք գյուղը թողել են քարերի

տակ (դա՛ 1658-ի երկրաշարժի ժամանակ): Ու, այդուհանդերձ, ահեղ երկրաշարժերը չեն վնասել ո՛չ Սուրբ Մինաս եկեղեցուն, ո՛չ քիչ հեռվում գտնվող Սյունյաց մեծ անապատի եկեղեցուն, որ բարձունքից «իջել» եւ անվնաս հանգրվանել է նոր տեղում ու կանգուն է մինչեւ հիմա:

Ժայռերի զառիթափով՝ մեքենայով, մոտ 1 կմ իջնելուց հետո, ճանապարհը շարունակեցինք ուղղով՝ կածաններով:

Ծառերի տակ, նաեւ կածաններին տերեւների գորգեր էին: Բայց դրանք երկնաքաղաքի «վառվող» տերեւներ չեն այլ: Դրանք հիմա քամու հետ ուղիսկ չեն վիճում, աստղերի ու արեւի հետ զրույցի չեն բռնվում (մանավանդ որ ծորի այդ մասը ծմռանը գրեթե արեւ չի տեսնում):

Չորացած, խորշոմած այդ տերեւները ծյուն են աղերսում, մի բուռ ծմեռ, որի նշանները չեն երեւում, թեեւ դեկտեմբեր ամիսն ավարտին է մոտենում:

Միայն հեռվում երեւացող Արամազդն է, որ սպիտակ շապիկ է հագել եւ զուլխն աստղերին հենել:

Ի վերջո ծորից սկսեցինք բարձրանալ Բարձրավան գյուղ...
* * *

Բարձրավան գյուղը մատենագիտության մեջ հիշատակվում է 12-րդ դարից եւ անվանվել է Երիցաթումբ, Զյուրդիկ (վերջին անունը հավանաբար ծագում է Սյունյաց իշխան Քուրդոյից, ով երկրամասում իշխել է տասնութ տարի):

Ռուսական 10-վերստանոց քարտեզում Բարձրավան գյուղը նշված է այսպես՝ Ռեցաթումբ (Ռեսաթումբ), որը մեր խոսակցականում դարձել է Ռուսթումբ՝ տեղից տալով արհեստածին մեկնաբանությունների:

Ըստ Սերո Խանգաղյանի՝ գյուղը երիզող երեք բլրից է առաջացել Երիցաթումբ անունը: Ահա նրա խոսքը. «Բարձրավանը հարթ տեղ է՝ խոր անդունդի եզրին: Տները նոր են՝ մանր, ցրված: 1931 թ. ապրիլի 28-ի մեծ երկրաշարժից գյուղը փլվել է: Ժայռերի վրայի շատ տներ նետվել են անդունդ: Գյուղը վերաշինել են, Երիցաթումբ անունը Բարձրավան դարձրել: Իզուր՝ Կարծել են, թե Երեցքահանա անունից է, այնինչ երից-երեց զարմանալի կլոր ու կանաչ թումբ-բլուրներից է՝ Երցաթումբ:»

Այս գյուղի բնակիչները եկել են ծորի մյուս կողմի Շընհեր (Շինտիայր) գյուղից»: Գյուղը Բարձրավան անունը ստացել է 1940-ին:

Սերո Խանգաղյանին գյուղի տարեցները պատմել են, որ այս վայրում Ստեփանոս պատմիչի հիշատակած Քարոտան կամ Քարատնիք գյուղն է եղել, նաեւ որ ավերվել ու քարերի տակ է մնացել 1658-ի երկրաշարժի ժամանակ:

* * *

Քրատակի Սուրբ Մինաս եկեղեցին գտնվում է Բարձրավանից դեպի Որոտան իջնող ճորայանքին՝ մոտ 2 կմ գյուղից հեռու:

Եկեղեցին շինված է կոփածո քարերով եւ թաղակապ է. միայն ներսից՝ բեմի կամարը սրբատաշ քարերով է շինված:

Եկեղեցու բակում կան մի քանի խաչքարեր (որոնցից մեկը՝ խոշոր) եւ ժայռաբեկորներ, որոնցից մի քանիսի վրա կան արձանագրություններ:

Բարձրավանցիները սրբավայրին նաեւ Քրդտակի եղի են ասում:

Սերո Խանգաղյանն ընթերցել է որոշ արձանագրություններ. բեմի կամարին՝ ՉՀ. ՄՍ, որ 1321 թվականն է:

Դրսում մի քարի վրա՝ Թվ. ՉԺ (1261 թ.):

* * *

Քրատակի Սուրբ Մինաս եկեղեցուց մոտ 200 մետր արեւելք, լեռան լանջին է գտնվում ոչ սովորական անվամբ ուխտատեղին՝ Ծծախաչ կամ Կաթնաղբյուր:

Էդիկ Հովհաննիսյանը մեզ ներկայացնում է՝ «Արտաքուստ մայրական կուրծք է»՝ անձեռակերտ, որից (մի քանի տեղից) հավերժորեն ջուր է ծորում:

Իսկ խա՛չը:

Ըստ Էդիկ Հովհաննիսյանի՝ կա երկու վարկած. «մայրական կրծքի խորքում»՝ խաչքար է եղել, որ դարերի ընթացքում ծածկվել է հողով՝ թողնելով միայն հուշ:

Երկրորդ վարկածի համաձայն՝ մայրական կուրծքը սրբություն է՝ խաչին հավասարազոր, ինչի համար էլ ստացել է այդ անվանումը:

Ուխտավայրի արմատները, ըստ էության, ավելի խորն են եւ հասնում են մինչեւ հազարամյակների խորքեր:

Ուխտավայրի հիմքում Արամազդի դուստր Անահիտի՝ պողաբերության, արգասավորության, ծննդաբերության աստվածուհու պաշտամունքն է, որը հետագայում վերագրվել է Մարիամ աստվածամորը:

Ուխտավայրի խորհրդավորությունը կարելի է հասկանալ՝ մեր ոյուցազնավեպն ընթերցելով. Սանասարի ու Բաղդասարի մայրը հղիանում է ջրից, ինչը հանդիպում ենք «Սասնա ծռեր» Էպոսի մի քանի պատումներում:

Էպոսում հիշատակվում է նաեւ Կաթնաղբյուրը, որի ջուրը խմում են եւ զորանում:

...Բարձրավանի Ծծախաչը կամ Կաթնաղբյուրը դարեր շարունակ իրեն է ձգել կանանց, ովքեր մայրանալու խնդիր են ունեցել, ովքեր նորածնին մայրական կաթով սնելու դժվարությունների են հանդիպել:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Գյուղամիջում է գտնվում Սուրբ Հռիփսիմե եկեղեցին: Ըստ հնագետ Սեդրակ Բարխուդարյանի՝ վերակառուցված է 19-րդ դարում. սրա կտուրին կանգնեցված է մի այլ տեղից վերցրած խաչքար՝ 14-րդ դարի արձանագրությամբ:

Այլ աղբյուրների վկայությամբ՝ գյուղամիջի եկեղեցին կառուցվել է 17-րդ դարում եւ վերակառուցվել 19-րդ դարում: Եկեղեցին կանգուն է:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Սուրբ Հռիփսիմեի բակում եղել է հազվադեպ տապանաքարերով զերեզմանատուն 11-րդ դարից:

Ըստ Սերո Խանգաղյանի՝ «Գյուղամիջի եկեղեցին կառուցված է 1866 թ.: Շինել են հնի հիմքի վրա. պատերի մեջ խաչքարեր կան»:



ՄՐԲԱՎԱՅԻՐԵՐ, ՈՐՈՆԷ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՄԱՀՄԱՆԱՄԵՐՁ



Խանածախ. Հին եկեղեցին (եղցին) եւ Բահավորի եկեղեցին

Գյուղը գտնվում է Գորիս քաղաքից հյուսիս-արևելք՝ լեռնային, կտրտված ռելիեֆով վայրում: Այդտեղ էլ կան երբեմնի բնակելի եղած քարատակներ: Գրավոր աղբյուրներում գյուղը հիշատակվում է 13-րդ դարից (Ստեփանոս Օրբելյան, «Սյունիքի պատմություն»):

Տաթևի վանքին (ըստ հին հարկացուցակի) վճարում էր 20 չափ հարկ:

Խանածախ գյուղանվանը հանդիպում ենք Ստեփանոս Օրբելյանին վերագրվող «Ժամանակագրության» մեջ: Գյուղանունը նշված է Նաեւ 1781-ի հարկացուցակում:

19-րդ դարավերջին Խանածախ այցելած Երվանդ Լալայանն այսպես է նկարագրում բնակավայրը՝ «Գյուղն ընկած է բլրակների լանջերին, որոնք միմյանց ընդհարվելով՝ մի փոքրիկ ծորակ են կազմում: Այստեղ բխում է մի վարար աղբյուր, որի ջուրը հոսելով ծորի միջով, հնարավորություն է տվել պարտեզներ տնկելու, որոնց մեջ մշակվում են առավելագույն կեռասենիներ:

Տները դարադամներ են, սակայն կան

Նաեւ քարատակներ, որոնցից մի քանիսը հին են, իսկ կյուսները Նոր են փորված:

Հին քարատակները գլխավորապես ծառայում են որպես խոտանոց եւ զոմ:

Բնակիչներն առավելապես Սուլթան-քենից գաղթած հայ լուսավորչականներ են...»:

Սյունիքի տարածքով շատ վաղ ժամանակներից անցնող մի քանի բանուկ ճանապարհից մեկն անցել է Խանածախով՝ Լախ-ճավանից-Անգեղակոթ-Սիսիանի վրայով՝ Հարժիսի քարավանատուն, ապա Գորայք (Գորիս), որից հետո Խանածախ եւ Տեղ (Երկու ճյուղով)՝ Շուշի:

– Խանածախ ավանի պատմական նշանակությունը բարձրանում է 13-րդ դարից սկսած եւ Հայաստանի ընդհանուր քայքայման-ավերման դարերում՝ 15-16-րդ դարերում, – նշում է Մորուս Հասրաթյանը եւ ավելացնում «Այս ժամանակներում Խոնածախը դառնում է Սյունիքի առաջնակարգ ավանկենտրոնը (վարչական առումով)՝ գերագանցելով Տաթևին, Տեղին, Նույնիսկ Գորես-Վե-



րին շենին եւ Անգեղակոթին»:

Խանածախի վերելքը մեծամասամբ պայմանավորված էր Զաչաթաղ-Մաղավուզի՝ ամենուրեք ճանաչված Մելիք-Հայկազն երկրորդի գործունեությամբ: Այդ նույն Մելիք-Հայկազն երկրորդն էր, որ կառուցեց Սյունյաց (Հարանց) մեծ անապատը Հայիծոր գյուղի դիմաց: Մելիք-Հայկազն երկրորդն էր, որ համոզեց Շահ Աբասին՝ զերծ մնալու Սյունիքի ու Արցախի հայ բնակչությանը Պարսկաստանի խորքեր գաղթեցնելու գաղափարից:

Հին եկեղեցին (եղցին)

Գյուղի միջով հոսում է Խանածախի գետը (արեւմուտքից դեպի հյուսիս-արևելք): Դա Հազարիի օժանդակ Աղօղանի (Չաբուխի) վտակն է: Վտակը Չաբուխ գետին է միանում Մալիբեյ գյուղի մոտ (Չաբուխը Ղեւոնդ Ալի-շանը ենթադրությամբ Նույնացվում է Շապուկի հետ):

Խանածախի գետի աջ ափին, գյուղի այգիների տարածքում, գյուղից մոտ 3 կմ հեռավորության վրա է գտնվում Հին եկեղեցին: Ալեքսանդր կրտսեր Մուսայելյանի առաջնորդությամբ մենք գնացինք այդ սրբավայր:



Շարվածքից երեւում է, որ շատ հին կառույց է: Գտնվում է գրեթե քանդված վիճակում: Պահպանվել են երբեմնի պարսպի հետքերը: Եկեղեցուց մոտ հարյուր մետր հեռավորության վրա կանգուն մի խաչքար կա՝ եղծված արձանագրությամբ:

2020 թ. Նոյեմբերի 9-ից եւ հատկապես դեկտեմբերի 18-ից հետո Հին եկեղեցին հայտնվել է հայ-ադրբեջանական սահմանի վրա:

Բահավորի եկեղեցին, որտեղ գյուղացին անզգուշորեն որդեպան էր դարձել

Բահավորի եկեղեցի այցելեցինք 2019 թ. Նոյեմբերի 1-ին: Գնացինք Խանածախի Անապատի կիրճի հարավարեւմտյան կողմը շրջանցելով: Մայրուղի-Խանածախ ավտոճանապարհից մոտ 3 կմ արեւելք է գտնվում այդ սրբավայրը՝ մի բարձունքի վրա, մենավոր ծառի հարեւանությամբ: Վայրը խանածախցիները կոչում են Անապատի հանդ:

Եկեղեցու հետ կապված մի ավանդագրույց կա, որ վերստին հիշեցինք այնտեղ: Հնարավոր չէ հիշել այդ ավանդագրույցը եւ չհուզվել, չխոնարհվել սրբատաշ քարերով կառուցված փոքրիկ եկեղեցու առջեւ, չհավել մտածո այդ տաճարի մուտքին հենված խաչքարերին...

Իսկ ի՞նչ է պատմում ավանդագրույցը: Այդ հողակտորն իբր պատկանելիս է եղել մի գյուղացու: Նա բաիը ձեռքին գնացել է հողը մշակելու եւ ցանքս անելու: Արեւի տակ ընկած սերմացուի պարկը ծածկել է շորով եւ սկսել աշխատել...

Հորից անսկատ դաշտ է գալիս գյուղացու մանկահասակ որդին եւ ծածուկ մտնում պարկը ծածկած շորի տակ:

Երբ մշակը գալիս է պարկը տանելու, նկատում է, որ շորի տակ ինչ-որ բան է շարժվում: Նրան թվում է, թե շարժվողն օձ է, եւ բաիով ուժեղ հարվածում է՝ սպանելով որդուն:

Տարաբախտ գյուղացին այդ նույն վայրում եկեղեցի է կառուցում, որին ժողովուրդը կոչում է Բահավորի եկեղեցի: 17-րդ դարում կառուցված այդ եկեղեցին հարյուրամյակներ շարունակ հավատավոր խանածախցիների պաշտամունքային վայրերից է եղել: Մեր օրերում Նույնպես հավատավոր խանածախցիներն ուխտագնացության են գալիս Բահավորի եկեղեցի, գալիս են Նաեւ մատաղ անելու:

Վառված մոմի թանձր եւ թարմ հետքերը, որ տեսանք եկեղեցու ներսում, վկայում են, որ Բահավորի եկեղեցին շարունակում է իրեն ձգել հավատավորներին...

Բահավորի եկեղեցին հիմա շատ մոտ է հայ-ադրբեջանական սահմանին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԲ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ



Տեղ գյուղի մերձակայքի Սոփ եղցին, որտեղ ենթադրաբար Մովսես Խորենացու գերեզմանն է

Կա ժողովրդական ավանդություն առ այն, որ Մովսես Խորենացին հողին է հանձնվել Տարոնում՝ Մշո Առաքելոց վանքի արևելյան պարսպի տակ։ Մորուս Հասարայանը ոչ միայն չի վիճարկում այդ վարկածը, այլև հավանական է համարում դրա իսկությունը («Ո՞րն է Մովսես Խորենացու ծննդավայրը» հոդվածը)։

Շրջանառվում է մեկ այլ վարկած՝ Նույն-պես՝ հիմնված Ղազար Փարպեցու պատմության վրա։ Իբր Խորենացու մահից հետո նրա գերեզմանը պղծվել է, իսկ ոսկորները նետվել են գետը։

Մինչդեռ Ստեփան Մախասյանցն ապացուցել է, որ Փարպեցու գրքից էլ է պակասում, եւ խոսքը ոչ թե Պատմահոր, այլ մեկ ուրիշի պղծված գերեզմանի մասին է։

Սակայն կա ժողովրդական մեկ այլ ավանդություն, որի համաձայն Տեղ գյուղի մերձակայքում գտնվող Սոփ եղցին է Մովսես Խորենացու գերեզմանավայրը։

Ըստ Սերո Խանգադյանի «Հայրենապատումի»՝ Տեղ գյուղի բնակիչների պատմելով՝

Պատմահայրը թաղված է Սոփ եղցի մատուռ-եկեղեցում, որը ոչ հեռու է Նրա ծննդավայր Խորեն-խորով գյուղատեղիից, ինչպես եւ Կիրածոր-Գրածորից։

Տեղ գյուղի բնակիչ Ադուրանց Աղալուն, ով 1930-ականներին 80 տարեկան անց ծերունի էր, Սերո Խանգադյանին Խորենացու հետ կապված մեկ այլ գրույց էլ է պատմել։

Ահա՝ «Մովսես Խորենացին Սոփ եղցում ունենում է երկու աշակերտ։ Երբ սրանց կրթում-հասունացում է, մեկին ուղարկում է Արեւմտյան Հայաստան, մյուսին՝ Արցախ՝ լուսավորության գործերով զբաղվելու։ Շատ տարիներ հետո, երբ ինքն աքսորված էր այստեղ եւ ապրում էր ջրաղացում, նկատում է, որ երկու ձիավոր են մոտենում ջրաղացին։ Ճանաչում է, տեսնում է, որ իր աշակերտներն են։ Երբ ձիավորները մոտենում են, ահեղ գոչում է. «Անիծվածներ, ես ձեր միտքը գիտեմ, դուք եկել եք ինձ սպանելու»։

Ձիավորները, սարսափելով Նրա գուշակությունից, որ իրոք այդպես էր, իջնում են ձիերից եւ ծունկի գալով Նրա առաջ՝ մեղա



գալիս...»։

Այս կողմերում ուրիշ գրույցներ էլ կան Մովսես Խորենացու հետ կապված։ Այնպես որ՝ ոչ ոք իրավունք չունի կասկածի տակ առնելու ժողովրդական հիշողությամբ հյուսված ավանդագրույցը՝ Նրա եկեղեցու գերեզմանի մասին, մանավանդ որ Սոփ եղցին գտնվում է Մովսես Խորենացու ծննդավայր գյուղի մերձակայքում։

Այդ վարկածն ընդունել է Նաեւ Վանաձորի պետական համալսարանի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր Վանո Եղիազարյանը (Սյունեցիները եւ հայ հին գրականությունը, «Սյունյաց երկիր», N 19, 2019 թ.)։

Ըստ գրականագետի՝ «Ավանդության համաձայն՝ Խորենացին թաղված է Մշո Առաքելոց վանքում, սակայն կա կարծիք, թե թաղված է Սյունիքում՝ այժմյան Տեղ գյուղից 3 կմ հարավ-արեւելք՝ Խորովի ձոր դարավանդի կանգուն մատուռ-եկեղեցում, որը Տեղի բնակիչները կոչում են Սոփ եղցի»։

Մատենագիտության մեջ գյուղը հիշատակվում է Նաեւ Դեղ, Դեղի, Դըզ, Դըղ, Տեխ, Տեղեր, Տեղի, Տիղ, Տող անվանումներով։ Գտնվում է Գորիս քաղաքից 18 կմ հյուսիս-արեւելք՝ Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի վրա։ Հնում մտնում էր Սյունիք

աշխարհի Հաբանդ գավառի մեջ եւ, ըստ հին հարկացուցակի, Տաթեւի վանքին տալիս էր 12 միավոր հարկ։

Տեղ գյուղը երբեմն կոչում ենք Սյունիքի թագավորության (970-1170 թթ.) առաջին թագուհի՝ Սմբատ Ա արքայի կողակից Շահանդուխտ Ա թագուհու անվամբ, ով Աղվանից տեղի էր, Խաչենի եւ Ուտիքի իշխան Սահակ Սեւադայի դուստրը։

Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը» գրքում պահպանվել է այն վճռագիրը, որով Շահանդուխտ թագուհին Տաթեւի վանքին է նվիրաբերել Տեղ գյուղը 998 թվականին։

Ահա՝ «Հանուն Աստծո ես՝ Սեւադայի դուստր Շահանդուխտ, կամեցա եկեղեցուն Հաբանդ գավառի Տեղ կոչված գյուղը՝ իր բոլոր շրջակա սահմաններով, լեռնով, դաշտով, մյուս եկամուտներով, որ ինձ էր նվիրել իմ թագավոր Սմբատը, եւ ես խոսքս տեղից գյուղ էի դարձրել, իմ երանելի թագավորի վախճանից հետո Նրա հոգու համար Տաթեւի տուրք կենտրոնական վանքին եւ տուրք Նշանին տվեցի Սյունյաց եպիսկոպոս Հակոբի միջոցով։

Այսուհետ ես ու իմ որդիներ Վասակն ու Սեւադան տիրող չենք»։

19-րդ դարավերջին, ըստ Երվանդ Լալայանի, գյուղը պատկանում էր Դոլուխանյանին, Աթաբեկյանին։

ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում ենք գրիչ Մելիքսեթ Երեցի ընդօրինակած ավետարանը, որում գրված է՝ «...ծեռն արկեալ գիրեցի զսաի քաղաքս Տեղ»։ 1645-ին գրված այս հիշատակարանում Տեղն իբրեւ քաղաք անվանելն առնվազն Նշանակում է, որ այն իշխանակալ է եղել։

Տեղում չորս հազար քարատակ-տան մասին է վկայում Սերո Խանգադյանը։


Տեղը Նախիջեւան-Պարտավ ճանապարհի վրա աչքի ընկնող բնակավայրերից էր։

1889 թ. հոկտեմբերին Լեոն, Շուշուց Գորիս ճամփորդելիս, անցել է Տեղ գյուղով եւ «Սյունիքից մի անկյուն» նոթագրության մեջ (Լեո, Երկերի ժողովածու, 8-րդ հատոր, Երեւան 1985 թ., էջ 46) նկարագրել գյուղը։

Տեղ գյուղից մոտ 3 կմ դեպի հարավ-արեւելք, Խորովի ձորի քարափի վրա կանգուն է Սոնեղցի (Սեռի եկեղեցի) կոչվող մատուռ-եկեղեցին. տեղիներն ասում են, թե դա կառուցել է ինքը՝ Մովսես Խորենացին՝ իր ձեռքով, իբրեւ ճգնարան։

Ըստ Մորուս Հասարայանի՝ «Սոնեղցին միանավ, թաղածածկ փոքր եկեղեցի է (7,77 x 4,51 մ արտաքին չափերով), շեշտված պայտածեւ հատակագծերով խորանով, ներառված արտաքին պատերի ուղղանկյուն եզրագծի մեջ (չափագրությունը՝ Լ. Սադոյանի)։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 14



ՄՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԵ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՄԱՀՄԱՆԱՄԵՐՁ

Տեղ գյուղի մերձակայքի Սոփ եղցին, որտեղ ենթադրաբար Մովսես Խորենացու գերեզմանն է

ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 13

Պայտածել է նաեւ խորանի կամարը: Բեմը աղոթասրահից բարձր է 0,5 մ: Խորանն ունի զմբեթարդի տակով ընթացող գոտի, որը շարունակվում է հյուսիսային եւ հարավային պատերի ողջ երկարությամբ: Աղոթասրահը (3,36 x 2,80 մ) թաղակիր կամարներ չունի: Եկեղեցին լուսավորվում է խորանի եւ արեւմտյան ճակատի նեղ լուսամուտներով: Երկաստիճան որմնախարսխի վրա բարձրացող պատերը շարված են սրբատաշ բազալտի քարերից: Եկեղեցին լավ է պահպանվել՝ միայն երկթեք տանիքի քարե սալերն են թափվել: Միակ՝ արեւմտյան դուռն ունի ուղղանկյուն բացվածք, առանց շքամուտքի եւ հարդարանքի: Դռան վերեւում, ներսից պահպանվել են վաղ միջնադարյան հայ ճարտարապետությանը բնորոշ մի այնպիսի տարր, ինչպիսին պայտածել լյուսետն է»:

“Տեղն այն բնակավայրերից է, որտեղ մի քանի անգամ կատարվել են պեղումներ, հնագիտական եւ ազգագրական բնույթի ուսումնասիրություններ

Ըստ Օնիկ Խնկիկյանի՝ «Սոփ եղցի» անվամբ այս վայրում առկա է բնակատեղի, որի արեւմտյան կողմով ձգվում էր 2,4 մ հաստությամբ կիկլոպյան շարվածք ունեցող պարիսպ: Այն պահպանում էր սեղանաձեւ հրվանդանի վերջավորությունը... Հրվանդանի անմիջապես եզրին կանգուն է միջնադարյան փոքր եկեղեցի, որից եւ առաջացել է տեղանքի անվանումը»:

Սոփ եղցուց մի փոքր հարավ-արեւելք գտնվող Կիրածոր-Գրածորում կա մի քարայր, որ ուխտավայր է, որ դարեր շարունակ մեր նախնիները մոմ են վառել, աղոթք արել, մատաղ արել, իիվանդ երեխաներին այնտեղ բերել բուժելու հույսով:

Սոփ եղցուց դեպի հյուսիս է գտնվում Սեւ քերծ-ուխտատեղին: Քարանձավը տեսանելի է Սոփ եղցուց:

Տեղն այն բնակավայրերից է, որտեղ մի քանի անգամ կատարվել են պեղումներ, հնագիտական եւ ազգագրական բնույթի ուսումնասիրություններ:

Վերջին անգամ Տեղի տարածքում պեղումներ է կատարվել 1980-ականներին՝ Օնիկ Խնկիկյանի կողմից: Պեղումների արդյունքները հրապարակվել են «Հնագիտական աշխատանքները Հայաստանի Նորակառուցներում» գրքում:

Տեղի եւ Նրա շրջակայքի հուշարձանները 1947-ի օգոստոսին ուսումնասիրել է Մորուս Հասարթյանը՝ ՀՍՄՀ գիտությունների ակադեմիայի գիտարշավի ընթացքում:

1927-ին Տեղում պեղումներ է կատարել հնագետ Ս. Տեր-Ավետիսյանը:

Տեղում հնագիտական աշխատանքներ է կատարել ճանաչված գիտնական Սեդրակ Բարխուդարյանը:

Տեղում ազգագրական եւ հնագիտական ուսումնասիրություններ են կատարել Երվանդ Լալայանը, Ստեփան Լիսիցյանը:

1898 թ. Տեղ եւ Չաբուխ գյուղերի միջեւ գտնվող դամբարանադաշտում դիպվածաբար աշխատանքներ է կատարել գերմանացի հնագետ Է. Ռյուլերը:

Հ.Գ. Հիմա Սոփ եղցին շատ մոտ է հայ-աղոթեցանական սահմանին...

Սոփ եղցում վերջին անգամ եղանք 2019 թ. հուլիսի 14-ին, մեզ ուղեկցում էր Ալեքսան Շեգունցը, ով գյուղի պատմության ուսուցիչն է:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Մեծ Իշխանասարի՝ երկնքի մեջ մարգարեացած ամենաբարձր եւ սրբացած գագաթը, որ հիմա սահմանաբաժան է

Սյունեցիների համար հազարամյակներ շարունակ նվիրական դարձած Մեծ Իշխանասարի գագաթ բարձրանալը մեզ համար երազանք էր դեռեւս մանկության տարիներից: Իշխանասար լեռնազանգվածի ամենաբարձր գագաթն է Մեծ Իշխանասարը:

Գտնվում է Սյունիքի եւ Աղոթեջանի սահմանագլխին, Գորիս քաղաքից հյուսիս-արեւմուտք: Բարձրությունը 3552 մ է, որոշ աղբյուրներում 3548 մ: Վերին նեոգենի հրաբխական գոյացում է՝ կազմված հիմնականում դափնաքարի, անդեզիտա-դափնաքարի լավաներից:

Լեռնագագաթից դեպի հյուսիս գտնվում է Փոքր Իշխանասարը (3456 մ): Հյուսիս-արեւմուտքում Իշխանասարը 2500-2700մ բարձրության թամբոցով ձգվում է դեպի Շողակի լեռնազանգված: Հարավից մի ճյուղով միանում է Եռաբլուրներ լեռնագագաթներին:

Գագաթային մասում կա խառնարան: Արեւելյան եւ արեւմտյան լանջերը զառիթափ են՝ մասնատված հովիտներով: Արեւելյան ստորոտում է սառցադաշտային ծագման Սեւ լիճը՝ 2666 մ բարձրության վրա:

Սեւ լիճից արեւելք Սագի լիճն է, որը Սեւ

լիճի անհամեմատ փոքր է եւ ամռանը դառնում է սակավաջուր. այդտեղից է սկիզբ առնում Խոզնավար գետը:

Մեծ Իշխանասարը Երեւանից 207 կմ, Վերիշենից 18 կմ, Նորավանից 9 կմ հեռավորության վրա է:

Անվանումը մատենագիտության մեջ

Իշխանասար Մեծը մատենագիտության մեջ գործածվում է մի քանի անուններով՝ Ըշըգլը, Ըշըխլը, Ըշըխլը Մեծ, Ըշըխլու, Իշըխլի, Իշըխլի Մեծ, Իշիխլի, Իշիխլի Մեծ, Իշիխլու, Իշիխլու Մեծ, Իշիկլը, Իշխանասար, Իշիլի Մեծ, Իշիլու, Իշլու Մեծ, Սուրբ Օհաննես, Քաչալաղ, Քեչալաղ, Քիլիսալի:

«Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան) վերոնշյալ տեղեկատվության առթիվ, սակայն, մի վերապահում ունենք. Քաչալաղ, Քեչալաղ անվանումը Մեծ Իշխանասարին վերագրելը կուպիտ սխալ է: Քաչալաղ կամ Քեչալաղ լեռը Գյուխ Ձագեծորո լեռն է, որի գագաթը պարզորոշ երեւում է Գորիս քաղաքից եւ առհասարակ տարածաշրջանի շատ վայրերից: Այդ լեռը, որ 2865 մ բարձրություն ունի, Սեւ լիճն արեւմուտքից երիզող լեռն է:

Մեծ Իշխանասար տանող ճանապարհները

Լեռնագագաթ կարելի է բարձրանալ մի քանի ճանապարհով:

Առաջին երթուղի. Գորիս-Երեւան մայրուղուց Վաղատնի տանող ճանապարհից՝ դեպի հյուսիս-արեւելք:

Երկրորդ երթուղի. Գորիս քաղաքի մուտքից (Նախկին «Ավանգարդ» տնտեսության անասնապահական շենքերի մոտակայքից) դեպի հյուսիս:

Առաջին եւ երկրորդ երթուղիները հատվում են Էշամեյդանում, որտեղից էլ երթուղին ձգվում է հյուսիս:

Երրորդ երթուղի. Վերիշենի տարածքով (Խոզնավար, Վաղատուր եւ Խանաձախ տանող ճանապարհ) բարձրանալ Սեւ լիճ, որտեղից էլ՝ դեպի արեւմուտք:

Չորրորդ երթուղի. Ակների տարածքով բարձրանալ Իշխանասարի ստորոտ, որտեղից էլ դեպի հյուսիս-արեւմուտք:

Ակներից եւ Վերիշենից ձգվող ճանապարհները կարող են հատվել Սեւ լիճից դեպի արեւմուտք գտնվող հովիտներում:

Հինգերորդ երթուղի. Միսիանի Իշխանասար գյուղից (Նախկին անվանումը՝ Ղզլուր) դեպի Միկեթեղ ձգվող դաշտային ճանապարհից դեպի հա-



“

Իշխանասար Մեծը մատենագիտության մեջ գործածվում է մի քանի անուններով՝ Ըշըգլը, Ըշըխլը, Ըշըխլը Մեծ, Ըշըխլու, Իշըխլի, Իշըխլի Մեծ, Իշիխլի, Իշիխլի Մեծ, Իշիխլու, Իշիլի Մեծ, Իշիլու, Իշլու Մեծ, Սուրբ Օհաննես...

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆՔ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ

րավ-արեւելք:
Երթուղիներից յուրաքանչյուրը ենթադրում է ժամանակային տարբեր տեւողություն եւ յուրօրինակ ռելիեֆային առանձնահատկություններ:

Վերելքը սկսեցինք Ակներ գյուղից
Ակները նախկին Բռուն կամ Բուռուն կամ Բռունք գյուղն է՝ Գորիս քաղաքից մոտ 5 կմ հյուսիս-արեւմուտք: Ակների մոտով է հոսում Գորիս գետը, որի հենց այդ հատվածը կոչվում է Վարարակ: Գյուղի մոտով է հոսում «Տերտերի առու» կոչվող ջրանցքը, որ կառուցվել է դեռեւս 10-րդ դարում, իսկ դիմացի բարձրադիր վայրում Ակների երկու ՀԵԿ-ն է: Գյուղի շրջակայքում կան կիկլոպյան կառույցների, միջնադարյան բերդի ու այլ շինությունների հետքեր:

Ակներից ճանապարհի ընկանք վաղ առավոտյան՝ ժամը 6-ին: Գյուղից մինչեւ գյուղի յայլաղներ, որ գտնվում են Մեծ Իշխանասարի ստորոտում, 9 կմ է: Ճանապարհը համեմատաբար լավ վիճակում է:
Վերելքը սկսվում է սրբավայր ձորից, որի աջ կողմում խաչին օսն է կամ Սուրբ Հակոբը: Սրբավայրը ժողովուրդը նաեւ խաչ է կոչել, Ակնին ճիրին խաչը, Ակնին խաչը: Խաչին օսից ձախ Ակներ աղբյուրի ակունքներն են: Խաչին օսի ձորով (քարանձավախմբի արեւմտյան մասով) հոսում է Դաղձուտ գետակը, որը Վարարակի ձախ օժանդակներին է:
Խաչին օսն անցնելու հետո ճանապարհի ձախ մասում մեզ ընդառաջ է գալիս գեղեցիկ մի խաչքար՝ Ակոնի խաչը (հայտնաբերվել է 30-40 տարի առաջ): Խաչին օսից հյուսիս հայտնի Մթնածորն է: Հեռվից երեւում են Ուղտի քաշկառը, Կարմրաքարը:
Մեծ թեքություն ունեցող լեռնալանջը հաղթահարելուց հետո մենք հարթավայրում ենք:
Նախապատրաստական որոշ աշխատանքներ տանելուց հետո ամենագնացով 1-1.5 կմ շարունակեցինք վերելքը, քանի դեռ

մեքենան կարող էր բարձրանալ: Մոտ ժամը 10-ին կանգ առանք լեռան հարավարեւելյան ստորոտի այն մասում, որտեղից այլեւս անհնար էր մեքենայի ընթացքը: Վերելքը պետք է շարունակեինք ձիերով:
Նախապես այդտեղ էր հասել Գուրգեն Մինասյանը՝ վեց ձիով. երեքը քուռկիկ էին՝ եկել էին զամբիկի՝ իրենց մոր հետեւից: Եվ մոտ մեկ ժամ ձիերով ճանապարհ անցանք...
Գորիսի պետական համալսարանի Էներգետիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Գուրգեն Մինասյանը, ով քաջածանոթ է այս կողմերի ամեն սար ու ձորի, ամեն քար ու կապի, գնում էր առջեւից՝ իր Սեւուկ Նժույգով:

* * *

Մի կանաչ, հեքիաթային աշխարհ էր բացվել մեր առաջ, եւ ամեն մի թմբի ու բարձունքի հետեւում Նոր պատկերների էինք ակնաստես լինում, երբեմն դադար առնում եւ վայելում այդ գեղեցկությունը:
Մեր գլխավերելում ժամանակ առ ժամանակ երեւում էին թեւերն ամպերի մեջ թրջված արծիվներ, ագռավներ, ուրիշ հավքերի երամներ: Մի փոքր ավելի ներքեւ արուսյուններն ու տատրակներն էին սեր անում, երբեմն էլ հայրեններ կարդում: Իսկ գետնի վրա... Ծաղիկների ու գույների իրարանցում:
Մեզ տեսնելով՝ քնաթաթախ ու կապույտ զանգակներն էին ամենուր վեր թռել ու բացվել, ալպիական մանուշակներն էին հանդեսի ելել: Ծաղիկների մի մասը մեզ անծանոթ էր, ուստի եւ Գուրգենի պարզաբանումն էինք ժամանակ առ ժամանակ ունկնդրում: Այդ ամենից, ակամա, մեր հոգու կրակն էր թեժանում, այդ ամենից համոզվում էինք վերստին՝ Մեծ Իշխանասարի լանջերը, մերձակա հովիտները միայն բարոյություն եւ մաքրություն են շաղ տալիս:
* * *

Մեկ ժամ անց եռագագաթ Իշխանասարի հարավ-արեւելյան գագաթի ստորոտում

էինք:
Առջեւում մեր ուխտագնացության ամենադժվարին փուլն էր. ամբողջովին քարերով պատված-ծածկված լեռը պետք է բարձրանայինք ոտքով. պահանջվում էր խիստ թեք այդ լանջով բարձրանալ մոտ 700 մետր:
Իրար թիկնած ու ժանիքները սրած քարեր՝ մամռակալած, ծալ-ծալ փեշերով բարձունքներ, միմյանց գլխի թառած ապառաժներ... Վերելքի այդ հատվածը պահանջեց մոտ մեկ ժամ. ժամը 12-ին լեռան առաջին (հարավարեւելյան) գագաթին էինք: Այդտեղից ավելի հստակ ու պարզորոշ երեւաց երկրորդ եւ երրորդ գագաթ գնալու ուղին:
Քիչ հանգստանալուց հետո շարժեցինք դեպի երկրորդ գագաթ: Ավելի պարզորոշ դարձավ, որ լեռան լանջերը ոչ բոլոր տեղերում են ծմեռային շրջագգեստը հանել:
Տեղ հասնելու համար պետք է հաղթահարեինք ձյան շերտը...
Երկրորդ գագաթում արդեն մեզ դիմալուրեց եւ գուրգուրել սկսեց գմրուխտե գեփյուռը, որը, սակայն, երրորդ ու վերջին գագաթ բարձրանալուն զուգահեռ աստիճանաբար փոխակերպվում էր քամու՝ ձորերի տապից խրտնած եւ լեռնագագաթ բարձրացած քամու:
Ուրցն էր իր խոնավ աչքերը բացել եւ հեքիաթային բույր տարածել:
Երկրորդ լեռնագագաթից դեպի արեւմուտք եւ դեպի հարավ մեր առջեւ բացվեց Սիսիանի ամբողջ տարածաշրջանը: Հենց այդտեղից սկսած մեզ հետ, կարծեք, զրույցի բռնվեցին Աղոթարանը, Ուղտասարը, Արամազդը, Կապուռջուղը...
* * *

...Եվ ահա երկնքի մեջ մարգարեացած լեռան ամենաբարձր եւ սրբացած գագաթին ենք:

Ահա Աստծո աստղաջրած՝ սյունիքյան գահաթոռ-վայրում ենք: Այդտեղ երկնքից մեր ականջին բան են ասում ամպերը, դա-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ` ԷՋ 16

Իշխանասարի
քնարական
ընկալումները
Գուսան Աշոտի
ստեղծագործու-
թյուններում

Ճշմարիտ խոսք է՝ հայրենիքը սկսվում է ծննդավայրից: Գուսան Աշոտի համար հայրենիքի կենտրոնը Չանգեզուր աշխարհն է, որն իր վեհանիստ սարերով, երկնքի հետ հավերժ զրուցող լեռներով ներշնչման աղբյուր են նրա համար: Աշոտը զանգեզուրյան շարքի մի շարք ստեղծագործություններով Իշխանասարի գովքն է անում եւ ոգի առնում այդ սրբավայրից:

Սուրբ սար իմ
*Դու այնքան բարձր ես, մով սուրբ սար իմ,
Երկնի հետ կխոսես քո ջնջվ սիրալի,
Չեփյուռը տաղով է տուն
մտնում շորտովում,
Մարերի սարն ես դու՝ շափաղդ երկնային:*

*Երբ մի պահ ննջում եմ, հովերով թռչում եմ,
Մայունով գառների մանկությամբ
լցվում եմ:*

*Աշխարհներ ձեզ գիտեն, իմ սարեր
իմ օրրան,
Յոյացող աստղերդ իմ հոգուն թեւ կտան,
Մարերն ինձ կկանչեն, վանքերն
ինձ կկանչեն,
Ղողանջը զանգերի իմ երգից կլսեն:*

*Կարոտներ, կարոտներ, հոգու
սուրբ աղոթքներ,
Մեր կանչող տաղ դառաք, զարնան
վառ բուրմունքներ:*

*Կանչում եմ սիրահույզ կարոտներ հայրենի,
Չմրուխտյա գառիվառ արոտներ հավքերի,
Աշոտիս վառ միտքը մեծ
սարի բարձունքում՝
Գովերգած անունն իր սիրահույզ լարերին:*

*Կարոտներ, կարոտներ, հոգու
սուրբ աղոթքներ,
Մեր կանչող տաղ դառաք, զարնան
վառ բուրմունքներ:*

Սրբասար
*Հովիվ էի մեր սարերում, ջինջ երկինքն
էր վրանն իմ,
Քարն էր բարձս, անթարթ աչքս սարին
վառվող աստղերին,
Հովն ու ծովը պարզեւեցին աստվածային
ձայներն իմ:*

*Կրկ. Սրինգ առա, սուրբ սեր առա,
ա՛յ հավքեր,
Միրո երգի ակունք դառա, ա՛յ հավքեր,
Սրբասարի փերին ինձ սեր շնջաց,
Հովվականչին իմ մուրազը վրնջաց:*

*Նագելուս հետ ելանք սարը, սարը ժպտաց,
հրա՛ջք էր,
Մարերի մեջ՝ Սրբասարը անգուգական
դրախտ է,
Մի նինջ առա իր տաք ծոցում, խնկաբույր
էր, լույս նախշ էր:*

*Կրկ. Ծով աչքերին երբ նայեցի, ա՛յ հավքեր,
Ասես՝ սար ու ծով չափեցի, ա՛յ հավքեր,
Ասի՛, սիրո՛ւն, շնջացիր, ի՛նչ նազ էր,
Արթնացա ու մրմնջացի, երա՛գ էր:*

*Դու երկնաքեր իմ Սրբասար, հողմերը
քեզ չեն մաշի,
Կռունկների երամը քեզ զառ փետուրով
կնախշի,
Իմ քամանչան քո բարձունքի վեհ շունչն
առավ, կկանչի:*

*Կրկ. Անուրջներս տաղեր դառան,
ա՛յ հավքեր,
Լուսաստղի թեւեր դառան, ա՛յ հավքեր,
Սրբասարի փերին, Աշո՛տ շնջաց,
Լուսաբացին իմ մուրազը վրնջաց:*



ՄՐԲԱՎԱՅԻՐԵՐ, ՈՐՈՆԷ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ

Մեծ Իշխանասարի՝ երկնքի մեջ մարգարեացած ամենաբարձր եւ սրբացած գագաթը, որ հիմա սահմանաբաժան է



ՍԿԻՉՐԸ՝ ԷՁ 15

րերը... Ներքեւում մեր ոտքերի տակ՝ իրար գլխի թառած, իրար ծոց մտած սարեր են, ծորեր, կիրճեր:

Բազմաթիվ լճակներ են՝ մանկան արցունքի պես ջինջ: Դրանց մարգարիտը, անշուշտ, Սեւ լիճն է, Իշխանալիճը:

Ամենագագաթին երկաթե խաչն է. ասում են՝ Սիսիանի տարածաշրջանի Իշխանասար գյուղի երիտասարդներն են տարիներ առաջ տեղադրել՝ Նախկին մատուռի տեղում:

Խաչի ստորին մասում իրար գլխի ժողոված ոչ մեծ քարեր են՝ ներսում վառած մոմեր, կողքը մի քանի չի՛շ՝ ներսում գրվածքներ պարունակող թղթեր, որոնք չբացեցինք ու չընթերցեցինք (ասում են՝ այդտեղ այցի եկող

ուխտավորներն իրենց անուններն ու երագանքները գրում են եւ շշի մեջ դրած պահ տալիս սրբավայրին):

Կար Նաեւ մի քար՝ սրբապատկերով, որ համեմատաբար նոր էր:

Մոտ մեկ ժամ լեռնագագաթին մնալուց, առ Աստված աղոթք բարձրացնելուց եւ հավերժից ու հավիտենականությանից մի պտղունց վայելելուց հետո բռնեցինք հետդարձի ճանապարհը:

Իշխանասար Մեծը՝ Սուրբ Հովհաննես, Սուրբ Ավանես, Սուրբ Օհանես, Սարի սուրբ Վանես, Սարի սուրբ

Մեծ Իշխանասարը կոչվել է Նաեւ սրբա-

սար: Իշխանասարի պաշտամունքային նշանակությանն անդրադարձել է Ստեփան Լիսիցյանը (Չանգեզուրի հայերը, էջ 275). «Վարդավառի օրը հավատացյալները մեծ բազմությամբ դիմում էին սրբազան լեռների գագաթներին գտնված սրբավայրերի այցելությանը: Այստեղ գտնվում էին հրաշագործ գերեզմաններ՝ որեւէ պարզ խաչքարով զարդարված կամ շատ նոր ժամանակների շինված անարվեստ մատուռով հովանավորված: Բարձրանում էին Սարվարդի (Սալվարդի), Իշխանասարի (Իշխիսի) Սուրբ Օհանեսը եւ մանավանդ Խուստուկի գագաթները...»:

Ստեփան Լիսիցյանը ներկայացնում է Նաեւ տոնակատարության ընթացքն Իշ-

խանասարում. «Մեծ Իշխանասարը՝ Մեծ Իշխիսին տեղացիներին հայտնի է Նաեւ որպէս Սըփ Օհանեսի սար: Նա ավելի մատչելի է հյուսիսարեւելյան կողմից, որտեղ նրա ստորոտից ոչ հեռու կանաչ ափերի մեջ ծփում է Սեւ լիճ՝ Կարագյուղի կապտավուն հայելին: Հին ժամանակ այժմյան Գորիսի վարչական շրջանի գրեթէ բոլոր գյուղերից բազմաթիվ ուխտավորներ, ո՛րը ծիծկ կամ ջորիով, ո՛րը բորիկ ոտով, անողորմաբար բզգելով ծանր անասունը, ընտանիքի մեծ ու փոքրով շրջապատված՝ շտապում էին Վարդավառի տունին սարը բարձրանալ: Իրենց բեռը ներքեւում սարի ստորոտին թողնելով, նրանք մի քանի արահետներով շարան-շարան ծգվում էին սարն ի վեր դեպի գագաթը, որտեղ կոպիտ խաչքանդակներով զարդարված վիմաքարեր են կուտակված մի անհայտ գերեզմանի վրա: Այստեղ լույսեր՝ մոմեր վառելով՝ կացնում էին քարերին, վառում էին կոպիտ կավե ճրագների բամբակե պատրույզները, բարեպաշտությամբ համբուրում էին քարերը եւ իրենց ջերմեռանդ աղոթքները դեպի արեւելք առաքելով՝ հայցում էին մուրազների կատարում: Այնուհետեւ իջնում էին սարերից եւ լճից ոչ հեռու մի տափարակ հրապարակի վրա, բերած մատաղացուն մորթում: Քահանաներն իրենց տիրացուների հետ մեկի մոտից մյուսի մոտ վազվզելով՝ իրենց հասանելիք ոչխարի կամ գառան բուրդն ու մորթին էին հավաքում: Շուրջը վիստում էին մանրավաճառներ, խնձորեսկ-ցի աշուղներն այս եւ այն խմբին միանալով՝ իրենց երգի ու նվագի համար մեծարվում էին եւ իրենց վարձատրությունը ստանում»:

Վերջին կանգառում. գրույց ամենալուսավոր, ամենապայծառ, «արցունքի պես ջինջ» Բակունցի մասին

Մեր վերջին կանգառն Ակներ գյուղի յայլադատեղին էր: Սպարտակ Մինասյանը մեր գրույցը տարավ այլ՝ գրականագիտական, ավելի ստույգ՝ Բակունցյան թեմայի ուղղությամբ:

Մորական կողմից Բակունցը սերում է Վերիշենից: Եվ ամենայն



Իշխանասարը՝ Համո Սահյանի բանաստեղծական բնանկարում

Աստծու կողմից արարված այունիքյան քարափները հավերժորեն տեղ են գտել Համո Սահյանի բանաստեղծություններում:

Գյազբեյի, Աղոթարանի, Չորգորի, Սալվարդի, Տատնա գետի, Լորի, Դարպասի ծորի, Որոտանի ու այլ վայրերի շարքում է Իշխանասարը:

2020 թ. հուլիսի 5-ի մեր ուխտագնացության ընթացքում անհնար էր չիլիջել Համո Սահյանի՝ հայրենի եզերքը փառաբանող բանաստեղծությունները եւ, իհարկե, Իշխանասարին նվիրված տողերը:

*Որքա՛ն նման է Արագածին
Կապուտջիղ լեռը այգաբացին:
Ինքը Արան է եռասալապա
Կեսօրվա ժամին լեռը Մայվարդ:*

*Որքա՛ն նման է Արարատին
Իշխանիկ լեռը մայրամուտին...
Միսական աշխարհ-եռավահան,
Մեր հին ու հավերժ լեռնադարան:
* * **

*Եթե չեք իջել դուք երբեւէ
Ու չեք անրջել դուք երբեւէ*

*Աղոթարանիս լճակներում,
Չվող կարապներ, ձեզ չեմ ներում:*

*Եթե չեք իջել թեկուզ մի ժամ,
Խաղաղ չեք ննջել թեկուզ մի ժամ
Իշխանասարիս վրաններում,
Չվող կռունկներ, ձեզ չեմ ներում:*

*Եթե անցել ու չեք մնացել
Եվ ձեր աչքերին չեք նախանձել
Դուք Մթնածորիս եղեմներում,
Չվող ծիծառներ, ձեզ չեմ ներում:
Եթե ձեր հոգուն մեղք եք արել,
Հավերժության պես չեք երկարել
Դուք բանաստեղծի երագներում,
Չվող վայրկյաններ, ձեզ չեմ ներում:
* * **

*Իշխանասար ու Սալվարդ
Խառնվում են մեկ-մեկու,
Դառնում մի սեւ սարահարթ
Սեւ գիշերի մեջ...
Մի եղնիկ է բառաչում,
Վայում է մի հոգնած բու,
Մի ջրվեժ է շառաչում
Իմ հուշերի մեջ:*

Մեծ Իշխանասարի
գագաթի երկաթյա
խաչը



ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԲ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ



Իսկականությանը նա իր Հարություն (Արթին) պապի հետ մանկության տարիներին բազմիցս եղել է Իշխանասարի հովիտներում: Այնպես որ՝ Բակունցը գրականություն էր մտել իր աշխարհից՝ Գորիսից ու Չանգեզուրից ել դրանց հիման վրա էր ստեղծել իր աշխարհը: Սպարտակ Մինասյանն Ակների եւ Վերիշենի տարեցներից է լսել՝ տեղանունները, դարձվածքները, որոնցով վերնագրված են Բակունցի շատ գործեր, գրողը վերցրել է հենց այս վայրերից: Օրինակ «Ալպիական մանուշակ»՝ գլուխգործոցային ստեղծագործությունը...

Նուրբ եւ քնարական այդ պատմվածքի վերնագիրը կարող էր ծնվել միայն Մեծ Իշխանասարի լանջերին փռված դեղնավուն (ծիրանագույն) մանուշակներից: Միայն այդ մանուշակների ազդեցությամբ կարելի էր կյանքի բանաստեղծական ընկալման այն-

պիսի համադրության հասնել, որ տեսնում եք պատմվածքում: Կամ «Կարմրաքար» վեպը, որից մեզ հատվածներ են հասել:

Անշուշտ, վեպը Կարմրաքար անունով գյուղի մասին է, որն ավելի ճիշտ 1914-ից առաջ եղած հայկական գյուղերի ընդհանրական պատկերն է:

Արդյո՞ք այդ տեղանունը Բակունցը չի վերցրել Մթնածորում գտնվող Կարմիր քարից, որ նաեւ Կարմրաքար է կոչվում: Իսկ Մթնածորի ասքը (ե՛ւ պատմվածքների շարքը, ե՛ւ Նույնանուն պատմվածքը, ե՛ւ «Մթնածորի չարքը») ... Հիշո՞ւմ եք, թե ինչպես է սկսում «Մթնածորը» պատմվածքը. «Մի ուրույն աշխարհ է Մթնածորը...»:

Այդ վայրերում 20-րդ դարասկզբին դեռ հզոր էին առասպելները, հեթանոս դարերի շունչը, որոնց ազդեցությունը տեսնում ենք «Մթնածորը» շարքի պատմվածքներում:

Արդյո՞ք Իշխանասարի ստորոտում

“

*Սև լիճ, Կարագյուլ, Ղարագյուլ:
Գտնվում է Մեծ Իշխանասար
լեռան հարավարևելյան լանջին՝
2658 մ բարձրության վրա:
Անհոսք քաղցրահամ լիճ է:
Մակերեսը մոտ 2 կմ²
է, երկարությունը՝ 1,6
կմ, լայնությունը՝ 1,2 կմ,
առավելագույն խորությունը
մոտ 7,5 մ է, ջրի ծավալը՝ ավելի
քան 9 միլիոն մ³:*

գտնվող Մթնածոր տեղանունը չէ, որ գրական աշխարհ է տեղափոխել Բակունցը: Ի վերջո Մթնածորը դա ծոր չէ սոսկ, այլ...

Մթնածորը Չանգեզուր-Սյունիք աշխարհն է: Մթնածորը Բակունցի համար դարձել է մեծ աշխարհ, մի ուրույն աշխարհ: Եվ այնքան էր Բակունցը խորացել այդ աշխարհում, որ Չարենցը զգուշացրեց՝ «Աշխատիր, սակայն, որ մութ այդ ծորում/ Քո պայծառ ուղին անդարձ չկորչի»:

Հ.Գ. ...Երանի՜ այն հավերթին, որ ամեն օր բարձրանում են Իշխան Մեծ սարի գագաթ: Երանի՜ այն ամպերին, որ ժամանակ առ ժամանակ գրկում են Մեծ Իշխանասարի կատարները:

Երանի՜ այն ուխտավորներին, որ նոր-նոր պիտի բարձրանան Սրբասարի գագաթ:

**ՍԱՏՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
5 ՀՈՒՆԻՍԻ 2020**

Սյունյաց աշխարհի մարգարիտը՝ Մեւ լիճը կամ Իշխանա լիճը, որ նաեւ Սրբոց սարի ծովակ է կոչվում

Մեւ լճի մասին շատերն են գրել, բայց անգերազանցելի ենք համարում Գրիշա Մանուկարյանի եւ Տիգրան Գրիգորյանի հեղինակած լեգենդը «Մեւ լիճ» վերնագրով, որը, իրապես, գեղարվեստական կատարելության հասցված գործ է, որն էլ ներկայացնում ենք ստորև:

*Իշխանասար լեռան լանջին
Կա մի լճակ գեղեցկատես,
Հատակը՝ սեղմ, ինքն՝ անչափ ջինջ,
Հսկայական՝ ն ձագարի պես:*

*Նրա շուրջը ծաղկունքի ծով
Ու գով բուրմունք է ո՞ղջ ամառ...
Չեփյուռաշունչ այիքներով
Նա հովիտն է պահում դալար:*

*Ինքը՝ լազուր, շուրջը՝ ատլաս,
Ինչպես շրջած կապույտ վրան,
Կարծես երկնից պոկված մի մաս
Ընկել է այդ լեռան վրա:*

*Դարեր ի վեր այդ լիճը մով
Չովացրել է սարվորին,
Գառ ու մաքի ջրել սիրով
Ամառային շոգ կեսօրին:*

Բայց լիճը չէ, որ ինձ գերել,

*Խոտվել է հոգիս խաղաղ,
Մի կակիծ է ինձ պարունել՝
Մի պատմություն արցունքաշաղ:*

*Ձեզ կպատմեմ ես այն մասին,
Թե ինչու՞ է կոչվել նա Մեւ,
Երբ դարերով շողը լույսի
Մինչեւ լճի խորքն է հասել...*
* * *

*Երկու ջահել իրար տեսան,
Իրար անկեղծ սիրեցին...
Մոջիկն ասես՝ սարի շուշան,
Տղան՝ բարդի սլացիկ:*

*Հանդիպում էր ամեն գիշեր
Միրած գույգը լճափին,
Բերում իրար գգվա՛նք ու սեր,
Ինչպես գարունն ու արփին:*

*Բայց հրճվանքն էլ ունի սահման,
Նրա հետ է վիշտն արթուն,*

*Այնպես, ինչպես լույս ցերեկվան
Միշտ գիշերն է հաջորդում:*

*Երբ աղջկա հայրն իմացավ
Միտ մասին այդ գույգի,
Մի իսկական դահիճ դարձավ՝
Անզգա ու անհոգի...*

*Ու «անպատկառ» իր աղջկան
Այնքան ծեծեց գայրույթից,
Որ մեծացավ այդ լիճն անգամ
Նրա թափած արցունքից:*

*Հետո նետեց մի մութ վրան,
Ինչպես ժայռի մի խոռոչ,
Որ սպանի սերը նրա՝
Դեռ չծաղկած, դեռ բողբոջ:*

*- Հարու՛ստ մարդու պիտի գնաս, -
Թնդաց հոր ձայնը դաժան, -
Ի՞նչ ես կպել խեղճ ու տիաս
Էդ հովիվին անարժան...*
* * *

*Բայց աղջկա սերը մաքուր
Չորանում էր ինքնակամ,
Ինչպես պարարտ հողի գրկում*

Մերմն է աճում ժամ առ ժամ:

*Մինչդեռ տղան, գիշեր ու գօր,
Ընկճված ու թեւաթափ՝
Տվալտում էր մտամոլոր,
Մտքով հասնում ավից ավի:*

*Տեսնում նրան՝ անօգ տեսքով.
Դեմքը՝ մռայլ, աչքը՝ թաց,
Գուռ չունեցող իր հոր կամքով
Եղնիկի պես վանդակված:*

*Լճի ափին նստում էր նա
Ու տարվում իր սրինգով
Եվ մոռանում վիշտը մի պահ
Իր սրտատուչ նվագով:*

*Բայց աղջիկը չէր երեւում,
Ասես երբե՛ք չէր եղել...
Խեղճն այն ափին՝ սերը սրտում,
Ծով արցունք էր հեղեղել:*

*Երբ տղայի ցավն անհատնում
Խորանում է օրեցօր,
Մի գիշեր էլ տղան տրտում
Լիճն է մտնում խենթօրոր:*

*Ու լողալով ուզում է նա
Հասնել ավի դիմացի,
Ուր աղջիկն էր այրվում մեռնակ՝
Առանց ծխի ու բոցի:*

*Բայց կենտրոնում այդ լճակի
Խորասուզվեց խեղճ տղան,
Առանց թաղման ու թափորի
Լիճը դարձավ գերեզման...*
* * *

*Հենց ի կակիծ այս պատմության՝
Անվանեցին նրան «Մեւ լիճ»,
Անունն՝ ինչպես գույնը մահվան,
Ինքը՝ հովվի սիրտ պես ջինջ:*

*Իսկ որ լճի ջուրն աղահամ
Չի՞ քաղցրանում դար ու դարեր,
Մյու արցունքն է այն աղջկա
Լճում աղի շերտեր թողել:*

*Եվ սրինգն են գտել մի տեղ
Հեռու՛ - հեռու մի գյուղակում,
Ասում են թե՛ երկար ու նեղ
Անցք է բացված լճի խորքում:*

*Երբ կեսօրին ամառային
Մաքիններն են ջրի վազում,
Ասես՝ փնտրում են տղային,
Որին աղջիկն է դեռ սպասում...*

■

ՄՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԷ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ

Իսկ Աղոթարանում հոգերուիս աղոթք էր...

2020 թ. օգոստոսի 29-ին «Սյունյաց երկիրը» ուխտագնացություն կատարեց Աղոթարան սուրբ սարի լեռնագագաթ, որտեղ հնամենի մատուռների հետքեր կան, կենդանակերպով արձաններ, բազիլների եւ ատրուշանների տեղեր, ժայռապատկերներ եւ այլն:

Մինչեւ լեռնագագաթ հասնելը եղանք սրբասարի լանջին գտնվող Սուրբ Հարություն Նորակերտ մատուռում, իսկ լեռնագագաթից իջնելիս՝ Մատաղ աղբյուրում՝ ճանաչված իբրեւ սուրբ աղբյուր:

Մեր ստեղծագործական խմբին էր միացել Սյունյաց աշխարհի երեւելի մտավորականներից մեկը՝ Բռնակոթ գյուղի միջնակարգ դպրոցի Նախկին տնօրեն (1975-94 թթ.), Բռնակոթի Նախկին գյուղապետ (1999-2002 թթ.) Սամվել Սահակյանը:

Աղոթարան կամ Սալվարդ կամ Սարվարդ սրբասար կատարած մեր այցը հնարավոր դարձնելու համար երախտագիտություն ենք հայտնում ԵԿՄ Սյունիքի կառույցի ղեկավար, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանին: Իսկ փորձառու վարորդ Պարգեւ Ղարիբյանը մեզ սրբավայր տարավ Աշոտավան-Հացավան-Թասիկ-Արեւիս երթուղով:

Դա Աղոթարան կատարած մեր երկրորդ այցն էր: Ուխտագնացության ճանապարհին հանդիպեցինք Հայաստանի զինված ուժերի այն զորականներից մի քանիսին, ովքեր մեր հանրապետության եւ Նախիջեւանի միջեւ ընկած այդ տարածքում պաշտպանում են հայոց սահմանների անվտանգությունը:

Հնարավոր չէր տեսնել այդ զինվորներին ու սպաներին, նրանց հետ զրուցել, նրանց ծառայության հանգամանքներին իրազեկ դառնալ, նրանց բարոյահոգեբանական վիճակին ու մարտական պատրաստվածությանը հաղորդակցվել ու չհպարտանալ, չոգեւորվել:

Չհնվորները ողջունեցին «Սյունյաց երկիր» այցը եւ խնդրեցին մեր պարբերականի միջոցով ընթերցողին փոխանցել հետեւյալը. «Մնուր կանգնած ենք մեր դիրքերում, պատրաստ ենք հետ մղել ցանկացած ոտնձգություն, իսկ Սյունիքի բնակիչներին խաղաղ ու ստեղծագործ աշխատանք ենք մաղթում»:

Ե՛վ Աղոթարանի լեռնագագաթի մատուռում, ե՛ւ Սուրբ Հարություն Նորակերտ մատուռում միասին մոմ վառեցինք ու աղոթք բարձրացրինք առ Աստված՝ մեր հրաշալի զինվորների ու քաջարի հրամանատարների համար, ովքեր ամենայն գիտակցությամբ ու պատասխանատվությամբ ապահովում են Հայաստանի Հանրապետության պետական սահմանի այդ հատվածի անձեռնմխելիությունը:

յունը:

Աղոթարան կատարած առաջին այցը. գնացինք Սարվարդ գյուղով... Աղոթարանը Նաեւ Սալվարդ (Սարվարդ) է կոչվում: Լեռան ստորոտում է Սալվարդ գյուղը:

Լեռան գագաթին պահպանվել է մի սրբատեղի՝ առանց շաղախի: Դեռեւս հեթանոսության շրջանում սրբատեղին համարվել է պտղաբերության եւ հատկապես անձրեւների առատության հովանավոր, որովհետեւ Սիսիանի տարածքի տեղումները ձնափոխվում են լեռնաշղթայի այդ հատվածում:

Ստորոտից մինչեւ գագաթ ծածկված է

մինչ այդ՝ Սալվարդի բնակիչների ու Աղոթարանի փեշերին հանգրվանած յայլաղավորների հետ:

Առաջին այցից հետո «Սյունյաց երկիրում» հետաքրքիր մի հոդված էր տպագրել Ալվարդ Մեսրոպյանը: Մեկ-երկու քաղվածք հոդվածից:

...Քարքարոտ, անանցանելի ճանապարհով գնում ենք Սիսիանի տարածաշրջանի Սալվարդ գյուղ: Գնում-գնում ենք... Վերջապես... Ահա եւ գյուղն ու Նրա կենտրոնը (մարդիկ գյուղի կենտրոնը համարում են գյուղապետարանի շենքի մոտ գտնվող տաճարը):

Այստեղ դադի ծով է, դադի համբույր ու դադի զգվանք: Եվ օրվա օրհնանքն ասես կաթ-կաթ թափվում է դադի թփերի վրա եւ տաճարածվում գյուղով մեկ, ու օրվա օրհնությունն ամեն տուն է մտնում: Ու Նաեւ այն տները, որոնց տները գնացել են՝

ուր նրանց աչքը կտրի... Օրվա օրհնությունն այդ լքված տները կպահի՝ մինչեւ տները հետ կդառնան, քանի որ մի օր անպայման «Հայաստան ասելիս» նրանց «շրթունքը» ճաքելու է...

...Մենք դեռ ճամփա ունենք անցնելու: Թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը մեկ օր առաջ է Նպատակ դրել՝ բարձրանալ Աղոթարան՝ Բարձրյալի հետ զրուցելու, սահյանական ոգուց «ջուր խմելու»... Հրաժեշտ ենք տալիս սարվորներին:

Հեշտ չէր վերելքը, բարձրանում ենք, բարձրանում... Գյուղապետ Վարդան Մեսրոբյանն ու զինվորական Նարեկ մեզ հետ են, չենք մոլորվի: Քարքարոտ ճանապարհը «Նիվայի» «Միսն» ուտում է: Սամվել Ալեքսանյանը երկու ոտքը դրել է մի չմուշկում անպայման Աղոթարան պիտի բարձրանանք: Ճանապարհի ցից քարերն ուր որ է կմտնեն մեքենայի անիվների մեջ, եւ մեքենան...

Մեքենան տեսնելով՝ կաքավների երամը թռավ խոտերի մեջից... Ու դարձյալ հիշում եմ Սահյանին՝

Հավք ուզեիր, նա քեզ կտար

Մեկի տեղ հագարը,

Հավքի բույն էր փեշից-կատար

Աղոթարան սարը:

Հետո ծտերի երամը թռավ, հետո... Իրոք, հավքերի թագավորություն է Աղոթարան սարը:

Ներքեւում սարվորների մոտ, չոր էր չորս բուրդը: Իսկ այստեղ՝ լեռնագագաթ տանող ճանապարհին, ասես ծաղկի ցուցահանդես է բացվել:

Բայց Աղոթարանը միայն ծաղիկներով չէ, որ պահում է աշխարհը: Այն Նաեւ երկինքն է իր ուսերին դարեր շարունակ պահում: Եվ աղոթք է Աղոթարան սարում: Իսկ աղոթքն այդ հայոց զինվորի Նվիրումն է, խիզախությունը, անչափելի սերը հայրենիքի ու ժողովրդի հանդեպ: Լեռնագագաթից նրանք հսկում են հայոց սահմանները...

Օրն արդեն մայրամուտ էր թեքվում, երբ հրաժեշտ տվեցինք երկրի արթուն պահապաններին...

Առաջին այցից հետո լույս տեսավ Նաեւ Սամվել Ալեքսանյանի հոդվածը՝ «Աղոթարանի լեռնագագաթին հայ զինվորների հաստատուն ներկայությունն է» վերտառությամբ, որը ներկայացնում ենք ստորև:

...Հայաստանի Հանրապետության եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ ձգվող պետական սահմանի մի հատվածը համընկնում է Սիսիանի տարածաշրջանի արեւմտյան սահմանին:

Պետական սահմանի պաշտպանության համար հիմնված հենակետերից (մարտական դիրքերից) մեկն էլ Աղոթարանի լեռնագագաթին է՝ 3161.8մ բարձրության վրա: Մարտական այդ հենակետը տարբերվում է մյուս հենակետերից Նախեւառաջ իր իշխող դիրքով: Այդտեղից պարզ, ինչպես ափիղ մեջ, երեւում են մերձակայքում գտնվող եւ՝ մեր, եւ՝ Ադրբեջանի պաշտպանական կառույցները: Առանց հեռադիտակի կարելի է տեսնել հակառակորդի՝ մարտական դիրքեր ելումուտ անող մարդկանց, եկող-գնացող մեքենաներին:

Արցախյան պատերազմի առա-



պայիական արոտներով, փեշերին կան սառնորակ աղբյուրներ, սառցահամ լճեր:

Գագաթը վեղարածեւ է, որից քիչ ներքեւ Մատաղ աղբյուրն է: Այնտեղ ուխտավորները մատաղ են արել եւ ակնկալել առատ տեղումներ ու բարեբեր տարի:

Սիսիանում հին ժամանակներում այսպիսի մի սովորույթ կար. երբ որեւէ մեկը պիտի երդվեր, երեսը պետք է դարձնէր դեպի Աղոթարան ու Նոր միայն խաչակնքեր՝ չմեղանչելու եւ ճշմարտությունն ասելու Նպատակով:

Հայաստանի անկախության հռչակումից ի վեր այնտեղ է գտնվում հանրապետության զինված ուժերի մարտական դիրքերից մեկը:

2017թ. հուլիսի 29-ին լեռնագագաթին բարձրացվել է Հայաստանի Հանրապետության պետական դրոշմ. դա ծագումով սալվարդեցի, ռուսաստանաբնակ Կարեն Օսիպովի Նախաձեռնությունն էր:

Թերթի ներկայացուցիչները եւ համայնքի ղեկավարը հանդիպել են մարտական դիրքերում հերթապահող զինվորների, իսկ



ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԷ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ



Ոչ թե Ուղտասար, այլ Ուխտասար, քանզի դարեր շարունակ սրբավայր է եղել

Առաջին անգամ Ուխտասար այցելեցինք 2013 թ. օգոստոսի 25-ին: Այդ ժամանակ ժայռապատկերների թանգարանում պատահաբար հանդիպեցինք գերմանական մի արշավախմբի անդամների, ովքեր երկրորդ տարին էր, ինչ աշխատում էին ժայռապատկերների բաց թանգարանում եւ փորձում էին բացահայտել հազարամյակների պատմություն ունեցող ժայռապատկերների գաղտնիքները: Ըստ նրանց՝ դրանք մեզանից միևնույն վեց հազար տարի առաջ ապրած մարդու պատկերավոր մտածողության դրսևորում են:

Սյունիքի ժայռապատկերների յուրահատկությունն այն է, որ դրանք փորված են

2500-3500 մ բարձրություններում եւ ձգվում են կիլոմետրեր:

Գերմանական արշավախումբը երկու տարվա ընթացքում հասցրել էր Սեպասարում փաստագրել 1000 քարաբեկոր՝ 6500 պատկերով: Փաստագրվեց նաեւ Սեպասարի մոտակայքում գտնվող Նազեի հրաբխային խառնարանի մերձակա՝ փորագրություններ պարունակող եւս 600 քարաբեկոր:

* * *

Երկրորդ անգամ Ուխտասար այցելեցինք 2020 թ. սեպտեմբերի 5-ին: Մեզ առաջնորդում էր ճանաչված գեղանկարիչ, հայրենի եզերքի նվիրյալ Աշոտ Ավագյանը:

Այս անգամ Ուխտասար գնացինք ոչ թե Իշխանասար գյուղով, այլ Սառնակունքով՝ Գորիս-Երեւան մայրուղուց թեքվելով աջ (դեպի հյուսիս): Վերադարձանք Սպանդարյան գյուղի արոտավայրերով. բարեհարմար ճանապարհ է:

Ամենաարտասովորը, որ նկատեցինք ճանապարհին, մի քանի հարյուր հեկտար ընդգրկող ժայռաբեկորների կուտակումներն էին՝ քարերի ցրոնները եւ քարացցունքները, որոնց տեղացիներն անվանում են Քարքար կամ քարերի ծով: Տեղացիները նաեւ Փարի չընզլ են անվանում այդ տարածքը:

Մեկ այլ արտասովոր տեսարանի էլ ակա՛նատես եղանք: Քարքարի ամբողջ տարած-

քում արծիվների իսկական թագավորություն էր: Ժամանակ առ ժամանակ մեր առջեւից կամ քարակույտերի միջից արծիվներ էին ելնում: Ասում են՝ քարերի անծայրածիր այդ ծովը տեսնելուց հետո է Համո Սահյանի մեջ հղացել «քարային» երկու բանաստեղծությունը, որոնք, մեծ իմաստով, Սյունյաց աշխարհի այդ հատվածի բնանկարն են:

«Քարը» բանաստեղծությունից՝ երկու քառատող.

Քարը՝ երամ, քարը՝ նախիր,

Քարը՝ հոտ:

Քարը՝ հոտաղ, քարը՝ հովիվ,

Քարը՝ հող:

Քարը՝ օջախ, քարը՝ կրակ,

Քարը՝ բոց:

Քարը՝ խորհուրդ, քարը՝ խրատ,

Քարը՝ փորձ:

Աշոտ Ավագյանը, ի դեպ, իծագրերի եւ ժայռապատկերների թանգարանի տեղանքի Ուղտասար անվանը համաձայն չէ: Նրա կարծիքով՝ վայրը ոչ թե Ուղտասար է կոչվում, այլ Ուխտասար, քանզի դարեր շարունակ դա եղել է սրբավայր, ուխտ գնալու վայր: Իսկ ուխտավայրն Ուղտասար կոչելը սովորական վրիպակ է եղել, այլ ժամանակի գաղափարական ազդեցությամբ ու սահմանափակումներով կատարված ոչ գիտական սրբագրում՝ հիմքում դնելով մոտակա լեռնագագաթի սապատավոր (սապատուն) դիրքը, իբր տարածքն ուղտի սապատ հիշեցնող լեռան անունով է:

Աշոտ Ավագյանը, այդուհանդերձ, երախտիքի խոսքեր հնչեցրեց Գ. Կարախանյանի եւ Պավել Սաֆյանի հասցեին, որոնց ջանքերով առաջին անգամ գիտական ուսումնասիրության ենթարկվեցին Ուխտասարի իծագրերը եւ ովքեր հեղինակեցին «Սյունիքի ժայռապատկերները» հրաշալի գիրքը՝ լավագույնս ներկայացնելով Ուխտասարի ժայռապատկերների թանգարանը:

Ուխտասար բարձրանալով Սառնակունք գյուղի արոտավայրերով մեր առաջին կանգառը եղավ Նազեի լեռան ստորոտը: Այնտեղ նույնպես ժայռապատկերներով քարեր էին...

Աշոտ Ավագյանի գորավոր ամենագնացը մեզ բարձրացրեց Նազեի լեռան գագաթ: Այնտեղից դեպի հյուսիս-արեւելք մեր առջեւ բացվեց մի հեքիաթային տեսարան՝ Ալ լիճը, որը մատենագիտության մեջ նաեւ այլ անուններով է հիշվում՝ Ավագյուղ, Ավագյուլար: Գտնվում է Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանագլխին, Դարաբաղի բարձրավանդակի կենտրոնական մասում:

...Այդտեղ որերորդ անգամ համոզվեցինք՝ աշխարհի ամենագեղեցիկ անկյունը Սյունիքն է, ուրիշ նման երկրամաս-լեռնաշխարհ դժվար թե գտնվի: Եվ հիշեցինք Մեծն զուսանի խոսքերը՝ «Հազար ու մի երգում գոված սար եմ տեսել, բայց միշտ քո կարոտն եմ քաշել՝ Սյունյաց սարեր»:

* * *

Ուխտասար (Սատանաքար). մատենագիտության մեջ նաեւ՝ Դավաբոյնի, Դավաբոյնու, Դավագյոզ, Դավագյոզի, Դեւեգյոզ, Ուղտասար եւ այլն: Լեռնագագաթ Սյունյաց (Չանգեզուրի) լեռնաշղթան, բարձրությունը՝ 3169 մ, ունի



Փոքր Ալ լիճը գտնվում է Սյունիքի մարզում՝ Հեղզաց սարավանդի կենտրոնական մասում, 2947 մ բարձրության վրա, Սառնակունք գյուղից հյուսիս-արևելք, Ծար գյուղից և Ջերմաջուր առողջարանային ավանից դեպի հյուսիս: Մակերեսը՝ 53 հա, միջին խորությունը՝ 1,88 մ:



ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆՔ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐԱ



հրաբխային ծագում:

1968 թ. Երեւանի պետական համալսարանի հնագետները Սատա-նաքարի թիկունքի բարձրադիր լճակի հա-րավային ափի մոտ՝ ծորի պռնկի վիթխարի ժայռի վրա, հայտնաբերեցին 2 հազարից ավելի ժայռապատկեր, որոնք վերաբերում են մ.թ.ա 5-3-րդ հազարամյակներին: Ժայ-ռապատկերների վրա փորագրված կենդա-նիկների հստակ գծագրումներն ու կոմպոզի-ցիան, տեսարանների բազմազանությունը մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Սատանաքարի հյուսիսային կողմի հայտնաբերվել են նախնադարյան մարդու բնակարան- քարայրեր: Հնագետներն այս լեռն անվանել են Ուղտասար:

* * *

Ըստ ՀՍ հանրագիտարանի (հատոր 12, էջ 247)՝ ժայռապատկերները ցրված են հրաբխային խառնարաններից գոյացած լճակների շուրջը, ծորակներում ու դարա-վանդներում, ավելի քան 2 հազար պղնձա-գույն կամ սեւ ժայռաբեկորների հորիզոնա-կան եւ ուղղահայաց մակերեսներին:

Բնօրինակներից 4-10 անգամ փոքր պատկերները փորված են 2-6 մմ խորութ-յամբ եւ 2-20 մմ լայնությամբ խորագծերով: Քարերի մի մասը, որոնք մոտ են եղել անաս-նապահների վրաններին, ծածկված են հո-ղաշերտով: Հնագույն ժայռապատկերները վերաբերում են նեոլիթ-էնեոլիթյան դարաշր-ջաններին (մ.թ.ա 6-4-րդ հազարամյակներ):

Առավել մեծ քանակություն են կազմում բրոնզեդարյան (մ.թ.ա 3-2-րդ հազարամյակ-ներ) պատկերախմբերը, որոնք ներկայաց-նում են Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերի արտադրական, կենցաղային, որ-սորդությանը, պաշտամունքին եւ այլ բնա-գավառների վերաբերող տեսարաններ:

Գերակշռում են հատկապես նետ ու աղեղով, պարզ՝ որսորդական այլ պարա-գաներով (օղապարաններ, թակարդներ եւ այլն) որսի տեսարաններին (անհատական, շուրջկալ), փոխադրամիջոցներին (սայլերի տարատեսակներ եւ այլն), տիեզերական եւ կրոնական պատկերացումներին (Արեգակի, Լուսնի եւ այլ լուսատուների պաշտամունք), ծիսական արարողություններին առնչվող թեմաները:

Կենդանիների (բեզդարյան այծ, մուֆլոն, վիթ, եղջերու, ցուլ, ձի, վարազ, շուն , գայլ, հովազ, առյուծ եւ այլն) պատկերներում կուռ ոճավորմամբ արտահայտված են դրանց բնորոշ առանձնահատկությունները, շարժ-ման պահերը: Իբրեւ ոճական յուրահատ-կություններ են դիտվում ցուլերի՝ վերելից դիտարկված պատկերները, ծավալային (եռանկյունի) մանրամասներով կառուցված կենդանապատկերները (այծեր եւ այլն):

Սակավաթիվ խումբ են կազմում թռչնա-պատկերները:

Ուղտասարի ժայռապատկերները՝ իբ-րեւ նախնադարյան արվեստի կարեւոր հու-շարձաններ, արժեքավոր սկզբնաղբյուր են Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերի հոգեւոր եւ նյութական մշակույթի պատ-մության ուսումնասիրման համար:

* * *

Հենգել Առաքելյանն Ուղտասարի ժայ-ռապատկերների մասին. Սիսիանի պատմա-կան արժեքների թվում առանձնապես կա-րեւորություն եւ մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժայռապատկերները: Դրանք գտնվում են Սառնակունք գյուղի հեռավոր ամառային արոտավայրերում, Այա գյուղի հա-րեւանությամբ, երկու լեռան՝ Ուղտասարի եւ Տաքքի վրա: Այդ լեռների բարձրությունը ծովի մակերեսից հասնում է 3000-3300 մետրի: Ամբողջ լեռնազանգվածները պատ-ված են հազարումի տեսակ քանդակ-նկար-ներով:

Ըստ պատմաբաններ Գ.Կարախան-յանի եւ Պ. Սաֆյանի՝ ժայռապատկերները բաժանվում են երկու խմբի: Առաջին խումբ ժայռապատկերներն արվել են ավելի վաղ՝ մեր թվարկությունից առաջ 5-4, իսկ երկ-րորդ խումբը՝ 3-2-րդ հազարամյակներում:

Եթե հիմք ընդունենք այդ տեսակետը, որ դեռեւս միակն է, ուրեմն առաջին ժայռա-պատկերներն այդտեղ արվել են մեզանից շուրջ 7 հազար, իսկ ավելի ուրիշը՝ 4 հազար



մեջ մխրճված լեռներ են հանել:

«Սիսիանի համառոտ հանրագիտա-րան», Երեւան 2004, էջ 65-66:

* * *

Գյուղ Իշխանասար, որտեղով անցնում է Ուխտասար գնալու (թեւեւ դժվարին) ճա-նապարհը. նախկին անվանումը՝ Ղըրջուղ, Կղջուղ: Գտնվում է Իշխանասար լեռան ստորոտային մասում, Սիսիան քաղաքից 7 կմ հյուսիս (Գորիս-Երեւան ավտոմայրուղուց 1.5 կմ աջ):

Ըստ Ծջորս Դավթյանի՝ «Որեւէ հնագի-տական արժեք ներկայացնող շինություն կամ վայր այդ տարածքում չի պահպանվել»: Եվ, այդուհանդերձ, գյուղի շրջակայքում գտնվող հին ամրոցների եւ բնակատեղինե-րի ավերակները վկայում են, որ տարածքը բնակեցված է եղել դեռեւս հին ժամանակնե-րում:

Մինչեւ 1988 թ. գյուղը բնակեցված է եղել աղբեղանցիներով, իսկ ավելի ստույգ՝ սուն-նի թուրքերով: 1989 թվականին, նրանց տե-ղափոխումից հետո, այդտեղ են հաստատ-վել Աղբեղանից գաղթած մոտ հարյուր հա-յ փախստական, ինչպես նաեւ շրջակա գյու-ղերից հա-յ ընտանիքներ:

Խորհրդային իշխանության վերջին տա-րիներին գյուղը միավորված էր Սիսիանի անասնապահական պետական տնտեսութ-յանը: 1984-ից մինչեւ 1991 թ. վարչական տեսակետից ենթարկվում էր Ուզի գյուղու-վետին: 1990-ից գյուղը ստացել է նոր անվա-նում Իշխանասար:

Հ.Գ. Ուխտասարի մատույցներում մեզ միացավ ուղեւորների մի խումբ՝ երկու մեքե-նայով: Երիտասարդները եկել էին մայրաքա-ղաքից՝ հատուկ նպատակով՝ ծանոթանալու ժայռապատկերներին:

Ուխտասարի լճի մոտ փոքր-ինչ հանգստա-նայուց հետո բաժանվեցինք: Մենք բռնեցինք հետդարձի ճանապարհը, իսկ նրանք (մեքե-նաները թողնելով լճի մոտ) ճանապարհվե-ցին դեպի Ծղուկ լեռան գագաթ, որ Ուխտա-սարից արեւելք է:

ՊԱՏՐԱՍՏԵՑ ՍԱՍԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ

տարի առաջ: Այդ փաստը եւս մեկ անգամ գալիս է ապացուցելու այն հանգամանքը, որ դեռեւս նախնադարում, մինչեւ հայոց պե-տականության ծնւթիւրումը, Սյունիքը եղել է ոչ միայն Հայկական լեռնաշխարհի ամենա-վաղ բնակեցված տարածաշրջաններից, այ-լեւ՝ քաղաքակրթության օրրաններից մեկը:

Ժայռապատկերներից յուրաքանչյուրն արվեստի ուրույն մի գործ է: Դրանք ունեն տարբեր փորվածք: Փորագրության խորութ-յունը տատանվում է մեկից մինչեւ վեց միլի-մետրի սահմաններում: Ըստ դիտարկումնե-րի՝ ժայռերի վրա եղած պատկերները եւս կարելի է բաժանել մի քանի խմբի:


Յուրաքանչյուր այցելու (առանց կողմա-կի բացատրության) այդտեղ կարող է տես-նել լեռնաշխարհի ֆաունայի այն ժամանակ-վա ողջ հարստությունը:

Հատկանշական է, որ այդտեղ կան նաեւ տիեզերական պատկերացումների հետ առնչվող նկարներ: Իսկ դա նշանակում է,

որ նախնադարյան մարդն առնչվել է նաեւ տիեզերական հետազոտությունների հետ: Այդ հանգամանքը զուրկ չէ հիմքերից, եթե նկատի ունենանք, որ մեզնից դեռեւս հազա-րամյակներ առաջ գործել է Սիսիանի հայտ-նի աստղադիտարանը՝ Չորաց քարերը, որ գտնվում է հենց նույն լեռնազանգվածների ստորոտում:

Քանի որ ժայռապատկերներ տանող ճա-նապարհները ոչ բոլորին են մատչելի, ուստի դրանցից մի քանիսը դեռեւս 1980 թ. բերվել եւ ցուցադրվում են Սիսիանի Քարի թանգա-րանում: Դրան անդրադարձել է նաեւ «Պրավ-դա» թերթը՝ «Թանգարանի իջավ լեռներից» վերտառությամբ հոդվածով: Սակայն հատ-կանշական է այն հանգամանքը, որ Սիսիան բերված ցուցանմուշներն ընդամենը տասը տարում արդեն խոնավացել են, շատ պատ-կերներ հազվա քան նշմարվում: Ըստ էության պատահական չէ, որ մեր նախնիներն իրենց արվեստի գործերը մշտապես լուրթ երկնքի

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԷ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ



Հայոց չքնադագեղ Փառանձեմ թագուհու և Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի ծննդավայր Դավիթբեկ գյուղի սրբավայրերը

Դավիթբեկ գյուղանունը մատենագիտության մեջ հիշատակվում է Նաեմ Դավիթ բեկ, Չեյվա, Չեյվա Մյուս, Ներքին Չեյվա անվանումներով: Գտնվում է Կապան քաղաքից հյուսիս-արևելք, Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային ստորոտում, Քաշունի գետի հովտում, անտառապատ վայրերում:

Դավիթբեկը Հայաստանի Նշանավոր գյուղերից է: Ներկայիս գյուղը հիմնվել է 18-րդ դարի երկրորդ կեսից՝ Դարաբաղի Հիլիս գյուղից տեղափոխված ընտանիքների հիման վրա: Դավիթբեկ է վերանվանվել 1949 թ. հունիսի 29-ին:

Գյուղի կենտրոնում է Սուրբ Ստեփանոս եկեղեցին՝ կառուցված 1868 թվականին:

Նշանավոր սյունեցի, բարեգործ Միրիկ Մնացականյանի Նախաձեռնությամբ 2008 թվականին հայրենի գյուղում կանգնեցվել է Սուրբ Գայանե եկեղեցին:

2011-ին՝ Մեծ հայրենականում զոհված դավիթբեկցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի մոտ կանգնեցվել է խաչքար՝ ի հիշատակ Արցախյան պատերազմի Նահատակների:

Իսկ 2018-ին, Կարմրաքարի երեմնի գումարտակի վետերանների Նախաձեռնությամբ՝ այդ գումարտակի Նահատակ մարտիկների հիշատակը հավերժացնելու համար, Կարմրաքարի մերձակայքում Կապան-Գորիս մայրուղու վրա, կանգնեցվել է խաչքար:

Ըստ Բաֆֆու՝ բնակիչներն այստեղ են տեղափոխվել Ձորքի Չեյվայից 1830-ական թվականներին: Թուրքմենչայի պայմանագրից հետո գյուղում վերաբնակվել են Նաեմ դարադաղցիներ:

Հետազոտողների մի մասն այս գյուղը համարում է Անդոկի դուստր Փառանձեմի՝ Հայոց թագուհու ծննդավայրը:

Սերո Խանգադյանը 1952-ին գրել է. «**Հին և Չեյվա անունը: Առաջ Անդոկաբերդ էր (Չեյվա պարսկերեն է, որ Նշանակում է ամրոց, բերդ: Միայն երեք տարի առաջ է Չեյվան դարձել Դավիթբեկ: 4-րդ դարում եւս Անդոկաբերդ էր՝ Զաշունիք գավառում: Այս բերդում է ծնվել Փառանձեմ թագուհին՝ Անդոկ Սյունի Նախարարի դուստրը:**»

Այդտեղ է ծնվել Նաեմ Հայաստանի առա-



Կայանի եկեղեցին (ըստ Վահագն Մովսիսյանի)

ջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանը:

1952 թ. դավիթբեկցի Ավի դային Սերո Խանգադյանին պատմել է Արամ փաշայի մասին. «**Նրա հայրը Շուշի քաղաքից էր, դարբին Թունի (Հարություն) Ղոնդաղազյան: Եկե, բնակվել է Չեյվա գյուղում: Այստեղացի են Արամ փաշա Մանուկյանը եւ Նրա ոչ պակաս քաջ եղբայրը՝ Խաչատուրը:**»

Երջանկահիշատակ Սաֆար Եղիազարյանը Արամ Մանուկյանի՝ դավիթբեկցի լինելու իր վարկածն ուներ, որը ժամանակին տպագրել ենք «Սյունյաց երկիր» պարբերականում:

Գյուղի պատմության ուսուցիչ Վահագն Մովսիսյանը պնդում է, որ Արամ Մանուկյանի հոր՝ Հարությունի ազգանունը Հովհաննիսյան էր: Ինքը մասնագիտությամբ հյուսն էր՝ ղոնդաղսագ, ուստի եւ Ղոնդաղսագյան են:

2018 թվականին՝ Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակի կապակցությամբ, ՀՅԴ-ն գյուղում կանգնեցրել է Արամ Մանուկյանի կիսանդրին:

Գյուղի մոտակայքում է գտնվում Կարմրաքար հանգստյան գոտին կամ ամառանո-

ցը:

Գյուղի արեւելյան կողմում կա մի կիսավեր մահարձան (ըստ տեղացիների՝ 10-րդ դար):

Նույն կողմում 3 կմ հեռավորությամբ, Տախ կոչվող եկեղեցին է՝ համաձայն ավերակ գյուղով, որի բնակիչները Դավիթբեկ են տեղափոխվել 19-րդ դարում: Տախը մատենագիտության մեջ Նաեմ Դախ, Դախն, Տախն է անվանվում: Եկեղեցու եւ մյուս շինությունների ավերակները պահպանվում են:

Գյուղի տարածքում Կարմրաքարի հանգստյան տան (ամառանոցի) հյուսիսային կողմում են գտնվում Բերդիկի ավերակները: Բլրի վրա, անտառոտ վայրում կանգուն են պարիսպների՝ խոշոր եւ անտաշ քարերով շարված հիմնապատերը:

Այդտեղ Նաեմ Նույն անվամբ գյուղ է եղել: Հիշատակվում է Տաթևի վանքի Նոր հարկացուցակում եւ մի քանի քարտեզներում: Այդտեղի ժամանակ արդեն գոյություն չի ունեցել:

Գյուղի դաշտամասերին քաջատեղյակ Դավիթ Հայրապետյանի վկայությամբ՝ այդտեղ պահպանվում է մի զորավոր եկեղեցի, որն արտաքին չափսերով համեմատելի է



Դավիթբեկ գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու չափսերին:

Սերո Խանգադյանի կարծիքով՝ դա ոչ թե սովորական եկեղեցի է, այլ Կինեվանքն է. «**Սա կառուցել են 7-րդ դարում, իբրեւ աղջիկների կրթարան: Վանքից վերեւ պնդված է Բերդիկի տաճարը:**»

- Ավերված վիճակում էլ Նա գեղեցիկ է: Դեղին ծաղիկներ են բուսել պատերի մեջ եւ ոսկե երանգ տվել գեղեցկուհուն, - գրում է Սերո Խանգադյանը:

Եկեղեցուց վերեւ ամրոցն է, որտեղ Նաեմ մատուռ կա: Ենթադրվում է, թե սա Բաղքի Անդոկաբերդն է, որն ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ պաշտպանական կարեւոր դեր է կատարել 7-12-րդ դարերում: Սակայն տեսակետը, որ Բերդիկն Անդոկաբերդն է, չի համապատասխանում իրականությանը:

Սերո Խանգադյանն էլ, ըստ էության, սխալվում է, երբ Բերդիկը նույնացնում է Անդոկա բերդի հետ:

Դավիթբեկ գյուղի վերոնշյալ բնակիչ Դավիթ Հայրապետյանը հավաստիացնում է, որ Անդոկաբերդը գտնվում է Դավիթբեկ գյուղից (ուղիղ գծով) մոտ 3-4 կմ դեպի արեւելք: Բերդը գտնվում է Քաշունի գետի ձախ ափին՝ բարձունքի վրա, որի պարսպի մի մասը պահպանվում է: Բերդի ստորոտում Նաեմ գյուղատեղիի հետքեր են՝ եկեղեցու ավերակներով:

Մինչեւ պատերազմն այդտեղ կարելի էր գնալ Նաեմ մեքենայով՝ Չայգամից դեպի Կուբաթի ձգվող ճանապարհով. մոտ 8-10 կմ հեռավորության վրա է, որը հիմա Ադրբեջանի տիրապետության ներքո է:

Դավիթ Հայրապետյանի ասածը հավաստեց «Միսիական» ջոկատի հրամանատար Աշոտ Միսայանը, ով նույնպես եղել է Անդոկաբերդում:

Գյուղի տարածքում կան Նաեմ այլ գյուղատեղիներ ու սրբավայրեր:

Սրբավայրերից հիշարժան է Կայանի եկեղեցին: Անառիկ դիրքի վրա՝ եկեղեցու մերձակայքում, կան Նաեմ բերդի ավերակներ:

Գյուղատեղիներից հիշարժան են Զամխաչը, Շիխը, Ենգիջան (գյուղի թաղամասերից մեկն է) եւ Խաթուն բաղը (խաչքարերով):

Գյուղի դիմաց՝ դեպի արեւելք, Դարաբաղի Դիգափայտ լեռնաշղթան է, ներքեւում Բարգուշատ ընդարձակ հովիտը, որին, իր բերրիության համար, Օրբելյան պատմիչը «Եղիպետ»-եգիպտոս է անվանել:

Մինչեւ 1921 թ. այդ հովիտը նույնպես մտնում էր Չանգեզուրի գավառի մեջ:

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՋԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԲ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ



Սուրբ Հովհաննես
եկեղեցին

Ճակատենի սրբավայրերն այլևս սահմանամերձ են

Կապանից մոտ 10 կմ հարավ-արևելք գտնվող այդ գյուղը հին ժամանակներից մտնում էր Սյունյաց աշխարհի Կովսական (Գրիամ) գավառի մեջ:

Գյուղի կենտրոնում է Սուրբ Հովհաննես եկեղեցին (կառուցվել է 1880 թ.): Դեռևս 2002-ին է վերականգնվել տասնամյակների անտարբերությունից խոնարհված այդ տաճարը: Նախածեռնողը Գագիկ Մելքոնյանն էր: Այդ թվականին էլ տեղի է ունեցել Սուրբ Հովհաննեսի վերածնունդ՝ ծեռամբ Տեր Աբրահամ Եպիսկոպոս Մկրտչյանի:

Ծավալուն հողային աշխատանքներ կատարելու շնորհիվ բարեկարգվել ու ակնհայտ տեսքի է բերվել Նաեւ եկեղեցու շրջակայքը, հողային ծածկույթից ազատվել են հնամենի տապանաքարերը, որոնք գյուղի պատմության հավելյալ վկայարաններ են:

2019 թ. օգոստոսի 23-ին, Հայաստանի անկախության հռչակագրի ընդունման հերթական տարեդարձի օրը, գյուղի հարավ-արևմտյան բարձունքում անտառի բացատում, կանգնեցվել է երկաթակուռ մի խաչ՝ 6 մ x 3 մ չափերով: Խաչի օրհնությունը կատարել են արժանապատիվ Տեր Սահակ քահանա Մարտիրոսյանը եւ Կապանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Վահան քահանա Հերոյանը:

Ճակատենում կա հրաշալի մեկ այլ ուխտատեղի եւս: Դա Սուրբ Հովհաննես մատուռն է՝ գյուղից մոտ 3 կմ հարավ՝ Ծավ տանող ավտոմայրուղու աջ մասում՝ բարձունքի վրա: Մատուռը 2009-ին հիմնել է Ճակատեն գյուղի մեկ այլ երախտավոր գավակ՝ Արշավիր Սարգսյանը: Այն օծվել է Տեր Աբրահամ Եպիսկոպոս Մկրտչյանի կողմից: Առաջին իսկ օրվանից Սուրբ Հովհաննեսն ուխտատեղի է ոչ միայն ճակատենցիների, այլ տարածաշրջանի հավատավոր բնակչության համար:

* * *

Ճակատեն կատարած մեր ուխտագնացությունն առիթ էր՝ ավելի ամբողջական ծանոթանալու գյուղի մյուս սրբավայրերին ու հնավայրերին նույնպես:

Նախ եղանք Ղուզուն արտի եկեղեցու ավերակներում:

Պահպանվում է հյուսիսային պատի մի մասը, կան բազմաթիվ խաչքարեր: Այդ վայրը Ղուզուն արտ են անվանում հիմա: Մինչդեռ դա Գեղեցու խոպ գյուղատեղին է: Սկզբնական անունը, ամենայն հավանակա-



Սուրբ Հովհաննես եկեղեցին

նությամբ, եղել է եկեղեցու խոպ:

Գյուղից 5 կմ հարավ-արևելք է գտնվում Իրիգիս գյուղատեղին. Ծավ տանող ճանապարհի ձախ կողմում՝ բարձադիր տեղում: Պահպանվում է թաղակապ եկեղեցին, նկատվում են ջրանցքի, կավե խողովակների, գերեզմանների, խաչքարերի հետքեր: Ենթադրվում է, որ Իրիգիսը Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Եղեգից գյուղն է:

Ճակատենից 6-7 կմ հարավ՝ բլրի վրա է գտնվում Շնդռեն գյուղատեղին (Նաեւ կոչվել է Շինդիրյան, Շնդրեն): Գյուղն ապաբնակեցվել է 1930-ականներին՝ բնակավայրերի խոշորացման հետևանքով: Շինությունների ավերակները նշմարվում են: Գյուղը Նաեւ եկեղեցի է ունեցել, որ գիտական գրականության մեջ երբեմն սխալմամբ անվանվում է Շինդռնի եկեղեցի:

Ճակատենից մոտ 3 կմ հարավ-արևելք է գտնվել Շինաթաղ գյուղը, որի շինությունների հետքերը նույնպես պահպանվում են:

Ճակատենից հարավ-արևելք է գտնվել Սուսանի գյուղը: Տարեցները պատմել են, որ 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին գյուղը կանգուն էր ու հայաբնակ: Դա Սուսանդաղ լեռան ստորոտն է, որը մտնում է Բարգուշատի լեռնաշղթայի համակարգի մեջ: Ի դեպ, Սուսանդաղն այնքան էլ բարձր լեռ չէ. ամենաբարձր գագաթը 1300 մետր է:



Ճակատենի մերձակայքում 4-5 կմ արևելք, կա եւս մեկ գյուղատեղի՝ բարձրադիր լեռնային վայրում, բլրի ստորոտում: Նշմարվում են տների ավերակները: Դա Գրմեշ գյուղատեղին է, որտեղ նույնպես եղել է Աստծո տաճար:

Ըստ պատմական գրականության՝ Ճակատենի տարածքի ամենաինչ ու խոշոր բնակավայրը Վարոս գյուղն է եղել, որտեղ

էլ գտնվում էր Վարոսի վանքը: Անտառում ծվարած այդ գյուղում, որտեղ պետք է որ լինեն եկեղեցու ավերակներ, ճակատենցիներին հայտնի չէ, ուստի եւ չկարողացանք ստույգ տեղորոշել ու այցելել: Այդ գյուղի մասին նշում է Ստեփանոս պատմիչը՝ իբրեւ Տաթևի վանքին 10 չափ հարկ վճարող բնակավայր: Վարոսի վանքի մասին հիշատակում է Նաեւ Ղեւոնդ Ալիշանը՝ Կովսականի գյուղերի մեջ:

Եվ, այդ բոլորով հանդերձ, Ճակատենի տարածքի ամենանշանավոր մշակութային ժառանգությունը Սյունյաց աշխարհի եւ առհասարակ Մեծ Հայքի ամենանշանավոր ամրոցներից մեկն է՝ Գրիամը: Ճակատենից հարավ-արևելք գտնվող այդ բերդ-ամրոցի մասին առաջինը հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը: Ըստ երեւույթին Գրիամը գոյություն է ունեցել 9-10-րդ դարերից:

Հիշատակվում է 1104 եւ 1166 թթ. թուրք-սելջուկների արշավանքի կապակցությամբ: Տեսակետը, որ հենց դա է Գրիամը, հաստատել է Նաեւ մեր հայրենակից, հայագետ Թ. Հակոբյանը: Ըստ նրա՝ Գրիամը գտնվում է Ղափան-Մինջեւան երբեմնի երկաթգծի Շաիրլու կամ Շարիրլու կայարանի դիմացի լեռան գագաթի վրա (մենք նույնպես այդ կարծիքին ենք):

* * *

Ճակատեն անվանումը, որը լուսահոգի Ռոբերտ Էջանանցու կարծիքով պահպանվել է սկիզբ ունի, գագաթ իմաստն է պարունակում: Գյուղանունը ոմանք էլ բացատրել են որպես արեւելահայաց կողմ՝ Բաղքի ճակատմաս:

Գյուղը Նաեւ այլ կերպ է անվանվել՝ Ճաքատեն, Ճգտեն, Ճըկետեն, Ճըկտեն, Ճըքատեն, Ճկատեն, Ճկտեն, Չաքիդին, Չըքադեն, Չիկադեն, Չքատեն, Չքտեն:

Գյուղն ըստ Նոր հարկացուցակի՝ Տաթևի վանքին վճարում էր 1200 դահեկան հարկ:

* * *

Ներկայիս Ճակատենը, ըստ ավանդույթի, հիմնադրվել է 17-րդ դարավերջին: Բնակատեղին Նախ եղել է Իրիգիս կոչվող հանդամասում (այդ գյուղի մասին քիչ առաջ նշեցինք), հետո՝ 19-րդ դարասկզբին տեղափոխվել է Ներկայիս տեղը:

Գյուղի առաջին բնակիչները եղել են Իրանից տեղահանված Մելիք Աղազյուլյան եւ Կարախանյան տոհմի Ներկայացուցիչները:

Դեռևս 1967 թ. գյուղում հավերժացվել է Մեծ հայրենականում զոհված 99 ճակատենցիների հիշատակը: Անկախության տարիներին գյուղի կենտրոնում կառուցվել է մի համալիր, որն իր մեջ ամփոփում է Նաեւ Արցախյան հերոսամարտում զոհված համագյուղացիների հիշատակը:

Զարմանահրաշ բնություն ունեցող գյուղ, որի հարավային մասով հոսում է Ճակատեն (Ձաղաջի) գետը՝ սակավաջուր դարձած, հարուստ է դաշտային սառնորակ աղբյուրներով:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԷ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՄԱՀՄԱՆԱՄԵՐՁ



Ագարակ գյուղի սրբավայրերը. Աստծո կամոք փրկված երկաթյա խաչը լույս է սփռում

Գյուղը գտնվում է Կապան քաղաքից մոտ 18 կմ արեւելք՝ Բարգուշատի լեռնաշղթայի ստորոտում, Ողջի գետի ձախ կողմում։ Կոչվել է Նաեւ Հագերակ, բարբառում՝ Հըլկերակ։ Հիշատակվում է 12-13-րդ դարերում, մտնում էր Այունիք աշխարհի Բաղք-Աճառան գավառի մեջ։

Ըստ հին հարկացուցակի՝ Տաթևի վանքին տալիս էր 20 միավոր հարկ եւ համարվում էր Այունիքի խոշոր բնակավայրերից։

Ագարակն ունի հերոսական պատմություն։ Մեկ օրինակ, 1919 թ. հունիսի 28-ին գյուղին է մոտեցել Զյազիմ փաշան՝ 13 հազար ասկարով։ Ագարակցիները թուրքական բանակին պարտության են մատնել։ Նաեւ ճակատամարտի երկու օրում թշնամուց խել են հինգ զնդացիր, երկու հարյուր հրացան, 15 ձիաբեռ փամփուշտ։

Գյուղում կանգուն է 19-րդ դարում կառուցված Օհանա եկեղեցին։

Ագարակը կրակագին դարձավ Նաեւ Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ։ Իսկ 2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայից ու նույն տարվա դեկտեմբերի 18-ի հայտնի հուշագրից հետո գյուղը կրկին դարձավ սահմանային, ինչպես որ եղել է Արցախյան առաջին պատերազմից առաջ։

Երբ 2020 թ. դեկտեմբերի 18-ին հայկական մարտական դիրքերը (վերին հրամանով) հետ քաշվեցին, Ագարակի մի շարք տարածքներ (մեխանիկական սահմանորոշման հետեւանքով) դարձան վիճելի։ Վիճելի դարձավ Փելասար լեռնաբազուկի այն հատվածը, որտեղ 2019 թ. մարտի 31-ին ծագումով ագարակցի, ՌԴ բնակիչ Արթուր Քարամյանի միջոցով կանգնեցվեց երկաթյա խաչ։ Ի դեպ, Փելասարը Բարգուշատի լեռնաշղթայի բազուկներից մեկն է։ Փելասարը կոչվում է Նաեւ Գրվին սեռ, Գրվին քար։ Կապան քաղաքից արեւելք գտնվող այդ լեռնաճյուղը կոչվում է «լավ երեւացող տեղ»։ Լեռնաբազուկի բարձր գագաթը Գրվան է։

Ագարակի 19-րդ դարում կառուցված Օհանա եկեղեցին



Սահմանորոշման ժամանակ, ըստ GPS կոչվածի, Փելասարի այն հատվածը, որտեղ Նաեւ երկաթե խաչն է, պետք է հանձնվեր ագերիներին. այդ դեպքում պիտի մոտաժվեր երկաթյա խաչը։ Սակայն, Աստծո կամոք, այդ օրերին խաչից 15 մ հեռավորության վրա պատահաբար գտնվեց խՍՀՄ ժամանակներից մնացած վարչական սահմանաշուկը։ Եվ դա հիմք հանդիսացավ, որ Փելասարի այդ հատվածը՝ երկաթյա խաչով, մնա Հայաստանի տարածքում։ Այնպես որ՝ սրբազան խաչը մնացել է իր տեղում եւ աստվածատուր լույսով ամեն գիշեր լուսավորում է Այոնյաց աշխարհի արեւելյան սահմանի այդ հատվածը։

Ագարակի տարածքում կան բազում այլ սրբություններ եւս, որ հայտնվել են հայադրեջանական սահմանի մոտակայքում։ Դրանք հիմնականում հին գյուղատեղիներ Գեչուտ եւ Սիրդարա վայրերում են...

Սիրդարա գյուղատեղին գտնվում է Ագարակ գյուղից փոքր-ինչ հարավ-արեւելք, սահմանափակ։ Պահպանվում են տների հետքերը։ Պահպանվում է ավերված եկեղեցին՝ մերձակա գերեզմանով եւ բազում խաչքարերով։

Գեչուտ գյուղատեղին գտնվում է Ագարակից 1-2 կմ արեւելք՝ ծորալանջին։ Նշմարվում են շինությունների, ինչպես եւ եկեղեցու հետքերը։ Ըստ զոոյցների՝ բնակիչները 19-րդ դարասկզբին տեղափոխվել են եւ վերաբնակվել Ագարակ գյուղում։

Զուխտակ մատուռ. այդ սրբավայրը գյուղից դեպի Փելասար լեռնաճյուղ ընկած բարձրադիր վայրում է, որտեղ պահպանվում են երբեմնի մատուռի հետքերը։

Ագարակ-Կապան մայրուղու վրա, որ այլեւս չի գործում, չհասած Փելասարի գագաթ (որտեղ երկաթյա խաչն է), կա փոքրիկ մի հանգստյան գոտի, որի կենտրոնում չքնաղ մի խաչքար է՝ կոտրված վիճակում։ Կողքին վառած մոմերի հետքերը վկայում են, որ այդ խաչքարին առ այսօր այցելում են հավատավոր ագարակցիները։

Ըստ Ռազմիկ Մարտիրոսյանի՝ խաչքարը 1970-ականներին ինքն ու Համլետ Քարամյանը տեղափոխել են Չանգելանի շրջանի Վերին Եմալու գյուղից, որտեղ՝ դպրոցի մերձակայքում անփութորեն ընկած էր այն, որով ագերիները ոտքեր էին մաքրում ցեխոտ օրերին, ինչն էլ ստիպել է իրենց՝ փրկել խաչքարը։ Բայց խաչքարը տեղափոխող մեքենան, երբ արդեն Ագարակ գյուղի մերձակայքում էր (խաչքարի ներկայիս վայրում), վթարի է ենթարկվել, ինչի հետեւանքով խաչքարը կոտրվել է ու մի մասը ձորը գլորվել։

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԲ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ

Եղվարդ գյուղի սրբավայրերից մի քանիսը

Սյունիքի մարզի Եղվարդ գուղը, որը Սյունյաց աշխարհի հնագույն բնակավայրերից է, գտնվում է Կապան քաղաքից 22 կմ հյուսիս-արևելք՝ Բարգուշատի լեռնաշղթայի մեղմաթեք, անտառապատ լանջին: Եղվարդ գյուղը նույնացվում է պատմագիր Ստեփանոս Օրբելյանի պատմության վերջում ներկայացված բնակավայրերի ցանկում հիշատակված Սյուն Բաղք կամ Բաշունիք գավառի Աղահորդ գյուղին:

Բնակավայրի հին լինելու մասին են վկայում գյուղում եւ նրա հանդամասերում առկա պատմամշակութային հուշարձանները՝ տապանաքարեր, խաչքարեր, բնակատեղիներ: Այսպես՝ գյուղից մոտ 1 կմ հարավ՝ **Ծավիկի խաչ կոչվող** ծառապատ բլրակի վրա գտնվում են միջնադարյան մի գերեզմանոցի եւ բնակատեղիի ավերակներ: Գյուղի ստորոտի Մովսես ծորում եղել է ջրաղաց, որից մնացել է միայն կոտրված աղացքարը:

Սպիտակ աղբյուրի խաչ կոչվող սարալանջին կան եկեղեցու ավերակներ: 2011 թ. գյուղից մոտ 3 կմ հյուսիս-արևելք հայտնաբերվեցին հելլենիստական ժամանակաշրջանի կարասային թաղումներ (Ք. Ա.1-ին դար):


Եղվարդ գյուղից 8 կմ արևելք գտնվում է Շուշանների դաշտ (Նարգիզու դամի) կոչվող վայրը, որտեղ 1725 թ. տեղի է ունեցել ճակատամարտ՝ Թորոս իշխանի հրամանատարությամբ գործող Դավիթ Բեկի եւ Բար-

գուշատի Ֆաթալի խանի հրոսակների միջև: Ճակատամարտում ազգուրաց մեկը Ֆրանգուլի կազմակերպած դավադրության հետեանքով սպանվում է իշխան Թորոսը, ում աճյունն ամփոփված է Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցու մոտ գտնվող օրորոցածե տապանաքարի տակ: Պետք է նշել, որ պանծալի զորավարի շիրմի հայտնաբերումը Ս. Աստվածածին եկեղեցու բակում պատճառ հանդիսացավ, որ «Երկիր եւ մշակույթ» կազմակերպությունը ծեռնամուխ եղավ եկեղեցու վերականգնման աշխատանքներին:

Դավիթ Բեկին սատարելու եւ Թորոսի զորքերի կազմում Շուշանների դաշտի ճակատամարտին մասնակցելու համար Եղվարդը, որպես ապստամբ գյուղ, 1729 - 30 թթ. Իրանի շահի հրամանով ավերվում է, իսկ բնակիչները տարվում են Պարսկաստան՝ Դարաղաղի Վինա գյուղ: Մեկ դար անց, համաձայն Թուրքմենչայի պայմանագրի, եղվարդցիները՝ թվով 54 ընտանիք, վերադառնում են իրենց նախնիների գյուղ:

Ցարական Ռուսաստանի օրոք Եղվարդը ելիզավետպոլի նահանգի Չանգեզուրի գավառի գյուղերից էր՝ Աղահորդ անունով:

Եղվարդ գյուղի կենտրոնում է գտնվում Ս. Աստվածածին եռանավ եկեղեցին, որի միակ հարավային մուտքի բարավորի վրա փորագրված է կառուցման թվականը՝ ՌՃԽԹ=1700 թ.: Այն հաստակագծում 20.3 x 13.4 մ. չափի, եռանավ հորինվածքով բա-



Սուրբ Աստվածածին եկեղեցի

զիլիկ սրահ է, պատկանում է զարգացած եւ ուշ միջնադարում մեծ տարածում գտած եռանավ բազիլիկների տիպին: Նավերի թաղածածկերը թաղակիր կամարների միջով հանգչում են երկու զույգ մույթերի եւ կրող պատերի վրա: Խորանը գտնվում է աղոթարանի արեւելյան կողմում, ունի կիսաշրջանաձեւ հատակագիծ եւ մեկ պատուհան: Խորանի երկու կողմերում մեկական ավանդատներ են:

Տարբեր պատերազմների, այդ թվում՝ Արցախյան ազատամարտի ակնատեսն է եղել եկեղեցին: Կառուցման ժամանակից ի վեր՝ 307 տարիների ընթացքում, եկեղեցին բավականին վնասվել էր, պատմական այլեւայլ անցքերն ու տարիների ավերիչ հետքերը տեսանելի էին ամենուր՝ հողմահարված վեմեր ու տապանաքարեր, ձկից ու անձրեւից ավերված տանիք, ճաք տված պատեր: Քիվերը եւ տանիքի կղմինդրե ծածկը չէին պահպանվել:

Ֆրանսիայում գործող «Երկիր եւ մշակույթ» կազմակերպությունը (հիմնադիր Նախագահ՝ Գեոռյան) 2007 թ. ստանձնեց Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցու վերականգնման հայրենակներ գործը:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (ղեկավար՝ Հակոբ Սիմոնյան) 2007 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իրականացրեց վերականգնվելիք հուշարձանի պեղումները, որին մասնակցեցին «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության կամավորներ՝ Ֆրանսիայից, Անգլիայից, ԱՄՆ-ից, Սիրիայից, Երեւանից, Կապանից: Պեղումների շնորհիվ ի հայտ եկան նոր գերեզմաններ, խաչքարեր, նյութական մշակույթի մետաղյա եւ կավակերտ տարբեր գտածոներ:

Կատարվեցին եկեղեցու չափազանց աշխատանքներ, կազմվեց վերականգնման էսքիզային նախագիծ (ճարտարապետ՝ Լեւոն Վասիլյան):

Եկեղեցու սալահատակը, բեմի ճակատը, ավագ սեղանը եւ դրսի ճեմուղիները կառուցվեցին տեղի կարմրավուն կարծր քարից, որն առկա է նաեւ պատերի շարվածքի մեջ: Դահլիճի արեւմտյան մույթերի հետեւում ընկած հատվածը բարձրացվեց երկու աստիճանով՝ բնական ժայռի ելքի մակարդակով:

Կատարվեց նաեւ եկեղեցու բարեկարգում, որի շնորհիվ եկեղեցու հարավային հրապարակը շրջափակվեց ներքեւի մասում խամ քարով շարված, վերելում՝ մետաղական ճաղերով ձեւավորված պարսպով: Եկեղեցու հարավային ճակատը մասամբ փակող երկրորդ աշխարհամարտում զոհված եղվարդցիների հիշատակին նվիրված հուշարձանը տեղափոխվեց:

Շուրջ չորս երկար ու ձիգ տարիներ տեւած վերականգնման աշխատանքներն ավարտվեցին 2011 թ.: Շինարարական աշխատանքներն իրենց ակտիվ մասնակցությունը ունեցան շինարարներ Սպարտակ Հարությունյանը, Վարուժան Սիմոնյանը, վերականգնող ճարտարապետ Ստեփան Նալբանդյանը, գյուղապետ Սպարտակ Չաքարյանը, համագյուղացիները եւ այլք: Այդ ամենի շնորհիվ եկեղեցին վեր հանեց նախկին տեսքով՝ իր դռները բացելով հավատա-



Թորոս իշխանի գերեզմանը

վոր մարդկանց առաջ:

ՄԱՐՏԱԿ ՉԱԶԱՐՅԱՆ

Խմբագրության կողմից

1. Գյուղի մոտ է գտնվում Սպիտակ աղբյուրի խաչ կոչված եկեղեցին եւ գերեզմանոցը՝ 10-19-րդ դարերի խաչքարերով:

2. Շինատեղ գյուղատեղին գտնվում է Եղվարդ գյուղից արևելք, բարձրադիր ծորակողի վրա: Նշմարվում են շինությունների ավերակներ, գերեզմաններ: Ավերման մասին վկայություններ չկան: Բնակիչները տեղափոխվել են Եղվարդ գյուղ:

3. Հիմա այդ վայրը, թեեւ գտնվում է Հայաստանի տարածքում, ընկած է հայկական եւ ադրբեջանական մարտական դիրքերի միջեւ ու գրեթե անհնար է առանց կողմերի թույլտվության այցելել այնտեղ:

4. Եղվարդ գյուղից գտնվում է 1,5 կմ արեւելք Եղվարդ գյուղից: Պահպանվել է գերեզմանոցը՝ խաչքարերով:

5. Եղվարդի մերձակայքում է գտնվում Ծավիկ կամ Ցավիկ լեռնագագաթը (լեռը), որը Բարգուշատի լեռնաշղթայի արեւելյան ճյուղավորումն է:

Եղվարդից հարավ-արեւելք գտնվող այդ լեռնագագաթը Կապանի շրջանի եւ Ադրբեջանի սահմանագլխին է:

6. Փերի խաչ՝ գյուղի մոտակայքում, Արցախյան առաջին պատերազմի ժամանակ ջարդվել էր հրետակոծության հետեանքով: Սակայն երախտապարտ եղվարդցիները (Արմենակ Հայրապետյանի նախաձեռնությամբ) նոր խաչքար են կանգնեցրել այդ վայրում, որը շարունակում է մնալ ազարակցիների ամենապաշտելի վայրերից մեկը:

7. Խորնեցուց խուբի խաչքարերը... Այդ դաշտամասը ժամանակավորապես (Շուշանների դաշտում տեղի ունեցած հայտնի ճակատամարտից հետո, երբ գյուղը բռնագաղթի ենթարկվեց) տրվել է Խորանց գյուղին, ինչի համար էլ ստացել է այդ անվանումը: Իսկ բազում խաչքարերից դեռեւս պահպանվող երկու խաչքարն ավելի հին պատմություն ունեն կարծես:

Այդ սրբավայրից հարավ եւ հարավ-արեւելք ադրբեջանական ու հայկական մարտական դիրքերն են՝ պարզորոշ երեւացող:

Այդ սրբավայրից եւ ընդհանրապես Եղվարդից արեւելք ընկած ոչ հեռավոր տարածքում բարձրանում են մեծ եւ փոքր Հարթիգ-ները, որոնց ստորոտում երբեմնի հայկական երեք գյուղի ավերակներն են՝ այլեւս ադրբեջանական շինծու անվանումներով՝ Սալդաշ, Գոյալ, Փարիջան (վերջինիս անդրադարձ ենք կատարում Մողես-Կաղնուտի մասին հրապարակման մեջ):



Խորնեցուց խուբի խաչը



Սպիտակ աղբյուրի խաչը

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԲ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՄԱՀՄԱՆԱՄԵՐՁ



Ուժանիս. որքան էլ դժվար լինի՝ մարդիկ կշարունակեն այցելել Հին Ուժանիսի կիսավեր եկեղեցի-սրբատեղի

Ուժանիս գյուղը մատենագիտության մեջ հիշատակվում է նաեւ Վաժնիք, Վաժնիք, Վարժունիկ, Վժանիս, Վժնիս եւ այլ անվանումներով: Գտնվում է Կասպան քաղաքից հյուսիս-արեւելք, գեղատեսիլ բարձրադիր հարթության վրա՝ շրջապատված անտառներով: Հնում մտնում էր Սյունիք աշխարհի Բաղք-Քաշունիք գավառի մեջ:

Հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի (13-րդ դար)՝ Վաժնիք (ըստ Դետոնդ Ալիշանի՝ նաեւ Վաժնիք) ձեռնով՝ Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին հարկացուցակում (13-րդ դար), որի համաձայն վանքին տալիս էր ութ միավոր հարկ: Հետագայում մտնում էր Ելիզավետպոլի նահանգի Չանգեզուրի գավառի մեջ:

Գյուղն ունի 1873 թ. կառուցված Սուրբ Հովհաննես եկեղեցին:

Ուժանիսից 2-3 կմ հյուսիս-արեւելք՝ սարալանջի հարթության վրա, գտնվում է Հին Ուժանիս գյուղատեղին, որի ավերակների մեջ պահպանվել է կիսավեր եկեղեցին:

Հին Ուժանիսի ավերվելուց հետո բնակիչները հիմնադրել են նույնանուն այս գյուղը: Գյուղից 1 կմ հյուսիս՝ Հանդին արտ կոչված վայրում, կա ընդարձակ գերեզմանոց, կենտրոնում գեղեցիկ զարդաքանդակներով մատուռ-խաչքար:

Ուժանիսից 3 կմ հյուսիս-արեւմուտք կա Ալմալուղ գյուղատեղին: Վերջինիս բնակիչները գյուղը լքել եւ Ուժանիս են փոխադրվել 1948-ին, այստեղից էլ՝ Վերին Գյողաքլու (ներկայումս՝ Վարդավանք):

Ուժանիսում է եղել վիպասան Բաֆֆին, ում վկայությամբ՝ այս գյուղից էր Դավիթ



Սուրբ Հովհաննես եկեղեցին



Ուժանիսից 2-3 կմ հյուսիս-արեւելք՝ սարալանջի հարթության վրա, գտնվում է Հին Ուժանիս գյուղատեղին, որի ավերակների մեջ պահպանվել է կիսավեր եկեղեցին

Բեկի գիւնակից Տեր-Կասպարը՝ «Ավար երեցը» (Բաֆֆի, Երկ. Ժողովածու, հ. 6, Երեւան, 1956 թ., էջ 380):

Արդեն նշեցինք, որ Հին Ուժանիսում պահպանված է մի թաղածածկ, կիսավեր եկեղեցի: Կառուցված է գրանիտի անտաշ քարերով, սրբատաշ են միայն մուտքը եւ բեմի երկու կողմից բարձրացող ոտքերը: Մուտքի ճակատի վրա կա 1629 թ. արձանագրություն, որ թողել է եկեղեցու կառուցող ճարտարապետ Գրիգոր Ուստան: Հիշատակված է նաեւ Շահ Աբասի անունը, ում ժամանակ է կառուցվել եկեղեցին:

* * *

Սերո Խանգադյանը, լինելով Ուժանիսում, հուշագրել է. «1919 թվականին... Մեկիք-Քարամյան Սմբատ-Բեկը (ղարաբաբեցի) Քըշկոտի կապում սպանեց Քյազիմ փաշայի զորքի պիլիմոտչուն... Սիմոն Չաքարյանն ինքնաշեն ռումբով ոչնչացրեց Քյազիմ փաշայի շտաբը»:

* * *

Ուժանիսն ի վերջո առաջնագիծ դարձավ Արցախյան երրորդ պատերազմի վերջին փուլում: Իսկ 2020 թ. դեկտեմբերի 18-ի հուշագրից հետո, երբ հայկական դիրքերը նահանջի հրաման ստացան Երեւանից, Ուժանիսի սրբավայրերը հայտնվեցին հայադրեջանական շփման գծին մոտ տարածքում:

Հ.Գ. Կապանի տարածաշրջանի Ուժանիս, ինչպես եւ Ագարակ եւ Եղվարդ գյուղեր այլեւս հնարավոր չէ այցելել երբեմնի ասֆալտապատ ճանապարհով (Սյունիք գյուղով անցնող): Սյունիք գյուղից հետո սկսվում է աղբեքանական Սեփյար գյուղի տարածքը (Չանգեզանի շրջան): Իսկ բարձունքում Փելասարը հատող հատվածում Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի եւ Ադրբեջանի զինվորական դիրքերն են՝ միմյանցից մի քանի մետր հեռավորության վրա: Ուստի եւ Ուժանիս, Ագարակ, Եղվարդ գյուղեր գնացինք շրջանցող ճանապարհով՝ Կապան-Գորիս մայրուղուց թեքվելով դեպի արեւելք: Ճանապարհն անցնում է Ներքին Գյողաքլու, Վերին Գյողաքլու (Վարդավանք), Տիրիքլու, ապա՝ Խղրանց գյուղերով: Այդ ճանապարհը, սակայն, Վարդավանքից սկսած շուտափույթ հիմնանորոգման կարիք ունի:

Կապան-Ագարակ հիմնական եւ նորոգ ճանապարհը (Սեփյարի հատվածում) փակված լինելը ցույց է տալիս, որ հաղորդակցության ուղիների ապաշրջափակման մասին հայտնի հայտարարությունների եւ հուշագրի դրույթներն առայժմ որեւէ աղերս չունեն իրականության հետ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԲ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ



պի արեւելք: Փարաջանցը (կամ Փռոջանցը) հին հայկական գյուղ է, որը, ինչպես Հագարո հովտի շատ հայկական գյուղեր, հայաթափվել է 18-րդ դարի վերջում: Տաթևի վանքի 19-րդ դարի հարկացուցակում առկա է ինչպես Մողեսը, այնպես էլ Փռոջանցը, որը, որպես բնակավայր, այդ ժամանակ արդեն թուրքաբնակ էր⁵ (Ֆերջան անվանմամբ): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փարաջանցի (կոչվում էր Փարիջան) շրջակայքում այլ վանական համալիրներ կամ եկեղեցիներ չկան, կարելի է պնդել, որ վերոհիշյալ ձեռագիր ավետարանը ընդօրինակվել է հենց այստեղ:

Ձեռագրի հեղինակի՝ Աբրահամի հոգեւորական աստիճանն արեղա էր՝ հայոց եկեղեցու կուսակրոն հոգեւորականության ամենացածր աստիճանի վանական: Աբեղաներն ապրում էին վանքում, վարում էին ճգնաժամի եւ անապատաբնակի կյանք: Հիմնվելով այս ամենի վրա՝ կարելի է ենթադրել, որ Փարաջանց հոգեւոր հաստատությունը մատուռ կամ եկեղեցի չէր, այլ վանք, վանական համալիր կամ անապատ:

Եվս մեկ կարեւոր հանգամանք. հիշատակարանի հեղինակ Աբրահամ արեղան վանական համալիրի (կամ Փարաջանց գյուղի) վայրը բնորոշելիս այն նկարագրում է որպես «ի երկիրս Հաքարու, ի ոտս Դիգափայտու», այսինքն՝ որպես ուղեկիշներ բերելով ոչ թե Կապանի տարածաշրջանի կամ Սյունիքի աշխարհագրական տեղանուններ, այլ՝ Արցախ աշխարհի նշանավոր գետն ու լեռը (որոնք, ի դեպ, այդ վայրից երեւում են) եւ որպես էական իրադարձություն նշում է Գանձասարի կաթողիկոսի հետ կապված միջադեպը: Սա միայն մեկ բացատրություն ունի. Փարիջանի անապատը Հայոց Արեւելից կողմանց կամ Գանձասարի կաթողիկոսարանի ենթակայության ներքո էր գործում:

Հատկանշական է ժամանակաշրջանը, երբ Աբրահամ արեղայի կողմից կազմվել էր ձեռագիր այդ ավետարանը՝ 16-րդ դարը, որն ամբողջությամբ մշակույթի ամենախոր անկման ժամանակաշրջանն էր: Հայաստանի հոգեւոր եւ մշակութային հաստատությունների գործունեությունը խամրում է 15-րդ դարի կեսերից մինչեւ 17-րդ դարի սկիզբը⁶: Հիմնական պատճառը Սեֆյան Իրանի եւ Օսմանյան կայսրության միջեւ անդադար ընթացող աշխարհավեր պատերազմներն էին, որոնց թատերաբեմն էր ողջ Հայաստանը: Փարաջանց հոգեւոր հաստատությունը գործել է նախքան Հարանց մեծ անապատից ծագած անապատական շարժման սկզբնավորումը, երբ վերջինիս սաները գրեթե ողջ Հայկական լեռնաշխարհով ու նրա սահմաններից դուրս հիմնեցին գրչության կենտրոններ եւ մշակութային կրթական հաստատություններ⁷:

Եվ ուրեմն՝ Սեֆյանների տիրապետության ժամանակաշրջանում, 1574թ-ին, Մողես գյուղից 2,5 կմ դեպի արեւելք գործել է Գանձասարի կաթողիկոսարանին ենթակա հոգեւոր հաստատություն՝ մենաստան կամ անապատ, որը միաժամանակ գրչության օջախ էր, որտեղ ընդօրինակվում էին ձեռագրեր եւ չի բացառվում նաեւ՝ ստանում էին կրթություն:

ՇԱՐՈՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՅ 30

Մողես-Կաղնուտ. Փարաջանց անապատը



ՍԵՐԳԵՅ ՏՋԱՆԳԻՐՅԱՆ

Կաղնուտ (Մողես) գյուղից 2,5 կմ հարավ-արեւելք, դժվար մատչելի մի անտառապատ բլրակի գագաթին է գտնվում մի սրբատեղի, որը տեղացիները կոչում են Հոնապատ: Այն իրենից ներկայացնում է համալիր՝ որից համեմատաբար լավ է պահպանվել միանավ բազիլիկ ոչ մեծ եկեղեցին՝ ավերված ծածկով: Սրանից բացի առկա են նաեւ այլ շինությունների ավերակներ թե՛ եկեղեցու շուրջը, եւ թե՛ ավելի հեռու՝ դեպի հյուսիս՝ անտառի մեջ: Եկեղեցու շրջակայքում կան մեկ տասնյակի չափ պարզունակ խաչքարեր՝ եւ տապանաքարեր: Տարածքը երբեմն գիտականորեն չի ուսումնասիրվել, պեղումներ չեն արվել (չհաշված գանձ որոնողների կողմից թողնված փոսերը եւ բացված գերեզմանները): Պատմական աղբյուրներում եւ հետազոտություններում (որքանով տեղյակ էինք) այս համալիրի եւ

նույնիսկ վերջինիս անվան մասին ոչ մի տեղեկատվություն չկա: Սակայն հիմքեր կան ենթադրելու, որ ուսումնասիրությունները կարող են որոշակի արդյունք տալ. եկեղեցու հարավային պատի մոտ, հենց անմիջապես մուտքի դիմաց, գանձագողների թողած փոսի մեջ շրջված է մի տապանաքար, որի երեսի վրա նշմարվում է արձանագրություն, որը սակայն տապանաքարի շրջված դիրքի պատճառով անհնար է ընթերցել:

Այնուամենայնիվ, ուսումնասիրությունների շնորհիվ որոշակի տեղեկություն հոգեւոր այս շինության մասին մեզ հաջողվեց հայթայթել ձեռագիր մի հիշատակարանից:

Մատենադարանի ձեռագիր N4477-ի տակ մի ավետարան է, որը, ինչպես եւ շատ ձեռագրեր, ավարտվում է հիշատակարանով: Ավետարանի հեղինակը կամ գրիչը Աբրահամ արեղան է, որն «ի գեղս, որ կոչի Փարաջանց, ի երկիրս Հաքարու, ի ոտս Դիգափայտու, ի թվին ՌԻԳ (1574)»: Ավետարանն ընդօրինակելով՝ նշում է, թե դա այն դառն տարին է «կաթողիկոսութեան տանս Աղունից տեր Գրիգորիսի, որ երես Թահեյմազ փաթջաի անկամա տաջկացուց, մեզ մեծ սուգ եղաւ անմխիթար»²: Հիշատակարանն ուսումնասիրել եւ վերլուծել է անվանի պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը, համաձայն որի՝ խոսքը գնում է Պարսից Թահմասպ Ա շահի³ (1524-1576թթ.) կողմից բռնությամբ Գանձասարի կաթողիկոս Գրիգոր Հասան-Ջալալյանի ստիպողաբար մահմեդականություն ընդունելու (թլպատելու)



մասին: Պատճառը վերջինիս Սեֆյան Իրանից անկախ, անջատողական քաղաքականություն վարելն էր⁴: Սակայն անվանի պատմաբանի ուսումնասիրության շրջանակների մեջ չի մտել հիշատակարանի ստեղծման վայրի կամ «ի գեղս, որ կոչի Փարաջանց»-ի տեղորոշման պարզաբանումը:

Փարաջանցը գտնվում է Մողես գյուղից 3,7 կմ դեպի արեւելք, իսկ հիշատակվողը՝ վանական համալիրից ընդամենը 2 կմ դե-



ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԷ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ

Սոսի սրբազան ծառի հայաստանյան «բնակատեղին» Սյունիքի Բասուտա գետի հովիտն է՝ Ներքին Հանդ-Չանգելյան սահմանին սփռված

2020 թ. հուլիսի 26-ին այցելեցինք Սոսիների պուրակ՝ զրուցելու հազար-երկու հազար տարեկան սոսիների հետ:

Առհասարակ ծառապաշտությունը, որպես բնապաշտական-ոգիստական հավատալիք, կարելի է ասել, որ արմատները հիմնականում կրթվել են հայոց կրոնում:

Հավատացյալներն ունենորելով սոսիների սոսափյունը՝ պատգամախոս ոգիների «կամջով» արել են զանազան գուշակություններ:

Հին հույները սոսի ծառը նվիրաբերել են Ապոլլոնին, լատինացիք՝ Պահապան ոգուն, իսկ ծննդյան օրերին մերձավորները միմյանց նվիրել են սոսու ճյուղերից հյուսված պսակներ:

Սոսիների մի տեսակը՝ արեւելյան սոսին, Հայաստանում համարվել է սրբազան ծառ եւ հայտնի է անհիշելի ժամանակներից: Հայաստանում արեւելյան սոսիի «բնակավայրը» Բասուտա (Ծավ) գետի հովիտն է՝ 64 հա տարածքով: Ծառուտի գրեթե նույն մակերեսով մեկ այլ հատված մտնում է Ադրբեջանի Չանգելյանի շրջանի տարածքների մեջ:

Տեսակետ կա, որ Ներքին Հանդի Սոսիների պուրակը նախկին Խորհրդային Միության՝ սոսու այդ տեսակի միակ բնական անտառն է եղել:

Հավիտենական սրբության, օրհնության եւ անմեղության խորհրդանշելով «Կենաց ծառի» պաշտամունքը տարածված է եղել Հայկական լեռնաշխարհի այլ վայրերում նույնպես՝ վաղ ժամանակներից սկսած: Հայոց մեջ սոսիի պաշտամունքի գլխավոր տաճարատեղին եղել է Արմավիր մայրաքաղաքը:

Ըստ հայ ավանդական պատմության՝ Արա Գեղեցիկի թոռ Անուշավանը կրել է նաեւ Սոսի նվիրական անունը: Սոսի անունով տաճարներ են եղել նաեւ հայոց Ուրարտուում (մ.թ.ա. 9-6-րդ դարեր):

Ծառապաշտությունը, որոշ ձեւափոխություններով, գոյատևել է քրիստոնեության ժամանակաշրջանում եւս: Ներսես Շնորհալիս վկայում է, որ Սամուսատա քաղաքի հայ աղանդավորների՝ արեւորդիների մեջ 12-րդ դարում պահպանվում էր բարդի ծառի պաշտամունքը:

Ծառապաշտությունը տակավին դրսևորվում է մեր օրերում. հավատացյալները «սրբազան» ծառը զարդարում են ժապավեններով, տիկնիկներով, այլ զոհանվերներով, աղոթում են նրա մոտ, զոհաբերում կենդանիներ, ծառի շուրջ պտտվելով՝ ապաքինում աղերսում... Սրբազան սոսի ծառի յուրօրինակ ընկալում ուներ մեր ազգային մեծերից մեկը՝ Դանիել Վարուժանը.

«Եղեգնյա գրքով երգեցի փառքեր.
-Քեզի ընծա՛, իմ հայրենիք-
Սոսյաց անտառեն էի գայն կըտրեր...
-Քեզի ընծա, հին հայրենիք-
Եղեգնյա գրքով երգեցի քույրմեր.
Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ...»

Ըստ Անդրանիկ Աբեյանի՝ Սոսիների պուրակի հայաստանյան հատվածում ներկայումս հաշվվում է մոտ չորս հազար սոսի: Դրանց մի մասն ունի երկու հազարից ավելի տարիք:

Որոշ սոսիների փչակներում կարող են միանգամից տեղավորվել մեկ տասնյակից ավելի մարդիկ...

Հ. Գ. Ճանապարհին՝ Կապանից Ներքին Հանդ գնալիս, մենք նախեստառջ հայտնվեցինք չքնաղական Սթնածորի սկզբնամա-



տում: Սթնածորը վաղուց աշխարհագրական վայր չէ սոսկ: Սթնածորում այդ օրը կանաչ պատարագ էր...

Սթնածորը մեր ընկալումներում Ակսել Բակունցի «Սթնածոր» պատմվածաշարի գեղարվեստական կուտակումների միջավայրն է: Եվ ըմբռնվում է որպես Կապանի տարածքի Ծավի հովիտ, որտեղ պահպանվել են մի


քանի գյուղերի, նաեւ Սթնածոր հիւսավորց գյուղի ավերակները:

Սթնածորը վաղուց հոգեւոր տարածություն է, որի հիման վրա Ակսել Բակունցը վրձնել է բնության անկրկնելի պատկերներ, մարդկային բացառիկ կերպարներ:

Սթնածորը հետագայում Ներշնչանքի աղբյուր է եղել ուրիշ ստեղծագործողների համար եւս:


Այնպես որ՝ մենք այնտեղ էինք, որտեղից տարվա բոլոր եղանակներին (եւ հատկապես զարնանը, ամռանն ու աշնանը) կարելի է քաղել եղեմական գույներ ու մեղեդիներ... Սթնածորյան ոգեւորությամբ էլ մուտք գործեցինք Սոսիների պուրակ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԲ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ

Կարճեւանի Սուրբ Ուխտը կամ Սուրբ Հովհաննէսը, որ նաեւ Նուխուդա Սուրբ Հովհաննէս է կոչվում



Սեղրու տարածաշրջանում է գտնվում Կարճեւան գյուղը՝ անառիկ մի ծորում, որը երեք կողմից առնված է լեռների նիստում, իսկ հարավային կողմից հարակից է Արաքսի քարավազներին: Բնակավայրը հայտնի է Կիրճեւան, Պայծառագյուղ, Քարաչեւան եւ այլ անուններով:

13-րդ դարում գյուղը Տաթևի վանքին վճարել է 12 միավոր դրա-



մահարկ, իսկ 18-րդ դարում՝ 3400 դահեկան պտղահարկ:

Կարճեւան գյուղի պատմությունը կարելի է սկսել Ք.ա. 2-1-ին հազարամյակից՝ ենթադրելով նրա տարածքում հայտնաբերված գտածոների ժամանակագրությունից: Սակայն նրա մասին առաջին գրավոր տեղեկությունը վերաբերում է 10-րդ դարին, այն էլ 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի աշխատության մեջ բերված փաստով. «Թագավորը սուրբ եկեղեցուն է ընծայում Արեւիք գավառի Մեղրաձորի Կարճավան մեծ ավանը, որն ինքը ձեռք էր բերել գնումով»:

Կարճեւանն ունի Ք.ա. 2-1 հազարամյակից մինչև 18-րդ դարը, ինչպես եւ 1968թ. թվագրվող տարաբնույթ հու-

շարձաններ՝ ամրոց-բերդեր, գերեզմանոցներ, Սբ Աստվածածին որմնակարագարդ եկեղեցին, բնակելի տներ, ջրանցք... Սրանց մեջ իր ուրույն տեղն ունի խնդրակատար **Սուրբ Ստեփանոս ուխտատեղին**:

Պատմական սկզբնաղբյուրներում հուշարձանը հանդես է գալիս Կարճեւանի **Սուրբ Ուխտ, Կարճեւանի Սուրբ Հովհաննէս, Կարճեւանի Նուխուդա Սուրբ Հովհաննէս անուններով**: Այս վանքը 13-րդ դարում հարկատու է եղել Տաթևի վանքին եւ վճարել է 12 միավոր հարկ:

Ստեփանոս Օրբելյանը Սյունիքի տասը նշանավոր վանքերի ու անապատների շարքում հիշատակում է նաեւ Կարճեւանի Սուրբ Ուխտ անունը:

Նուխուդա Սուրբ Հովհաննէս-



սի եւ նրա քրոջ ուխտատեղին, ինչպես տեղացիներն են ասում, գտնվում է Կարճեւան գյուղից մոտ 5 կմ հյուսիս-արեւմուտք՝ Սաղալ լեռան լանջին: Ուխտն ունեցել է եկեղեցի, ժայռափոր ճգնարան: Այս հուշարձանի տարածքում կան բրոնզեդարյան ամրոց եւ դամբարանադաշտ, 13-րդ դարի երկու եւ 18-րդ դարի նվիրատվական խաչքարեր: Վերջինիս վրայի արձանագրության մեջ սրբավայրն անվանվում է Սուրբ Հովհաննէսի ուխտ: Ուխտի դիմացի հարթ ժայռը ժողովուրդը կոչել է «Քարե Ավետարան»: Կարճեւանի Սուրբ Ուխտի տարածքում է բխում Անահիտի մշտադուս աղբյուրը, որի ջուրը ոտնացավերը բուժելու հատկություն ունի, իսկ մոտ 500 մ դեպի արեւելք՝ Աստղիկի աղբյուրը: Ասում են՝ այս աղբյուրի ջուրն էլ աչքերի հիվանդությունն է բուժում եւ մաքրում արցունքագեղձի բորբոքումը:

Գրավոր աղբյուրներում հիշատակվում է Կարճեւանի սուրբ Ուխտի վանահայր Եսայի վարդապետը: Նա եղել է Մովսես Տաթևացի կաթողիկոսի աշակերտը, կառուցել է Երևանի Սուրբ Կարապետ վանքը եւ դարձել նրա առաջնորդը 1665թ.: Եսայի վարդապետի եղբայրը՝ Տեր Հովհաննէսը, լատիներենից 1666թ. ընդօրինակել է հռոմեացի հրեա պատմիչ Հովսեփիոս Փլավիոսի «Պատմություն պատերազմաց հրեից» («Հրեական պատերազմի մասին») թարգմանությունը: Գրքում թողել վկայություն այն մասին, որ ինքը «երջանկապատիվ Տեր Ստեփանոս Կարդապետ Լեհացուն աղաչել է միասին լատիներենից հայերեն թարգմանել պատմությունը, որից հետո ինքն ընդօրինակել է այն:

Թեեւ Կարճեւանի Սուրբ Ուխտն այսօր ավեր է, բայց ամեն տարի բազմաթիվ ուխտավորներ են գալիս խնդրակատար Կարճեւանի Սուրբ Ստեփանոսի, կամ Նուխուդա Սուրբ Հովհաննէսի Ուխտ:

Հիմա, ցավոք, այնքան էլ անվտանգ չէ հայ-ադրբեջանական սահմանին գտնվող այդ սրբավայր գնալը:

ՆԱԻՐԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

“

Կարճեւանն ունի Ք.ա. 2-1 հազարամյակից մինչև 18-րդ դարը, ինչպես եւ 1968թ. թվագրվող տարաբնույթ հուշարձաններ՝ ամրոց-բերդեր, գերեզմանոցներ, Սբ Աստվածածին որմնակարագարդ եկեղեցին, բնակելի տներ, ջրանցք...



ՄՐԲԱՎԱՅՐԵՐ, ՈՐՈՆԷ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՄԱՀՄԱՆԱՄԵՐՁ

ՆՅՈՒՎԱԴԻ - ՆՌՆԱԶՈՐԻ սրբավայրերը՝ սահմանամերձում գտնվող



ՆԱԻՐԱ ՀԱՅՐԱԴԵՏՅԱՆ

Նյուվադի գյուղը գտնվում է Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանի հարավ-արևելյան կողմում: Այն սահմանակից է Կովսական գավառին, իսկ այսօր՝ Ադրբեջանի հարավ արևմտյան շրջաններին: Գյուղը սկզբնաղբյուրներում հայտնի է Նյուատի, Նյուգադե, Նուվադ, Նավադ անուններով: Գտնվում է Մեղրի քաղաքից 30 կմ հարավ-արևելք:

Նյուվադի գյուղը 1867 թ. ընդգրկվել է Ռուսական կայսրության Կովկասի փոխարքայության Ելիզավետպոլի նահանգի կազմում: 19-րդ դարի ֆրանսիացի ճանապարհորդ Դյուպուան հիացմունքով է խոսում գյուղի այգիների, ոռոգման առուների, նռան եւ մեղրակաթ թգի, գյուղի ծորամիջյան գեղատեսիլ դիրքի մասին:

Ըստ ուսումնասիրողների՝ 19-րդ դարի երկրորդ կեսին Նյուվադիի մուսուլման բնակիչները եղել են թաթեր, որոնք տասնամյակների ընթացքում, ինչպես հազարավոր թաթեր, դարձել են ադրբեջանցի:

Գյուղը 1831 թ. ունեցել է 291, 1873 թ.՝ 705, 1886 թ.՝ 1083, 1897թ.՝ 952, 1926թ.՝ 494, 1931 թ.՝ 596, 1939 թ.՝ 618, 1959 թ.՝ 76, 1970թ.՝ 1277, 1979թ.՝ 1539, 1989 թ.՝ 1344 բնակիչ:

Բնակիչները զբաղվում էին խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ եւ մեղվաբուծությամբ: Նախկինում այստեղ տարածում ուներ շերամապահությունը: Խորհրդային ժամանակներում գյուղն ունեցել է միջնակարգ դպրոց, ակումբ, գրադարան, կենցաղասպասարկման տաղավար եւ ամբուլատորիա: Գյուղում գործել է «Հայգորգ» արտադրական միավորման մասնաճյուղը:

1988-1989թթ. Ադրբեջանում սկիզբ առած հայակական կոտորածների պատճառով ադրբեջանցիները հեռացան: 1990թ. երկրորդ կեսին այստեղ վերաբնակվեցին 100 տուն հայեր՝ մեծամասամբ Երեւանից, ԼՂՀ-ից, Սումգայիթից, Գետաշենից: 1995 թ. ապրիլի 12-ին բնակավայրը մտել է ՀՀ Սյունիքի մարզի մեջ:

Նյուվադի-Նռնաձոր բնակավայրի վարչական տարածքում առկա են եւ ՀՀ կառավարության 2005 թ. հաստատված հուշարձանների պետական ցուցակում են ընդգրկվել «Նախանյուվադիական» պատմական շրջանում գոյություն ունեցած հուշարձաններ: Այդ հուշարձանների առկայությունը վկայում է՝ մինչեւ թաթաբնակ դառնալը բնակավայրի հայաբնակ լինելու մասին:

Որ Նյուվադի-Նռնաձորն ընդգրկված է եղել Արեւիք գավառի կազմում՝ վկայում է ոչ միայն Ղեւոնդ Ալիշանը, այլ նաեւ օտարագի ճանապարհորդները: Պարզապես բնակավայրը մինչեւ 18-րդ դարն այլ անունով է հիշատակվել:

Նռնաձոր բնակավայրի վարչական տարածքում առկա է միջնադարյան պատմական միջավայրը՝ գյուղատեղիների տեսքով:

Էռնաձոր

Գտնվել է Ելիզավետպոլի նահանգի Չանգեզուրի գավառում: Հետագայում Էրնաձոր անունով ընդգրկվել է ՀՍՍՀ Մեղրու շրջանի կազմ:

Գյուղատեղին հայտնի է նաեւ Այնազոր, Էռնաձոր, Երանաձոր, Երնագիր, Եյնազուր,



Նյուվադի-Նռնաձոր բնակավայրի վարչական տարածքում առկա են եւ ՀՀ կառավարության 2005 թ. հաստատված հուշարձանների պետական ցուցակում են ընդգրկվել «Նախանյուվադիական» պատմական շրջանում գոյություն ունեցած հուշարձաններ:

Էռնաձոր, Էռնաձոր, Առնաձոր անունով: Այն գտնվում է Նյուվադի գյուղից մի քանի կմ դեպի հյուսիս-արեւելք՝ Արաքսի ավազանի Էրնաձոր գետակի ափին: Կարծիք կա, որ հայաթափված գյուղը վերաբնակեցվել է 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից հետո, երբ Պարսկահայքի Էռնա կամ Առնա գյուղի մի քանի ընտանիք տեղափոխվել եւ վերաշինել է ավերված պատմական Վաշտ գյուղը՝ Նուվադի կամ Էռնաձոր անունը:

Գյուղը 1878թ. ուներ 153, 1897թ.՝ 163, 1926թ.՝ 221, 1939թ.՝ 174, 1959-ին՝ 32 բնակիչ: 1960-ական թթ. սկզբներին լքվել է, բնակիչները տեղափոխվել են Ծվանիձոր գյուղ: Գյուղատեղիի տարածքում պահպանված են բնակելի տների ավերակները: Հստակ երեւում է, որ բնակիչներն ապահով ապրուստ են ունեցել. տների մուտքը սրբատաշ քարերով շարված կամար է, նմանապես պատուհանները եւ ներսի ինտերիերը: Տներ կան, որ անգամ երկհարկ են: Գյուղատեղին ունի հայկական գերեզմանոց, որտեղ առկա են նաեւ 19-րդ դարի մահմեդական թաղումներ:

Տարածքում դեռ կանգուն է միանավ բազիլիկ խոնարհված եկեղեցին:

Բնակիչներն ապրել են երկթաղ: Գյուղատեղին ունի կառավարության կողմից հաստատված հուշարձանի կարգավիճակ, իսկ որպես հուշարձան՝ պահպանական գոտի :

Մացրիկ՝ Եկեղեցու ձոր

Գյուղատեղի Մացրիկը համապատասխանում է Նռնաձորի վարչական տարածքում գտնվող Եկեղեցու ձոր կոչվող վայրին: Գյուղատեղին հիշատակվում է 13-րդ դա-

րում Տաթևի վանքի հին հարկացուցակում, ըստ որի վճարել է 8 միավոր հարկ: Գյուղատեղիում կանգուն է եկեղեցին: Նշմարելի է բնակատեղին՝ ավերված տներով եւ գերեզմանոց:

Այն գրանցված է Սյունիքի մարզի հուշարձանների պետական ցուցակում եւ ունի պահպանական գոտի:

* * *

Կապանից 108 եւ Մեղրի քաղաքից 30 կմ հեռավորության վրա գտնվող սահմանամերձ այս բնակավայրը վարչական տարածքով մարզի ամենախոշոր գյուղերից է: Թեեւ հայ-ադրբեջանական հակամարտության հետքերը տակավին գյուղում առ այսօր մնացել են՝ բայց բնակիչների կողմից եւ գյուղի ղեկավարի աջակցությամբ Նռնաձորը կրկին շենանում է:Այն չպետք է կրկին հայաթափվի:

Չմտած գյուղ՝ Արաքս գետին զուգահեռ ձգվում է դեպի արեւելք ասֆալտապատ ճանապարհ, որն Ադրբեջանի կողմից կառուցվել էր խորհրդային տարիներին՝ Բաքու-Մեղրի-Նախիջևան ճանապարհային կայան ապահովելու համար: Միայն Կարեն Դեմիրճյանի հեռատես թաղաքականության շնորհիվ ճանապարհի հետագա կառուցումը դադարեցվեց, քանի որ Մեղրու շրջանի ժողովրդագրական պատկերը փոխելու հեռագնա նպատակ էր հետապնդվում:

Իսկ այդ ճանապարհից դեպի ձախ՝ Եկեղեցու ձոր տարածքի եկեղեցին շարունակում է որպես ուխտատեղի ծառայել Նռնաձորցիների համար:

Մոդես-Կադնուտ. Փարաջանց անապատը

ՍԿԻՉԲԸ՝ ԷՑ 27

Ծանոթագրություններ

1. Միայն մեկ խաչքարի մոտ 1/4 կտոր կար բավական ճոխ զարդաքանդակներով, որը ներկայումս տեղափոխվել է գյուղին մոտ գտնվող Սուրբ աղբյուրի տարածք:

2. Մատենադարան, ձեռ. N4477, էջ 608բ:

3. Թահմասա Ա (1524-1576թթ.)- եղել է Սեֆյան դինաստիայի հիմնադիր շահ Իսմաիլ Ա-ի ավագ որդին եւ շահ Աբբաս Ա-ի պապը: Հենց սա է վերջ դրել Շիրվանշահերի երբեմնի հզոր պետությանը:

4. Բ. Ուլուբաբյան «Ոսկե շղթա», Երեւան-1979թ. էջ 166, «Մի առեղծվածի հետքերով» Նաեւ Նույնի «Խաչենի իշխանությունը 10-16 դարեր», Երեւան 1975թ., էջ 361:

5. Ղեւոնդ Ալիշան «Սիսական», Երեւան 2011թ., էջ275

6. 17-րդ դարի սկզբին հիմնված Սյունյաց Մեծ կամ Հարանց անապատով վերակենդանացվում է հայ ազգային գիտամշակութային կյանքը:

7. Հարանց Մեծ անապատից դուրս եկած Արիստակես վարդապետը 1620-ական թվականներին վերակառուցել է Բեխի կամ Տանձափարախի վաղ միջնադարում հիմնված անապատը, որն իր տեղանքով եւ մեկուսացվածությամբ ամբողջությամբ բավարարում էր հոգեւոր մենաստանի, անապատի եւ գրչության օջախի ծառայելու պահանջներին:

Խմբագրության կողմից

1. Կադնուտ գյուղը մատենագիտության մեջ Նշվում է նաեւ Մոդես, Մուկես, Նավրուզլու, Նովրուզլու անվանումներով: Գտնվում է Կապան քաղաքից մոտ 9 կմ հյուսիս-արեւելք, Բարգուշատի լեռնաձյուղերից մեկի լանջին՝ չորս կողմից պատած անտառներով: Հանրապետության ամենագեղատեսիլ վայրերից է:

Հնում Մոդես անվամբ, մտնում էր Սյունիքի Աճանան գավառի, հետագայում Ելիզավետպոլի նահանգի Չանգեզուրի գավառի մեջ: Կադնուտ է վերանվանվել 1949թ. ապրիլի 29-ին:

1830թ. գյուղում հաստատվել են Իրանի Ղարաղաղ գավառից եկած բավական թվով հայեր:

2. Փռոչանց գյուղը մատենագիտության մեջ հիշատակվում է նաեւ Փռոչանց, Փռոչանց անվանումներով: Մտնում էր Սյունիք աշխարհի Բաղը Սյուա գավառի մեջ: Հիշատակված է Տաթևի վանքի 1781 թ. հարկացուցակում: Նույնացվում է Հարար գյուղին, ըստ այլոց՝ Գողթանիկ գյուղին: Մատենադարանի ծեռագրերից մեկում հիշատակվում է Փռոչանց ձեւով:

3. Ֆերջան գյուղը մատենագիտության մեջ հիշատակվում է նաեւ Փառիճան, Փարիջան, Փառիջան անվանումներով: Գտնվում է Կապան քաղաքից 14 կմ հյուսիս-արեւելք, բարձրադիր, անառիկ վայրում: Նախկինում մտնում էր Ելիզավետպոլի նահանգի Չանգեզուրի գավառի մեջ:

Գյուղում եղել է եկեղեցի: Նույնացվում է Սյունիք աշխարհի Բաղը Սյուա գավառի Փռոչանց գյուղին: Ղեւոնդ Ալիշանը հիշատակում է Փառիճան տառադարձությամբ:

4. Հարար գյուղը մատենագիտության մեջ հիշատակվում է նաեւ Խարալ, Յարար անվանումներով: Չանգեզուր գավառի գյուղերից էր: Բնակիչները գաղթել են Ղարաղաղից: Գյուղի եկեղեցին կոչվում է Սուրբ Մկրտիչ: Գյուղն ունի հին, ընդարձակ գերեզմանոց՝ շքեղ տապանաքարերով: Եղել է գրչության կենտրոն, բաժանված է եղել չորս թաղի, որոնք համարվել են առանձին-առանձին գյուղեր:

Խորհրդային տարիներին գյուղը բնակեցվել է ադրբեջանցիներով եւ արիեստական անուն ստացել՝ Ջաֆարաբադ, ապա՝ Աշաղա Ֆարաջան:

ԱՂԻԲԵՉԱՆԱԿԱՆ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՏՆՎԱԾ ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ



Ջագենձորի կամ Համբադա բերդը՝ Էյվազլարի տարածքում, որի հարավային ու հարավ-արևելյան ստորոտում բազում խաչքարեր մնացին

Գյավուրի բերդը Գորիս-Կապան ավտոմայրուղու վրա՝ Քարահունջից 5-6 կմ հարավ գտնվող լեռնաշարքն է, որ սկսվում է հայտնի Ճակերից...

Ճակերը, կարծեք, բերդի յուրօրինակ դարպասն են հյուսիսային կողմից:

Մենք բարձրացանք միջնաբերդի ստորոտ, բայց գագաթ ելնել չկարողացանք: Մոտ 30-40մ բարձրության քարաբլուրը բարձրանալու համար պետք է օգտվեինք Արցախյան պատերազմի օրերին միջնաբերդի գագաթից կախված երկաթե աստիճանից, որի ամրությունը եւ հուսալիությունը կասկածի տեղիք տվեց:

Փոխարենն ուսումնասիրեցինք միջնաբերդի՝ դեռեւս պահպանված պատի հատվածները, քարանձավ-անցքերը, մերձակայքում գտնվող գերեզմանատան հետքերը, որտեղ բազմաթիվ խաչքարեր կան:

Կարելի է արձանագրել, որ միջնաբերդից դեպի հարավ-արևելք եւ դեպի հյուսիս ու արևմուտք ձգվող լեռնաբազուկները բերդի տարբեր ճյուղավորումներն են:

Իսկ Գորիս-Կապան ավտոմայրուղին, Որոտանի կիրճ մտնելիս, անցնում է հենց Գյավուրի միջնաբերդն ամրոցի հարավ-արևելյան թեկին միացնող հատվածով, որը տասնամյակներ առաջ է բացվել՝ ավտոճանապարհը կառուցելու նպատակով:

* * *


Շատ կարետոր է Գյավուրի բերդի իշխող դիրքը. այնտեղից տեսանելի են Որոտանի կիրճի մի մեծ հատվածը, Վարարակնի հովիտը, Բղենո բերդի միջնաբերդը, Բղենո Նորավանքը, Թաս լեռնանցքից արևելք գտնվող երբեմնի Մագրա գյուղի կանգուն եկեղեցին...

Գյավուրի բերդը շրջապատված է եղել հայկական բազմաթիվ գյուղերով: Դրանց նախնական անունները դեռ պետք է ճշտել: Բայց ուշ միջնադարում դրանք արդեն ունեին Նոր անուններ՝ Թափտուղաշեն, Կալեր, Խանում, Քարատակ, Մեծ կապ, Գյունեյ, Գյաուր դալա, Յագ...

Այդ գյուղատեղիներում, հատկապես Յագ գյուղատեղիում, մեծ դամբարանադաշտ է եղել՝ բացառիկ խաչքարերով, որոնք ոչնչացվել են Կուբաթլի իշխանությունների կողմից՝ տարածքի մեյիորացման հետեւանքով: Բերդի հարավ-արևելյան ճյուղավորման ստորոտում գտնվող այդ վայրը հիմա վարելահող է:

Գյավուրի բերդը, սակայն, հզոր ամրոց չի եղել սոսկ: Պարզվում է՝ այն՝ մերձակա բնակավայրերով, բազում սրբություններ է ունեցել: Դրանում համոզվեցինք, երբ ուսումնասիրեցինք բերդին մերձակա գերեզմանատների հետքերը: Հանդիպեցինք տասնյակ հրաշալի խաչքարերի, որոնք հիմա ընդգրկված են աղբեջանական Էյվազլար գյուղի տարածքում:

Դրանում ավելի համոզվեցինք, երբ



Ժամանեցինք Գյավուրի բերդի արևելյան ստորոտ՝ Վարարակնի կիրճ, որտեղ Սուրեն Հարությունյանը (Քարահունջ գյուղից) 1990-ականներից սկսած հրաշալի մի անկյուն է ստեղծել:

«Սուրիկի լիճ» անվանյալ այդ վայրում տեսանք իսկական մի քարադարան՝ բազմաթիվ խաչքարերով եւ հնագիտական տա-

րաբնույթ ցուցանմունքներով, որոնք (փրկելու նպատակով) հավաքել-բերել է բերդի մերձակայքից: Բարեբախտաբար, Գյավուրի բերդի ստորոտի այդ հատվածը՝ խաչքարերով, մնացել է Քարահունջի տարածքում, թեև սահմանամերձում: Իսկ մնացածը հայտնվել է աղբեջանական գերության մեջ...

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՏՆՎԱԾ ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ



Ուղեցի ճմեռանոցի ժայռափոր եկեղեցին՝ Սուրբ Մարիամ անվամբ, այլևս գերության մեջ է

Հին հնձորեսկից հարավ (դեպի Որոտան գետ)՝ մոտ 10 կմ հեռավորության վրա է գտնվում մի ժայռափոր եկեղեցի՝ դարերի խորքից եկող...

Վաղնջական ժամանակներից այդ տարածքը եղել է հնձորեսկի ճմեռանոցը. վայրը գյուղացիները կոչել են կոչում են Ուղեցի:

Բայց 19-րդ դարում այդտեղ բնակվեցին ազերի թուրքեր՝ վայրը կոչելով Ալիդուլիշադ, ինչի մասին վկայում է նաեւ Ղետնդ Ալիշանը:

Վերջին անգամ այդ սրբավայր այցելեցինք 2019 թ. հունիսի 23-ին:

Մեր արշավախմբի մեջ էին Սամվել Ալեքսանյանը, Գրիշա Հարությունյանը, Ժորա Ալեքսանյանը եւ Սոնա Արզումանյանը:

Ուղեցիում ականատես եղանք անձեռակերտ երկու հսկա հուշարձանախմբի:

Առաջինն Ուղեցու անկրկնելի ամրոցն էր:

Իսկ մի փոքր հարավ-արեւմուտք մեկ ուրիշ ամրոց է՝ անթիվ-անհամար քարանձավներով, որի ներքեւի մասում ժայռափոր եկեղեցին է՝ հողաշեն բեմով:

Ազերիները ժամանակին ջարդուփշուր են արել եկեղեցու եւ մերձակայքի խաչքարերը, որոնց բեկորները պահպանվում են:

Հենց եկեղեցում խորհուրդ արեցինք ու որոշեցինք անուն առաջարկել Աստուծո մոռացված այդ տաճարին:

Եվ առաջարկություն ներկայացրինք Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանին՝ ժայռափոր եկեղեցին կոչել Սուրբ Մարիամ, ով էլ բարեհաճությամբ հավանություն տվեց հավատավորներին մտահոգումին՝ խոստանալով այցելել այդ եկեղեցի ու այնտեղ (դարերի լուսավորչից հետո) պատարագ կազմակերպել ու կատարել օծման եւ անվա-



նակոչության արարողություն:

Ժայռափոր եկեղեցի այցելելուց առաջ մեր արշավախումբը եղավ (երկար որոնումներից հետո) Աղջկա բերդ (Ղզղալա, Կապույտ բերդ) պաշտպանական կառույցների (ամրոցների) համալիրում, որ դարեր շարունակ հարավ-արեւելքից անխոցելի է պահել Սյունյաց աշխարհի Հաբանդ ու Ծղուկ գավառները:

Ուղեցու ժայռափոր եկեղեցի այցելեցինք հնձորեսկ-Կուբաթի ճանապարհով, Հարա-

մի հարթավայրի վերջնամասից թեքվելով աջ ու ոչ անհայտ Թալակի ձորով իջնելով Նախ՝ Աղջկա բերդ, ապա՝ Ուղեցի:

Թալակի ձորից դեպի Ուղեցի ձգվող ճանապարհը, ինչպես պատմեց Ժորա Ալեքսանյանը, Արցախյան գոյակռվի օրերին մարտական գործողությունների թատերաբեմ է եղել:

Այդ ճանապարհին է Սանասար Բեգլարյան դուրսագլխի ջոկատը վրեժ լուծել ազերիներից այն բանի համար, որ նրանք Թալակի ձորում դաժանաբար սպանել էին մեր չորս

հովվին:

... Իսկ ձորում այդ օրն անսովոր շոգ էր, մասրենին տեղ-տեղ կարմիր էր հագել արդեն...

Ու, որքան էլ զարմանալի է, հասունացող մասրենու, վաղուց բանաստեղծականացված եւ մարդկային զգացողություններով իմաստ ու բովանդակություն ստացած մասրենու հետ զրույցի բռնվեցինք սահյանաբար:

«Պտուղը քաղող չկա,
Մասրենի, սարի մասրենի,
Պատիվը պահող չկա,
Մասրենի, բարի մասրենի:
Վսում են՝ թե՛ մարդ չկա,
Որ փնտրի քնքանքդ փշուտ,
Քեզ գրկի ու տաքանա,
Մասրենի, ժայռի մասրենի»:

Եվ, այդուհանդերձ, մասրենին մեր կողմերում չի փորձում «քաղաքակրթվել», չի աղավաղվում աշխարհի անհասկանալի անցուդարձի մեջ ու մնում է իր նախնական տեսքով՝ որպես Սյունյաց անզուգական քարափների հավերժական ուղեկից...

Սակայն մեր մտքով չէր կարող անցնել զարգացումների այն տարբերակը, որ այդ սրբավայրը երբեւէ կարող է անցնել Ադրբեջանի տիրապետության ներքո...

Բայց տեղի ունեցավ աներեակայելին. Արցախյան երրորդ պատերազմից հետո՝ 2020 թ. դեկտեմբերի 18-ին հայոց դիրքապահները Նախանջի հրաման ստացան: Ու այդ սրբավայրը նույնպես անցավ Ադրբեջանի տիրապետության ներքո...

Ափսոս... Մենք չհասցրինք քարանձավային ջընաղ այդ սրբավայրն անվանակոչել ու կատարել մեր խոստացած պատարագը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՂԻԲԵԶԱՆԱԿԱՆ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՀԱՅՏՆՎԱԾ ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ



Հին իսնծորեսկից հարավ՝ Որոտան գետի ծախ ափին է գտնվում հրաշալի մի խաչքար՝ բնական եւ հսկա քարաբեկորի վրա: Խաչքարը կառուցվել է Արցախյան առաջին պատերազմից հետո՝ մի խումբ գործուհիների կողմից:



Հուշաքար կամրջի մատույցներում հետեւյալ հիշատակագրումով՝ Մկրտչյան Արայիկ Մուրանիկի (1960-1992), Միրզոյան Մուշեղ Յուրիկի (1972-1992), Բաղդասարյան Կարեն Վազգենի (1971-1992), Մինասյան Կարեն Արծրունի (1968-1992)

Մեծ խաչքարը Լալազարի կամրջի մոտ. արդյո՞ք այն կանգուն է դեռ, թե՞...

Սյունյաց աշխարհի արեւելյան սահմանագծում՝ Հին իսնծորեսկից հարավ, Որոտան գետի ծախ ափին է գտնվում հրաշալի մի խաչքար՝ բնական եւ հսկա քարաբեկորի վրա:

Խաչքարը կառուցվել է Արցախյան առաջին պատերազմից հետո՝ մի խումբ գործուհիների կողմից:

Վերջին անգամ այդ սրբավայր այցելեցինք 2019 թ. հունիսի 15-ին:

«Սյունյաց երկիր» արշավախմբի մեջ էին Սամվել Ալեքսանյանը, Գրիշա Հարությունյանը, Ժորա Ալեքսանյանը եւ Սոնա Արզումանյանը:

Սրբավայր գնացինք Գորիսի տարածաշրջանի Որոտան գյուղից դեպի արեւելք իջնելով:

Ճանապարհին մեզ «ուղեկցում» էր Որոտան գետը՝ անպատկերացելի խորը կիրճերով ու կեռամաններով:

Եվ մենք իրենցինք Համո Սահյանի տողերով.

*Ումանք հեզմում են, ումանք ափսոսում,
Որ ես քո մասին հաճախ եմ խոսում,
Որ շատաչում եմ քո ջրերի հետ,
Հավիտյան ջահել իմ հայրենի գետ:
Հայոց բարձրաբերձ սարերից գալիս
Լույս դարձած՝ նորից սարերն ես գնում,
Դու անհիշելի դարերից գալիս,
Եվ դեպի գալիք դարերն ես գնում:
Որքան «նեղ» լինի ու որքան էլ «հին»
Ես նախանձում եմ քո ճանապարհին...*

Միջուկ խաչքարին հասնելը մեզ «ընդառաջ» եկավ 19-րդ դարի բացառիկ մի հուշարձան՝ Լալազարի կամուրջը:

Երկու կամարով այդ կամուրջը չի կորցրել իր հմայքը եւ ամուր վիճակում է, սակայն 1980-ականների վերջին ազերի վանդալների



19-րդ դարի բացառիկ հուշարձան՝ Լալազարի կամուրջը

կողմից զրկվել է արեւելահայաց պատի վրա քանդակված հայատառ արձանագրությունից, որը յուրօրինակ անձնագիրն էր հրաշալի այդ կոթողի:

Լալազարի կամուրջը հայոց ճարտարապետական մտքի փայլատակունտներից է...

Կամուրջը եւս մեկ վկայություն է առ այն, թե մեր նախնիներն ինչպիսի հոգածությամբ եւ արժանապատվությամբ են տեր կանգնել Սյունյաց տանը եւ շենացրել այն:

Իսկ կամրջի մատույցներում մենք այցի գնացինք մի համեստ հուշաքարի՝ առավել համեստ հիշատակագրումով՝ Մկրտչյան Արայիկ Մուրանիկի (1960-1992), Միրզոյան Մուշեղ Յուրիկի (1972-1992), Բաղդասարյան Կարեն Վազգենի (1971-1992), Մինասյան Կարեն Արծրունի (1968-1992):

Գործուհի այդ երիտասարդները հենց այդտեղ էին անհավասար մարտի բռնկվել ազերի հրոսակների հետ, որտեղ էլ նահատակվեցին հերոսաբար...

Այո, այդ տարածքում ամեն մի հողաթումբ քաջերի շիրիմ է, ամեն մի պտղունց հող՝ հայոց նվիրյալների արյամբ շաղախված, որը մոռանալ անկարելի է...

Եվ ահա մոտեցանք Մեծ խաչքարին...

Որոշ ժամանակ այնտեղ մնալուց եւ այդ սրբության հետ հաղորդվելուց հետո բռնեցինք հետդարձի ճանապարհը...

* * *

Հայոց նվիրյալների արյամբ սրբազորված այդ վայրը, նաեւ Մեծ խաչքարը, Լալազարի կամուրջը եւ Արցախյան հերոսամարտի մի խումբ նահատակների հիշատակը հավերժացնող հուշաքարը մնացին Ադրբեջանի տիրապետության տակ այն բանից հետո, երբ 2020 թ. դեկտեմբերի 18-ին հայոց դիրքապահները (վերին կարգադրությամբ) նահանջեցին մեխանիկորեն հորինված հայադրեջանական սահմանից այսկողով:

...Արդյո՞ք Մեծ խաչքարը կանգուն է դեռ, թե՞...

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՏՆՎԱԾ ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ

Խոզնավար գյուղի Շոնաղ դաշտավայրի խաչքարերը՝ Ադրբեջանի տիրապետության ներքո, իսկ հազարամյա վիշապաքարը՝ սահմանի վրա



ամուսնոյն՝ **Նաներին**, եւ **Նաների** եղբար **Սարգսին**, Աստուած իւր վարձն հատուցաւ եւ աստ եւ անդ, որ կամակից եղեւ գրելոյ սք. Աւետարանիս, զոր ունէին առ II iii իմ անընդունակ գոլով յարուեստս գրչութեան, այլ ըստ կարի մերում, զոր պարգեւեաց Հոգին Սուրբ առ մեզ մա [ր] դասեր Հոգին, յանձն առի եւ բազում աշխատութեամբ եւ տառապանօք գծագրեցի զսա մեղսամած մատամբ իմով, ի յաստուածաբնակ եւ յանառիկ դղեակս Քաշթաղ, ի գ [ե] օղն խզնավար, ընդ Հովանեաւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի Հայոց վերադիտողի, ի թվաբերութեանս Հայոց ՌՃԱ (1652):

Եւ արդ՝ յերես անկեալ աղաչեմք զսրբութիւնդ ձեր սք. ընթերցողք, հարց եւ եղբարք, յիշեցեք զմեղաւոր գողո սորա եւ զծնօղս եւ եղբարքն:

Դարձեալ [յիշեցեք] **Չաքարէն**, կողակիցն՝ **Նաներն**, եղբայրն՝ **Թամուրն**, ամուսինն՝ **Շարբաթն**, միւս եղբայրն՝ **Խաչատուրն**, ամուսինն Գուլխաթունն յիշեցեք ի Քրիստոս...:

Ստացող՝ Չաքարէ

Եւ արդ՝ ես Չաքարէս ստացայ սք. Աւետարանս ի հալալ եւ յարդար վաստակոց իմոց, յիշատակ II ծնաւդաց իմոց, որք ընթերցուն ի ժամ սք. եւ տոսկալի պատարագին, եւ թողութիւն հայցեն մեղացն հաւրն իմոյ՝ **Իփակին**, մարն իմոյ՝ Հռոմմին, ամուսինն իմ՝ Նաներին, եղբօրն՝ տանուտեր **Սարգսին**, եւ իմ եղբօրն՝ **Թամուրին**, **Խանուսին**, կողակցին իւրոյ՝ Շարբաթին, հարազատ որդին՝ Վարդանանին, ամուսինն՝ Խանուսին, միւս որդին՝ Գրիգորին, ամուսինն՝ Մարիամին, Թամուրի դստերն՝ Շնատրին, Սանդուխտին, Խանուսին, Ղումաշ [ին] III [հանգուցե] լոցն ամենայնի, ամեն:

Դարձեալ յիշեցեք զք [ա] ռեմիտ Չաքարէն եւ հիւրընկալ կին [ն] իւր՝ Նաներ III եղբայրն Խաչատուրն, հայրն՝ Ղուլխաթուն եւ մայրն իւր՝ Հուրիխանն, յիշեցեք ի Քրիստոս:

Տարակարծություն կա գյուղի կենտրոնում գտնվող եկեղեցու անվան շուրջ: Մատենագիտության մեջ այն անվանվում է Սուրբ Ստեփանոս Նախավկա: Պատմական հուշարձանների ցանկում եկեղեցին նշված է Սուրբ Միհայր անվամբ:

Գյուղացիների համար էլ, կարծեք, գործածական է վերջին տարբերակը: Ղեւնդ Ալիշանի վկայությամբ (Սիսական)՝ գյուղի եկեղեցին Սուրբ Ստեփանոս Նախավկա է կոչվել, իսկ հետագայում անվանել են Սուրբ Միհայր:

Եկեղեցու կառուցման ստույգ տարեթիվը հայտնի չէ, բայց հիմքեր կան ենթադրելու, որ 1212-ին Աստոծ այդ տաճարն արդեն կար:

Եկեղեցին վերջին անգամ վերաշինվել վերակառուցվել է 1675-ին: Պատմում են, թե եկեղեցին վնասվել է 1931 թվականի, ապա 1968-ի հայտնի երկրաշարժների հետեւանքով: Եկեղեցու քարերի մի մասը, գերեզմանաքարերը (այդ երկրաշարժների հետեւանքով) թափվել են ցած:

Պատի մեջ մնացել է ավազանը՝ «Մելիք Էրիզ յիշեցեք ի ՔԱ»: Սա, անշուշտ, Մելիք Հայկազն 2-րդն է:

Արձանագրության մեջ նշմարե-



Խոզնավարը Գորիսի տարածաշրջանի հյուսիսարեւելյան կողմի ամենահեռու գյուղն է:

Մատենագիտության մեջ նշվում է Նանե Խազնավար, Խանձաբերդ, Խզնավար, Խոզանավար, Խոզանվար, Խոզնավոր, Խոնգավար...

Ամուսն ունի ժողովրդական ստուգաբանություն, հավանաբար ծագել է խոզան եւ վար բառերից: 1490 թ. մի հիշատակարանում նշվում է որպէս Սյունիքի Աղախեջի մաս կազմող Քաշթաղ գավառի գյուղերից մեկը:

Ըստ Նոր հարկացուցակի՝ Տաթևի վանքին տալիս էր 4400 դահեկան պտղի հարկ:

Գյուղի միջով է հոսում Խոզնավար գետակը՝ Հազարի գետի աջակողմյան վտակ Չաքուխ գետի աջ օժանդակը, որ սկիզբ է առնում Սեւ լճի մերձակայքից:

Քաշթաղ «հայաբուն գավառում» ժամանակին 43 հայկական գյուղ կար: Հետագայում մոտ 200-250 տարի առաջ, այդ գյուղերի մի մասը դատարկվեց կամ բնակեցվեց Դիարբեքի կողմերից բերված քրդական

ցեղերով:

1813 թ. ընդամենը 6 տուն էր մնացել Խոզնավար գյուղում՝ 78 բնակչով: Այս գյուղ եւս, Ռուսաստանին միանալուց հետո, բազմաթիվ հայ ընտանիքներ եկան՝ ապահովություն գտնելու: Գյուղը փորձության է ենթարկվել 1905, 1913 եւ 1918 թվականներին:

Խոզնավար գետակի ափին, բոլոր կողմերից լեռներով պատած գեղատեսիլ վայրում գտնվող գյուղը, որի մերձակայքում կան բազմաթիվ ձորեր, հողմահարված ժայռասյուներ, գրչության կենտրոն է եղել:

«Ցուցակ ձեռագրացում» Խոզնավարը հիշատակվում է որպէս գրչության կենտրոն:

1490-ին այդտեղ ընդօրինակվել է մի Ավետարան, որով Եղիա անունով գրիչը խնդրում է հիշել իր վաղամեռիկ կնոջը՝ Կյուլփաշին:

Նրա դուստրը եւս՝ Շահգադեն, սովորել է գրչության արվեստը: Եղիայի հայրը՝ Շապան, Նույնպէս գրիչ է եղել:

Գյուղի եկեղեցում դարեր շարունակ

պահպանվել են հնագույն ձեռագրեր:

1913-ին, երբ թուրքերը ժամանակավորապէս գրավեցին գյուղը, վառեցին եկեղեցում պահվող 200-ից ավելի ձեռագիր (այս փաստը վկայակոչում է Սերո Խանզադյանը):

Ստորեւ՝ 1652-ին Խոզնավարում գրված մի Ավետարան, որի հեղինակն է գրիչ՝ Միքայել սարկավազը:

Փառք...

Չոր եւ տեսեալ զստայնս անճառ փրկագործութեան խորհուրդ սրբասէր եւ մաքուր եւ բարեգործ այրն **Չաքարայ** եւ բարեհոգի եւ առատամիտ ամուսինն իւր՝ **Նաներն**, ոչ ունելով իւրեանց զաւակ մարմնաւոր եւ կամ յիշատակ ի վերայ երկրի, այլ ի միտ առան զբանն Աւետարանին որ ասէ. «Գանձեցեք ձեզ գանձ յերկինս, ուր ոչ գող մերծենայ...»:

Եւ արդ՝ ես յետինս ի կրանաւորաց եւ անարժանս ի կրանաւորաց մանկանց եկեղեցոյ՝ Միքայել սարկաւազս, տեսի զսէր եւ զփափագ առատամիտ **Չաքարին** եւ

Սուրբ Ստեփանոս Նախավկա կամ Սուրբ Միհայր եկեղեցու ավերակները



ԱՂԻԲԵԶԱՆԱԿԱՆ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՀԱՅՏՆՎԱԾ ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ

Շ լի է Նաեւ Ցողունի անունը... Հավա-
նաբար մոտակայքում Նույնանուն
գյուղն է եղել, որի մասին հիշատա-
կում է Ստեփանոս Օրբելյան պատմիչը:
* * *

Գյուղի տարածքում եղել է Նաեւ Սուրբ
Հռիփսիմե անունով եկեղեցի: Գյուղամիջի
այդ եկեղեցին 1935-ին հիմնովին քանդել են,
որի տեղում էլ կառուցվել է դպրոցը:

Դպրոցն այդ շենքում գործել է 1953-ից
մինչեւ 2009 թ.: Այն հիմա ծառայում է որպես
բնակելի շենք:

Գյուղի դպրոցի ուսմասվար Հարություն
Անդրյանի վկայությամբ՝ շենքի պատերի մեջ
(որտեղ պատի ծեփը քանդվել է), խաչքարեր
են երեւում: Ամենայն հավանականությամբ՝
դպրոցական այդ շենքը կառուցվել է հենց
եկեղեցու քարերով:

* * *

Գյուղից մոտ 2 կմ արեւմուտք՝ սարա-
վանդի վրա, կա մի գյուղատեղի, որ կոչվում
է Խաչեր:

Ինչպես գյուղի տարեցներն են պատմել,
բազմաթիվ շինությունների մնացորդներ եւ
հնություններ ժամանակին անցել են գետնի
տակ: Պահպանվում են գերեզմանների հետ-
քեր, Նաեւ՝ խաչքարեր:

Արամ Բաղդասարյանի վկայությամբ՝
տասնամյակներ շարունակ այդ վայրից են
խոզնավարացիները մեկնել բանակային ծա-
ռայության:

Այսօր էլ երկու չքնաղ խաչքարի եւ հին
մոմակալի մոտ (շաբաթ եւ կիրակի օրերին)
կարելի է տեսնել հավատավոր խոզնավար-
ցիների: Ի դեպ, 5 մ երկարությամբ երկաթյա
մի խաչ էլ Արամ Բաղդասարյանն է տեղադ-
րել այդտեղ:

* * *

Գյուղի գերեզմանատնից դեպի հյուսիս-
արեւելք՝ Հաջիվար գյուղ գնացող ճանապար-
հին գտնվող մի բլրի վրա է (գերեզմանատ-
նից մոտ 1 կմ հեռու) գտնվում Սուրբ Ծառ
ուխտավայրը:

Դարավոր, հաստաբուն կաղնու տակ
խաչքար եւ կրակարան կա: Մինչեւ հիմա էլ
խոզնավարացիներն ակնածանքով են վերա-
բերվում այդ սրբավայրին:

* * *

Սյունիքի շուրջ ստեղծված ռազմաքա-
ղաքական խոր իրավիճակում ռիսկային
են դարձել խոզնավար գյուղի սրբավայրեր
ուխտագնացություն կատարելը, իսկ որոշ
սրբավայրերի ճակատագիրը վտանգված
է: Մասնավորապես, վտանգված է Շռնաղի
խաչքարերի ճակատագիրը:

Գյուղից մոտ 3-4 կմ հեռավորության
վրա է գտնվում Ծիծեռնավանքը: Ծիծեռնա-
վանք տանող ճանապարհներից մեկը (բո-
լոր ճանապարհները ոչ մեքենահարմար են)
ծգվում է ծորամիջոցով՝ խոզնավար գետի
հունին զուգահեռ:

Գյուղից մոտ 2 կմ հեռավորության վրա
(Ծիծեռնավանք տանող ճանապարհին) է
գտնվում Խանքային ջրերի Շռնաղ աղբյուրը:
Այդտեղ պահպանվում են հին ժամա-
նակներում ստացված խաչքարեր:

Գյուղի միջնակարգ դպրոցի ուսմա-
վար Հարություն Անդրյանի փոխանցմամբ,
ինչպես գյուղի տարեցներն են ժամանա-
կին պատմել, Շռնաղի մերձակայքում Նաեւ
գյուղատեղի է եղել, որն առավել ակնհայտ է
դարձել 1960-70-ականներին այնտեղ հողա-
յին աշխատանքներ կատարելիս:

Ըստ խոզնավարացիների՝ խորհրդա-
յին ժամանակներում այդ վայրը մտնում էր
խոզնավարի տարածքի մեջ, իսկ հիմա ադր-
բեջանցիներն իրենց են համարում հիմք
ընդունելով GPS-ով կատարված մեխանիկա-
կան սահմանորոշումը: Եվ մերձակայքում
կազմակերպված ադրբեջանական հենակե-
տերն այլեւ անհնար են դարձրել հավատա-
վորների այցը Շռնաղի խաչքարերից կազմ-
ված սրբավայր:

Իսկ հազարամյա վիշապաքարը հայտն-
վել է սահմանի վրա, որի ճակատագիրը
Նույնպես անորոշ է:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵԶԱՆՅԱՆ

Մագրա գյուղի Սուրբ Հռիփսիմե եկեղեցին՝ Ադրբեջանի տիրապետության ներքո

Գ որիս-Կապան ավտոմայրուղին անց-
նում է Թասի լեռնանցքով...

43 ոլորան ունեցող այդ գաղիվե-
րի գրեթե վերջնամասում մի հարթություն
կա, այդտեղ է գտնվել հայկական Թաս գյու-
ղը:

Այդ գյուղի անվամբ էլ կոչվում է լեռնանց-
քը՝ Թասի լեռնանցք:

Տարածքում կան անարձանագիր գերեզ-
մանաքարեր:

Ըստ ավանդազրույցի՝ Թասի բնակիչնե-
րը գյուղը լքել են այնտեղ շատ օձեր լինելու
պատճառով:

Լեռնանցքի վերջին ոլորանից անմիջա-
պես հետո՝ ավտոմայրուղուց դաշտային ճա-
նապարհ է ձգվում դեպի արեւելք: Եվ մոտ 2
կմ ճանապարհ անցնելուց հետո հայտնվում
ենք Մագրա գյուղի ավերակներում (չփորձել
Սիսիանի եւ Կապանի տարածաշրջանների
համանուն գյուղերի հետ):

Ավերակված գյուղի կենտրոնում բար-
ձունքի վրա, Սուրբ Հռիփսիմե եկեղեցին է՝
կառուցված (ըստ բանավոր զրույցների) 17-
րդ դարում:

Ըստ 1781 թ. հարկացուցակի՝ հայկական
այդ գյուղը Տաթևի վանքին տալիս էր 1600
դահեկան պտղի հարկ:

Գյուղը 19-րդ դարավերջին բնակեցվել է
թուրք-ազերիներով:

1920-ականներին Հայաստան-Ադրբե-
ջան սահմանների վերածեման հետեւան-
քով գյուղը հայտնվել է Ադրբեջանի Կուբաթ-
լի շրջանի եւ Գորիսի շրջանի վարչական
սահմանի վրա:

Արցախյան առաջին պատերազմի տա-
րիներին գյուղն ազատագրվել է:

Սուրբ Հռիփսիմեն կանգուն է: Սակայն
ավերված է եկեղեցու բեմը, ջարդված են
մերձակայքում գտնվող խաչքարերը:

Թե ինչպես Սյունիքի շուրջ ստեղծվեց ռազմաքաղաքական նոր իրավիճակ

ՍԿԻՉԲԸ՝ ԷՅ 6

Меморандум

об организации

безопасного

движения граждан,

транспортных

средств и грузов

по автомобильным

дорогам Горис -

Давид-Бек и Кафан -

Чакатен

В о исполнение пункта 9 Заявления
Президента Азербайджанской
Республики, Премьер-министра
республики Армения и Президента
Российской Федерации от 9 ноября 2020 г.
с целью обеспечения безопасного дви-
жения по дорогам: Горис - Давид-Бек и
Кафан - Чакатен стороны договорились о
следующем:

1. Армянская сторона 18 декабря
2020 г. выводит свои вооруженные
формирования с территории

- Зангеланского и Кубатлинского
районов Азербайджанкой Республики.
2. Одновременно с этим, в целях обес-
печения безопасного передвижения
лиц, транспортных средств и грузов на
участках автомобильных дорог: Горис
- Давид-Бек от точки с координатами:
39°26'34.577" - северной широты,
46°23'42.646" - восточной долготы, до
точки с координатами: 39°19'56.032"
- северной широты, 46°28'03.157"
- восточной долготы, и Кафан -
Чакатен до точки с координатами:
39°12'28" - северной широты,
46°24'18" - восточной долготы до
точки с координатами: 39°08'54.603"
- северной широты, 46°26'33,747"
- восточной долготы Пограничные
войска Службы национальной безо-
пасности Республики Армения, на ар-
мянской территории, Госсударственная
пограничная служба Азербайджанской
Республики на азербайджанской
территории на удалении от дорог,
обеспечивающем визуальное и тех-
ническое наблюдение, выставляют
пограничные наряды.
3. Армянская и азербайджанские стороны
гарантируют безопасность движения
лиц, транспортных средств и грузов
по указанным дорогам, а в пределах
от дорог до мест расположения
пограничных нарядов отсутствие иных
вооруженных формирований сторон,
безопасность местного населения и по-
граничной инфраструктуры и на своих

- территориях.
4. Пограничные органы Федеральной
службы безопасности Российской
Федерации обеспечивают контроль
на дорогах за перемещением лиц,
транспортных средств и грузов
осуществляют обмен актуальной
информацией и доведение до сто-
рон необходимых требований с
целью соблюдения достигнутых
договоренностей.
5. Азербайджанская сторона гарантирует
безопасное передвижение лиц,
транспортных средств и грузов
Армении по автомобильной дороге:
Горис - Давид-Бек и реализует
свое право по использованию
данного участка дороги от точки
с координатами 39°26'34.577" -
северной широты, 46°23'42.646"
- восточной долготы, до точки с
координатами: 39°19'56.032" -
северной широты, 46°28'03.157"
- восточной долготы после
предварительного информирования.
6. Срок действия данного меморандума -
5 лет с автоматическим продлением на
очередные 5-летние периоды, если ни
одна из Сторон не заявит за 6 месяцев
до истечения срока о намерении
прекратить применение данного
положения.

Примечание:
армянская сторона заменила слово
«Кафан» на «Капан»



...Հիմա Թասի լեռնանցքի գագաթին ՌԴ
սահմանապահ զորքերի հենակետն է:
Իսկ լեռնանցքի վերջին ոլորանից անմի-
ջապես հետո՝ դեպի արեւելք, ինչպես Նշե-
ցինք, մի ճանապարհ է ձգվում... Դա Մագրա
գյուղ տանող ճանապարհն է:

Այդ խաչմերուկում գրեթե ամեն օր կարե-
լի է տեսնել ազերի զինվորների, թեւեւ նրանց
հենակետը խորքում է, ու նրանք այդ խաչմե-
րուկում գտնվելու իրավունք չունեն:

Հիմա միայն հեռվից կարող ենք նայել
Սուրբ Հռիփսիմե եկեղեցուն, որը գերության
մեջ է եւ անընդհատ մեզ է կանչում...

Հ.Գ. Վերջին անգամ Մագրա գյուղի Սուրբ

“ Հիմա միայն հեռ-
վից կարող ենք նայել
Սուրբ Հռիփսիմե եկե-
ղեցուն, որը գերույթ-
յան մեջ է եւ անընդ-
հատ մեզ է կանչում...

Հռիփսիմե եկեղեցուն եղանք 2020 թ. դեկ-
տեմբերի 18-ից առաջ, երբ դեռ հայ դիրքա-
պահներին սահմանից չսահանջելու հրա-
հանգ չէին տվել:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵԶԱՆՅԱՆ

ԱԴԻԲԵԶԱՆԱԿԱՆ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՀԱՅՏՆՎԱԾ ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ



Սյունյաց աշխարհի Աղահեջ կամ Քաշաթաղ գավառի գլխավոր սրբավայր Ծիծեռնավանքը՝ նորից աղոթքի ու պատարագի կարոտ

ՎՊարերի այդ վանքը գտնվում է Գորիսի շրջանի հսկայական գյուղից արեւելք։ Ստեփանոս Օրբելյանը Ծիծեռնավանքը դասում է Սյունյաց նշանավոր վանքերի շարքը։ Նախկին մեծ համալիրից պահպանվել են եկեղեցին (սրբատաշ բազալիտից), պարսպի եւ այլ շինությունների մնացորդներ։ Եկեղեցու շենքն ուղղանկյուն հատակագծով (մոտ՝ 25,5մ X 12մ) բազիլիկ է՝ չորս զույգ մույթերի երկու շարքով մասնատված երեք թաղածածկ նավերի։ Գլխավոր, ավելի լայն եւ բարձր նավը արվից վերջափակվելով պայտածե խորանով (լուսամուտ չունի), արտաքուստ արտահայտված է երկլանջ ծածկ ունեցող ծավալով, որը երկայնական պատերին ունի բացվածքներ, իսկ արմից եւ արվից՝ զույգ լուսամուտ։ Կողային նավերը վերջափակվում են սենյակներով, լուսավորվում արմից մեկական, պայտածե կամարավարտ բացվածքից եւ երկայնական պատերի լուսամուտներից։ Ծածկերի թաղերը երկկենտրոն են (սլաքային)։ Նախկինում ունեցած երեք մուտքերից միայն մեկը (իվից) շարված չէ։ Խոյակներն ատամնաշար են, ոճով՝ արխաիկ։ Մույթերից մեկի վրա կա օծերի բարձրաքանդակ։ Հուշարձանի կարելուր առանձնահատկություններից է խորանի զմբթարդից վեր կառուցված երկրորդ հարկը, որն աղոթասրահին հաղորդակից է երեք կամարավարտ բացվածքներով (տրիբեյլն)։ Կառույցի արտաքին եւ ներքին պատերից, ճարտ. եւ կառուցվածքային տարրերից երեւում են տարբեր ժամանակներում կատարված վերանորոգումներն ու ձեւափոխումները։ Եկեղեցու ստորին մասը հավանաբար IV դարից հին է։

ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՄ, ՀԱՏՈՐ 5, ԷԶ 126

* * *

Ծիծեռնավանքի մասին բազում ավան-



դագրույցներից մեկը ներկայացնում է Երվանդ Լալայանը «Ազգագրական Հանդեսում» (1898-N2)։ Սիւս ավանդագրույցը. «Հոչաս գիւղի մէջից Թումանը շարունակ նեղացնելիս է եղել Նոյն գիւղի քահանային, այնպէս որ վերջինս, նրանից ազատուելու համար՝ մի անեծքաթուղթ է գրել գցել նրա սենեակը ու ինքը փախել, գլուխն ազատել։ Անեծքաթղթի զօրութեամբ, մեկը շուտով կորցրել է որդիները, կինը եւ ամբողջ հարստութիւնը։ Վերջապէս հասկանալով, որ այդ բոլոր թշուառութիւնները քահանայի անեծքից են առաջացել, գնում է նրան որոնելու, որպէս զի թողութիւն ինդրէ։ Անցնում է շատ քաղաքներ, գալիս հասնում Հռոմ, որտեղ իմանում է, որ քահանան վախճանուել է։ Յուսահատուած մնում է նա Հռոմի մի վանքում իբր լուսարար եւ միշտ աղօթում իւր հոգու փրկութեան համար։ Երեք տարուայ

Հ.Գ. Մայրաքաղաքի մի խումբ երիտասարդներ իրենց նախաձեռնությամբ (2020 թ. դեկտեմբերի 1-ի նախօրեին) հասել էին Ծիծեռնավանք՝ հավաքել ամբողջ գույքը՝ ջահեր, դռներ, մոմակալներ, սրբապատկերներ, գորգեր եւ, իհարկե, խաչքարեր ու տեղափոխել Գորիսի Սուրբ Հռիփսիմէ եկեղեցու տարածք։

Խաչքարերի մի մասը փոխադրվել է Գորիսի «Միրիադ» հյուրանոցի բակ, իսկ որոշները՝ Երեւան՝ Մատենադարանի մերձակայքում այդ նպատակով առանձնացված տարածք։

Մինչ 2020 թ. դեկտեմբերի 1-ը Ծիծեռնավանքից տեղափոխվել են նաեւ որոշ որմնանկարներ, ինչի մասին տեղեկացրեց Մայր աթոռի գլխավոր ճարտարապետ Արա Վարդանյանը։

Ծիծեռնավանքում, ցավոք, մնացել են որոշ որմնանկարներ։

- Դրանք 7-րդ դարի որմնանկարներ են, որոնց վիճակը շատ անմխիթար էր եւ դրանք հանելը հնարավոր չէր՝ առանց մշակելու, որի համար արդեն ժամանակ չունեինք։ Այդ որմնանկարները լուսանկարվել են, փաստագրվել, հաստատվել է դրանց գոյությունը։ Եթե ոչնչացվեն՝ փաստեր կունենանք միջազգային աստիճաններում բարձրաձայնելու համար, - ասաց Արա Վարդանյանը։

Սյունյաց երկիր մշակութային

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆՓԱԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ։ ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2021Թ. ՄԱՐՏԻ 30-ԻՑ։ Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ծախումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում։ Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել։ Լրագրերը ներկայացնել մեքենագիր վիճակում։

www.syuniacyerkir.am

Հղումը «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականին պարտադիր է։ Հրատարակվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ։

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում։ Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2։

Ծավալը՝ 9 տպագրական մամուլ։ Տպագրականը՝ 800, գինը՝ 100 դրամ։ Ստորագրված է տպագրության 29.03.2021թ.։